

891. 9944

458



ՀԱՆԴԵՍ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

№ 4

ԺԲ

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

Փ Ա Ր Ի Ջ

1935

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՍԱՄՍՈՆ — Դեպքերը Հայ-պարսկական սահմանի վրա	1
Յ. ԶԱԻՐԵԱՆ — Պարսկաստանի Յեզափոխությունը եւ Մելիոն համը	14
Շ. ՆԱՐԴՈՒՆԻ — Նպաստ մը հայ եւ թուրք աշուղ. գրական. համեմատակ. ուսումնասիրության (3.)	30
Փ. Փ. ՓԱՆԱԹԵՍՎՈՒ — Ալեքսանդրու Զէլ Պուրի հրամանագիրը	37
Վ. ՓԱՓԱԶԵԱՆ — Համաշխարհային պատերազմը եւ Տարոնի աշխարհը (2)	47
Վ. ՄԻՆԱՍՈՐԵԱՆ — Արհաւիրքի օրեր (2)	72
ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ — Նիւթեր Շիրվանգադէի մասին	89
ԱՆՅԵԱԼԻ — Կոմիտաս, ԲԺ. Յ. Տէր-Միքայէլեան, Ա. Բ. Խնկոյեան Յ. Խանգատեան, Դ. Յ. Էրկանեան	100
ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ	108
ԳԻՐԳ ԵՒ ՄԱՄՈՒԼ	112
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ — Ն. Աղբալեան, Սվ. Ն. Բաղալեան	114
ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ՇԵՄՔԻՆ — Խմբ.	124
ՅԱԽԵԼԻԱՍ — Վ. Եպ. Մանկունի, Գեորգ Դ. եւ իր ժամանակը	177-192

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամերիկա, Բրիտ. Կայսրություն, Եգիպտոս, Իտալիա՝

Ֆրանսա եւ մնացեալ երկիրները, տարեկան 70 ֆրանք
Ռումանիա, Բուլղարիա, Յունաստան Սիրիա, եւ տարեկան՝ 60 ֆրանք
Պարսկաստան՝ 50 ֆրանք

ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ԻՐԱՔԱՆԶԻՐ ՏԱՐԻՈՅ Ե ԳԻՐԲԸ՝ 25 ֆր.


Հասցէ՝ Գամակների, դրամի, յողաձների եւ ուրիշ ամէն
տեսակ առաքումների համար. —

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)

Gérant: V. Hampartzoumian

03.05.2013

3-Շ ԵՐԵՎԱՆ



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ
ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Խմբագիր՝ Ս. ՎՐԱՏԵԱՆ

Դ. ՏԱՐԻ, ԹԻԻ 4 1935 ՍԵՊՏԵՄԲԵՐ — ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՍԱՄՍՈՆ

Դեպքերը Հայ - Պարսկական
Սահմանի վրա

Ատրպատականը Իրանի այն նահանգն է, ուր ամենից առաջ
լուռ է զրել հայ յեղափոխական շարժումը, ուր երկար տարիներ ե-
տուն աշխատանք է կատարուել, իբրեւ միջնորդ վասպուրականի եւ
Կովկասի միջև: Նա մի կարեւոր կայան էր հայ յեղափոխականնե-
րի համար: Ոչ պակաս կարեւոր արժէք էր ներկայացնում նա նորա-
ծին Հայաստանի Հանրապետութեան համար:

Հայաստանը՝ չըջատուած անբարեացակամ կամ թշնամի
տարրերով, սեղմած նեղ պատեանում, տնտեսական աննպաստ
պայմանների մէջ՝ կենսական պէտք էր զգում կապուել արտաքին
աշխարհի հետ: Ուստի եւ չէր կարող անտարբեր լինել դէպի Պարս-
կաստան՝ միակ հարեւան երկիրը, որի հետ որ եւ է վէճ կամ անհա-
մաձայնութիւն չունէր: Ակներեւ էր, որ հայ-պարսկական յարաբե-
րութիւնները պիտի դառնային ջերմ ու բարեկամական, եւ Պարս-
կաստանը, մանաւանդ, դրացի Ատրպատականը պիտի լինէր կարեւոր
ազդակ Հայաստանի պետական շինարարութեան գործում: Այս հան-
գամանքը հասկանում էին թէ՛ հայ եւ թէ՛ պարսիկ քաղաքական գոր-
ծիչները:



506-2001

Հասկանում էին, ի հարկէ, եւ թուրքերը եւ ջանք չէին խնայում խանդարել հայ-պարսկական փոխյարաբերութիւնները:

Այս տեսակէտից առաջնակարգ նշանակութիւն ունէր Երեւան-Թաւրիզ երկաթուղին, որ անցում էր Շարուր-Նախիջևանի թըրքաբնակ շրջաններով: Հայերի եւ պարսիկների համար կենսական էր, որ այդ երկաթուղին բաց մնայ. թուրքերն, ընդհակառակը, ձգտում էին կտրել հաղորդակցութիւնը: Եւ յենեկով ազդեցւած էին գործակալների եւ տեղական իսլամ ազգաբնակչութեան վրա՝ նրանց յաջողեց փակել Երեւան-Թաւրիզ ճանապարհը: Շարուր — Նախիջևան — Օրդուբադ գիծը անցաւ թիւրքերի ձեռքը. այդ ճանապարհով յարաբերութիւն էր պահւում Ադրէջանի եւ Թիւրքիայի միջեւ: Տաճիկների գեղատաքութեան կենդրոնը Բալադէն էր: Նրանց հետ համերաշխ գործում էին Նախիջևանի խաները, որոնց աջակցում էր նրանց ազգական Մակուի խան Սարգար-Իդրայր-Սալթանէն: Այսպիսով, Հայաստանի Հանրապետութեան դէմ տեղեւած էր թիւրք-մակու-նախիջևան-ադրէջանեան ընդհանուր ճակատ:

Բնականաբար, Հայաստանի կառավարութիւնը անտարբեր չէր դէպի այդ փառքը: Նա աշխատում էր զինուորական զորութեամբ ճնշել հակադատական շարժումները, հաստատել Շարուր-Նախիջևանում կարգ ու խաղաղութիւն եւ ապահովել երկաթուղային կապը Պարսկաստանի հետ: Իրրեւ հետեւանք հայկական կառավարութեան ձեռք առած ուղղական միջոցների, Շարուրի եւ Նախիջևանի մահմեդական բնակչութիւնը թողնում-հեռանում էր Արաքսի միւս կողմը եւ հեռագրական բողոքներ ու դիմումներ ուղղում Թաւրիզ, թագաժառանգի անունով: Միաժամանակ Թաւրիզ էին հասնում յատուկ պատգամաւորութիւններ, որոնք առաջադրական պատմութիւններ էին անում, իբր թէ հայերի գործած բարբարոսութիւնների մասին: Այդ առաջադրւած ոյժ էին տալիս եւ Մակուի Սարգարն ու թիւրք եւ ադրէջանեան գործակալները: Եւ բնական է, որ պարսիկ կառավարութիւնը չէր կարող անուշադրութեան մասնել իրեն եղած դիմումները: 1918 թ. Նոյեմբերի վերջերին, արտաքին գործոց նախարարութեան Թաւրիզի ներկայացուցչի հրաւերով տեսակցութիւն է տեղի ունենում Ատրպատականի Հայոց առաջնորդ Ներսէս Արքեպ. Մելիք-Թանդեանի եւ նահանգապետ Մուքառամ - Ուլ - Մուլքի միջեւ, ուր նահանգապետն յայտնում է թէ Նախիջևանից ու Շարուրից աւելի քան միայն հազար մահմեդականներ հայկական զօրքերի ճնշման տակ, սարսափահար փախչում են դէպի Պարսկաստան եւ թէ այդ առթիւ թագաժառանգը հեռագրով խոր-

հրդակցութիւն է ունեցել Շահի հետ: Նահանգապետը մտերմօրէն հաղորդում է նաեւ, թէ անդլիացիները խորհուրդ են տւել Շարուր-Նախիջևանին շրջանի թուրք ազգաբնակչութեան զինաթափ չլինել ու տեղի չտալ հայերի առջեւ, այլ սպասել հաշտութեան վեհաժողովի վճռին: Նահանգապետը աւելացնում է, որ թագաժառանգի ու Թահիրանի կառավարութեան տեսակէտն էլ նոյնն է: *

Սրբազանը պատասխանում է նահանգապետին, թէ ստացւած բողոքները ճշմարտութիւնից զուրկ են կամ չափազանցում են: Իրականութիւնը այն է, որ Նախիջևանցիներն իրենք են կոտորել շրջանի հայութիւնը եւ աւերակ դարձրել հայկական գիւղերը: Բողոքողներն իրենք են թշնամարար տրամադրւած դէպի Հայաստանի կառավարութիւնը, իրենք են դաւեր լարում Հայաստանի դէմ, իրենք են կարել երկաթուղային հաղորդակցութիւնը: Սրբազանը մանրամասնօրէն պարզում է թիւրք-ադրէջանեան դաւերը, բողոքում է Մակուի Սարգարի բռնած դէրքի դէմ եւ հաւատարացնում է Հայաստանի կառավարութեան բարեկամական զբաղումների մասին դէպի Պարսկաստանի ժողովուրդն ու կառավարութիւնը:

Այս Սրբազանը նահանգապետի ընկերակցութեամբ տեսակցութիւն է ունենում թագաժառանգի հետ, եւ այս վերջինս յայտնում է, թէ ինքը որոշել է Հայաստան ուղարկել մի պատւիրակութիւն՝ յայտնելու համար Պարսկաստանի բարեկամական զբաղմունքները Հայաստանի կառավարութեան եւ կարգադրելու երկու երկիրներու միջեւ առկա մնացած քաղաքական եւ քաղաքացիական խնդիրները: Թագաժառանգը առաջարկում է պատւիրակութեան միացնել եւ առաջնորդի ներկայացուցչին:

Շուտով թագաժառանգի կողմից նշանակւում է Հայաստան մեկնելիք պատւիրակութեան կազմը - Մարանդի դաւառապետ Վրտուղը-Մամալիքը, Մակուի Սարգարի ազգական Հաջի-Խանը, առաջնորդի ներկայացուցիչ Կարապետ աւագ քահանայ Մանուկեանը եւ ուրիշներ: Աղաջանեանը: 1818 թ. Դեկտ. 1-ին պատւիրակութիւնը երկու կառքով մեկնեց Թաւրիզից: Պատւիրակութեան առահովութեան համար նշանակւած էր 100 ձիաւոր, երկու շիրօխուրչիկ զրօշակով:

Երբ պատւիրակութիւնը մօտենում է Նախիջևանին, ընդառաջ է գալիս շրջանի թուրք զօրամասերի հրամանատար Քեալալա-

*) Չպիտք է մոռանալ, որ Թեհրանի կառավարութիւնը հաշտութեան վեհաժողովից պահանջում էր Շարուրի եւ Նախիջևանի շրջանները միացնել Պարսկաստանին: Տե՛ս «Վէմ» 1934 թ. № 5 հՄԲ.

խան Նախիջևեանացին եւ սրտառուէ բարի գալուստ մաղթելով՝ առաջնորդում է քաղաք, հիւրերի համար յատուկ պատրաստած բնակարանը։ Անմիջապէս այցելութեան են դալիս տեղական խաները եւ, ի միջի այլոց, յայտնում են, որ շնորհիւ իրենց քաջամարտիկ զինւորների գլխավորութեան, հայկական զօրքերը նահանջել են, եւ իրենք այլեւս հանդիստ են ու միջամտութեան պէտք չունեն։ Պատւիրակութեան անդամները պատասխանում են, թէ իրենք բարձրագոյն հրաման են ստացել այցելելու Հայաստան եւ պիտի մեկնեն Երեւան։ Երեկոյեան ի պատիւ հիւրերի ընթրիք է տրուում, որին ներկայ են լինում քաղաքի աչքի ընկնող ղեկավարները, տաճիկ սպաներ ու զործակալներ եւ մի երիտասարդ ունւ։ Այս վերջինը ընթրիքից յետոյ, հնարաւորութիւն է գտնում տեսնելու Կարապետ քահանայի ու Գ. Աղաջանի հետ եւ տեղեկութիւններ է տալիս շրջանի վիճակի եւ կատարուող գէպքերի մասին։ Յայտնում է, թէ շրջանում կան շատ տաճիկ զործակալներ ու սպաներ, թէ Նախիջևեանում ու զիւղերում կան նաեւ բաւական թիւ բռնական զինւորներ, որոնցից շատերը ամուսնացել են տեղում մնալու համար, որ նրանք են կազմակերպում եւ վարում ապստամբութիւնը, որ դրամը ստացւում է Բագուից, իսկ ռազմամթերքը՝ Տաճկաստանից, որ, վերջապէս, բանտում կան բանտարկւած մի քանի հայեր, որոնք շատ վատ դրութեան մէջ են եւ եթէ չուտով չաղաւտեն, բոլորն էլ կը մեռնեն, եւայլն։ Տէր-Կարապիտի միջնորդութեամբ, հետեւեալ օր, այս խեղճերը աղատ են արձակուում։

Մեկնելով գէպի Երեւան, Սաղարակ թրքական զիւղից պատւիրակութիւնը յարաբերութեան մէջ է մտնում Դաւալուի հայկական զօրամասի հրամանատար գնդ. Դոլուխանեանի հետ ու իրենց ուղեկցող զօրամասը թողնելով Սաղարակում, չորս անդէն ձիաւորի պահակութեամբ ու սպիտակ դրօշով՝ շարունակում է ճանապարհը։ Դաւալուի առջեւ հանդիսաւոր ընդունելութիւն է ցոյց տրուում հայկական զօրամասի կողմից, որ շատ լաւ տպաւորութիւն է գործում պատւիրակութեան անդամների վրա։

— «Ձանրմ, հայեր են, կրթւած ժողովուրդ, ամէն կարգ-կանոն գիտեն», ասում է ազդւած Վրսուղը-Մամայիքը։

Գնդ. Դոլուխանեանը յայտնում է, որ Հայաստանի կառավարութիւնը յուր չի ունեցել պատւիրակութեան գալու մասին, այլապէս կարգադրութիւններ կանէր պատշաճ ընդունելութեան համար։ Երեւանից խնդրել են, որ պատւիրակութիւնը զիւղում հանգստանայ, մինչեւ գնացքի հասնելը։

Տեղի ունեցած ընդհանուր խօսակցութիւնից պարզուում է, որ

հայկական զօրքերը ոչ թէ տեղական ուժերի գլխավորութեան հետեւանքով են նահանջել, այլ փոխադրւել են հայ-վրացական սահմանադրութիւն, ուր ընդհարումներ էին տեղի ունենում։ Եթէ այս պարագան չլինէր, Նախիջևեանը մինչեւ Զուլֆա վաղուց արդէն գրաււած կը լինէր։

Դեկտ. 9-ի երեկոյեան, պատւիրակութիւնը, դո՛ւ իրեն ցոյց տրուած հիւրասիրութիւնից, յատուկ գնացքով, ուղևորւում է Երեւան եւ հանդիսաւորապէս ընդունւում կառավարութեան ներկայացուցիչների եւ պարսիկ հիւպատոսի կողմից։ Բարի գալուստի խօսք է ասում մայրաքաղաքի պարէտ Ա. Շահխաթունին եւ հիւրերին առաջնորդում «Օրիանտ» հիւրանոցը։

Պաշտօնական փոխադարձ այցելութիւններից յետոյ, Դեկտ. 11-ին պատւիրակութիւնը ընդունւում է վարչապետ Յ. Քաջազնուսու կողմից։ Ներկայ է լինում եւ արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանեանը, որի հետ պատւիրակութիւնն արդէն տեսնել էր։ Պարսիկ ներկայացուցիչները յայտնում են վարչապետին իրենց կառավարութեան բարի ցանկութիւններն ու ջերմ զգացումները հանդէպ աղատ Հայաստանի եւ շնորհաւորում անկախութիւնը։ Յայտնում են նաեւ, որ իրենց դալը սոսկ բարեկամական այցելութիւն է հայ ժողովրդին, որի հետ պարսիկ ժողովուրդը երկար դարեր ապրել է սիրով ու խաղաղութեամբ։ Հայաստանի Հանրապետութեան ստեղծումից յետոյ երկու ժողովուրդների փոխյարաբերութիւններն աւելի եւս սերտ կը լինեն, ու երկու երկիրները կողք կողքի կապրեն իրեն բարի հարեւաններ։

Ուղջոյնի խօսք է առնում եւ Կարապետ քահանան, որ գուհունակութիւն է յայտնում պարսիկ ժողովրդի եւ կառավարութեան բարեացակամ վերաբերումի համար գէպի հայերը։ Արտայայտում է նաեւ Ատրպատականի հայութեան եւ նրա արժանաւոր առաջնորդ Ներսէս Արքեպ.-ի խնդակցութիւնն ու շնորհաւորանքը Մայր Հայրենիքի ազատազրութեան համար։

Վարչապետ Քաջազնուսու շնորհակալական խօսքերից յետոյ, պարսիկ ներկայացուցիչները խօսք են բաց անում Շարուր-Նախիջևեանի գրաւման եւ մահմետակ. ժողովրդի ապահովութեան մասին։ Նրանք նախ ներկայացնում են այդ շրջանից ստացւած բողոքներն ու սղեբաւորները, ապա պարզում թաղաժառանգի եւ կեղբոնական կառավարութեան տեսակէտը՝ սպասել մինչեւ հաշտութեան վեհաժողովի վճիռը։ Միաժամանակ հաւատարմացնում են, որ պարսիկ կառավարութեան այս միջնորդութիւնը լոկ բարեկամական մի քայլ է եւ

պաշտօնական հանգամանք չունի: Նրանք յոյս են յայտնում, որ Հայաստանի կառավարութիւնը չի մերժի իրենց խնդրանքը:

Վարչապետը իր պատասխան-խօսքում յայտնում է, թէ Ծարուր-Նախիջևեանի Դաշնակից Կեդրոնական Կոմիտեի համաձայնութեամբ խի կազմում է Հայաստանի անբաժան մասը: Հայաստանի կառավարութիւնը սրտանց ուրախ կը լինի, եթէ խնդիրը վերջնայ խաղաղութեամբ, սակայն, զժրախտարար, դէպքերը այլ ուղղութեամբ են զարգանում. տեղական ժողովուրդը ենթարկելով արտաքին դժուր դրամներ՝ խռովութիւն է յարուցանում եւ չի ուզում ճանաչել Հայաստանի պետական իրաւունքները: Ինչպէս ամէն կառավարութիւն, Հայաստանի կառավարութիւնն էլ ստիպւած է գիմել ուժի՝ վերականգնելու համար խանգարւած կարգը:

Տեղի է ունենում կարծիքների փոխանակութիւն, եւ վարչապետը յայտնում է, թէ հարցը կը դրւի նախարարների խորհրդի քննութեան:

Դրանից յետոյ, նոր տեսակցութիւն է լինում արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանեանի հետ, ուր մի անգամ եւս ծեծուած է Ծարուր-Նախիջևեանի խնդիրը: Նախարարը յայտնում է, որ Հայաստանի կառավարութեան կողմից Թեհրան դիւանագիտական մի ներկայացուցչութիւն պիտի ուղարկւի, որ լիազօրութիւն է ունենալու խօսելու Հայաստանի եւ Պարսկաստանի միջեւ եղած ու ծագելիք բոլոր խնդիրների մասին: Երկուստեք փափաք եւ յոյս է յայտնում, որ չուտով բնականոն դիւանագիտական ու բարեկամական յարաբերութիւններ հաստատեն երկու պետութիւնների միջեւ:

Բանակցութեան նիւթ են դառնում եւ տնտեսական հարցեր, մասնաւորապէս Հայաստանի վրայով Թաւրիզ նաւթ հասցնելու խնդիրը: Հայաստանի կառավարութիւնը ամէն կերպ ընդառաջ է գրնում, բայց Նախիջևեանի ըմբոստների բռնած զիրքը արգելք է լինում տնտեսական որ եւ է կապի վերականգնման: Այդ առթիւ հետաքրքրական է առաջ բերել հետեւեալ փաստը, որ արձանագրւած է դեսպան Իշխ. Արզութեանի թղթերի մէջ նրա եւ պարսից արտաքին գործոց նախարարի օգնական Ֆահիմ-Դովլէի միջեւ յուլիս 18-ին տեղի ունեցած տեսակցութեան առթիւ. «Երբ նախկին վարչապետը՝ Վրսուդ-Դովլէն դիմեց Հայաստանի կառավարութեան՝ խնդրելով բաց թողնել մի վազոն մազութ, Երեւանից Նախիջևեանով մտցնել Պարսկաստան, եւ երբ Թաւրիզի իշխանութիւնները դիմեցին Նախիջևեան, վերջինս պատասխանեց թէ նախ անհրաժեշտ է թոյլտուութիւն խնդրել Ագրէջանից եւ Խալիլ փաշայից»:

Պատւիրակութիւնը այցելեց եւ Էջմիածին, ուր երեք օր հիւրասիրւեց Կաթողիկոսի կողմից: Կարապետ քահանան երեք ժամ տեւող զեկուցման մէջ Կաթողիկոսին հանգամանօրէն ներկայացրեց Ատրպաշտականի դէպքերը, պարսկահայ ժողովրդի կեանքը եւ Ատրպաշտականի առաջնորդի կատարած պատմական դերը: Գէորգ Ե. Կաթողիկոսը մասնաւորապէս գոհ մնաց Ներսէս Սրբազանի գործունէութիւնից. «Յրհնեալ լինի Ներսէս Սրբազանը, ասում էր նա, ժողովրդասէր, հայրենասէր, գործունեայ եւ մաքուր հոգեւորական է»:

Պատւիրակութիւնը Ղիտեց վանքն ու թանգարանը, այցելեց Կաթողիկոսին ու պաշտօնեաներին, վայելեց իր պատին սարքւած պաշտօնական հացկերոյթը եւ գոհ սրտով վերադարձաւ Երեւան: Սյունեղ մի անգամ եւս ներկայացաւ վարչապետին եւ արտաքին գործոց նախարարին, որոնք յայտնեցին նախարարական խորհրդի որոշումը, թէ՛ Ծարուր-Նախիջևեանի ժողովուրդը պէտք է յօժար կամքով ճանաչէ Հայաստանի իշխանութիւնը, հակառակ դէպքում կը գրաււի զինու զօրութեամբ: Իրանի կառավարութիւնը թող վստահ լինի, թէ հայկական զօրքերը ոչ մի վնաս չեն հասցնի խաղաղ աղբարակութեան:

Դեկտ. 25-ին, Առաջնորդարանի սրահում, ի պատիւ պատւիրակութեան տրւեց հանդիսաւոր խնջոյք, որին ներկայ էին նախարարները, Հայաստանի Խորհրդի անդամները, բարձրաստիճան պաշտօնեաներ, պարսից հիւպատոսը, թեմական առաջնորդ Խորէն Ե. պիսկոպոսը եւ ուրիշ հրաւիրեալներ:

Երկուստեք ոգեւորւած բաժակաճառեր արտասանեցին եւ արտայայտեցին ջերմ բաղձանքներ երկու երկիրների փայլուն ապագայի եւ համերաշխ կենակցութեան մասին: Երեկոն անցաւ բարձր տրամադրութեան տակ, եւ Վրսուդ-Մամալիքն ու Հաջի-Խանը հետոյան գոհ սրտով:

Պատւիրակութիւնը մասնակցեց եւ Հայաստանի Խորհրդում Նոր տարւոյ առթիւ կազմակերպւած հանդէսին — անկախ Հայաստանի առաջին նոր-տարին, որ անցաւ բացառիկ խանդավառութեան մէջ: Ի միջի այլոց, այստեղ յուզւած ճառ խօսեց եւ Կարապետ քահանան, որ արտայայտեց սրբապահայ ժողովրդի նւիրումն ու հրճանքը Մայր Հայրենիքի աղատութեան առթիւ:

Նոյն օրը, «Յրիանոս» հիւրանոցում, տրւեց հրաժեշտի ճաշկերոյթ կառավարութեան կողմից, ուր նոյնպէս ջերմ բաժակաճառեր արտասանեցին:

Ճաշից յետոյ, երեկոյան, պատւիրակութիւնը թողեց Հայաստանի մայրաքաղաքը:

Կառավարութեան որոշումով պատերազմութեան միացան եւ սպայ Շահրապեանը ու Պ. Տէր-Ղուկասեանը, որոնք պարսիկ կառավարութեան պիտի տանէին Հայաստանի կառավարութեան ողջոյնները:

1919 թ. յունւ. 4-ին պատերազմութիւնը հասաւ Մարանդ եւ իջեւանեց զաւառապետ Վլադիմիր-Մամալիքի մօտ: Այս վերջինը ընդարձակ հեռադրով տեղեկութիւններ տւեց նահանգապետ Մուքառամ — Ուլ — Մալքին: Կարապետ քահանան էլ հեռադրական զեկոյց ուղարկեց թեմակալ առաջնորդին:

Ի պատիւ հայ ներկայացուցիչներին տրւած ընթրիքից յետոյ, յաջորդ օրը պատերազմութիւնը մեկնեց Թաւրիզ եւ ժամը 4-ին հասաւ Աջի կամուրջը, ուր դիմաւորելու էին եկել նահանգապետի ներկայացուցիչը եւ մի շարք պաշտօնեաներ: Թագաժառանգը ի պատիւ Հայաստանի ներկայացուցիչներին ուղարկել էր իր անձնական կառքը: Ընդառաջ էին եկել եւ հայ ժողովրդի, թեմակալ առաջնորդի, վաճառականների ներկայացուցիչները: Հիւրերին առաջնորդեցին Նազրմ-Դովլէի ասպարանքը: Այնուհետեւ սկսեցին այցելութիւններն ու փոխ-այցելութիւնները: Եկան նահանգապետի օգնականը, քարտուղարը, քաղաքապետը, Ատրպատականի ընդհանուր ոստիկանապետը եւ զանազան հիմնարկութեանց ներկայացուցիչներ: Հայերը դուրդուրալից վերաբերում էին ցոյց տալիս դէպի Հայաստանի կառավարութեան պատերազմները, որոնք սրտագին ջերմութեամբ էին ընդունուում Թաւրիզի հայ եւ պարսիկ հասարակութեան բոլոր շրջանների կողմից:

Առանձնապէս հանդիսաւոր եղաւ ընդունելութիւնը թագաժառանգի մօտ: Նշանակւած ժամին Ներսէս Սրբազանը եւ Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչները այցելեցին թագաժառանգի պալատը: Պալատի մուտքի մօտ նրանց ընդունեց արարողապետը եւ առաջնորդեց ընդարձակ սրահը: Մի քանի բոպէ յետոյ, նահանգապետի ուղեկցութեամբ, ներս մտաւ երիտասարդ թագաժառանգը. «Ս», ջանաբը խալիֆա» խօսքերով, ժպտադէմ մօտեցաւ Սրբազանին եւ սեղմեց ձեռքը: Սրբազանը իր հերթին ներկայացրեց Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչներին, որոնցից սպայ Շահրապեանը զինուորական հազուստով էր: Մի քանի բոպէ մտերիմ զրոյցից յետոյ, արարողապետը եւ նահանգապետը հիւրերին հրամայեցին թէյ եւ անուշեղէններ:

Ապա սկսեց հանդիսաւոր խնջոյքների շարքը ի պատիւ Հայաստանի ներկայացուցիչների: Առաջին հիւրասիրութիւնը եղաւ Նահանգապետի մօտ, յետոյ՝ քաղաքային վարչութեան, հայ վաճառա-

կանութեան, Հայոց Առաջնորդարանում, եւ այլն: Առաջնորդարանի հացկերոյթին հրաւիրւած էր 150 հոգի — նահանգապետը, օգնականը, քարտուղարը, քաղաքապետը եւ այլ բարձրաստիճան անձինք. հայերից՝ աղագլին մարմիններն ու հիմնարկութիւնները, վաճառականները եւ ուրիշ երեւելի անձնաւորութիւններ:

Բոլոր այս հաւաքոյթներում ընդհանուր խօսքի առարկան էր երկու ժողովուրդների բարեկամական յարաբերութիւնը: Իրանի թագաւորի ու կառավարութեան եւ Հայաստանի կառավարութեան կենացը բաժակներ էին պարսկում: Ծեշտուում էր երկու հարեւան պետութիւնների համերաշխ դործունէութեան անհրաժեշտութիւնն եւ, առհասարակ, ջերմ ոգեւորութիւն էր արտայայտուում: Թաւրիզի հայութիւնը, երեւի, երբեք չի մոռանայ այդ օրերի թողած տպաւորութիւնը:

Հայաստանի ներկայացուցիչները ամբողջ մի ամիս մնացին Թաւրիզում, վայելելով Իրանի կառավարութեան բարեացակամ հիւրասիրութիւնը: Եւ փետրւարի սկզբին, ջերմ շնորհակալութիւն յայտնելով նահանգապետին, քարտուղարին եւ քաղաքապետին, վերադարձան Երեւան:



II

Մինչ այսպէս Հայաստանի կառավարութիւնն աշխատում էր ամբարտնջել իր բարեկամական յարաբերութիւնները Իրանի հետ, անդին թիւրքերն ու ազրբէյջանեան դործակալները անդործ նստած էին: Ներանք էլ իրենց հերթին աշխատում էին Ծարուր-Նախիջեւանը դիմադրութեան հնոց դարձնել եւ կամուրջի վերածել Տաճկաստանի եւ Ազրբէյջանի միջեւ: Այս աշխատանքները 1919-ի ընթացքին էլ աւելի բարդացրին կացութիւնը, որ մասնաւորապէս ծանրացաւ, երբ 1920 թ. գարնան, Նուրի փաշան 2000 ասկեարների զլուխն անցած՝ Ազրբէյջանից, Խուզաֆէրինի կամուրջով, Ղարադաղի վրայով, իջաւ Զուլֆա եւ շարժւեց դէպի Նախիջեւան, ուր նրան գրկաբաց ընդունեցին խաները: Նոյն ժամանակները Բայազէդի թիւրք 50-60 հոգի-նոց զօրամասի վրա սկսեցին աւելանալ նոր ուժեր: Բայազէդ եկաւ Վանի կուսակալ ու զօրքերի հրամանատար Զեւդէթ փաշան, որ իր հետ բերած զօրքերի վրա աւելացրեց նաեւ 3000-ի չափ թուրք ու քիւրդ հրոսակներ: Զեւդէթ փաշան յայտարարեց, որ եթէ բոլշեւիկեան բանակը Ազրբէյջանից մօտենայ Հայաստանի սահմաններին, ինքն

էլ իր ուժերով յարձակելու է Երեւանի վրա: Թիւրք-բոլշեւիկեան գործակցութիւնը ակներեւ էր:

Այդ նոյն ժամանակները Մակուում տեղի է ունենում մի կարեւոր խորհրդակցութիւն: Նախիջևանից գալիս է Սալիլ բէյը, Բալայէզլից՝ Շաֆիզ բէյը 6 սպայի եւ 70 զինւորների հետ: Այդտեղ ընդհանուր ծրագիր է գծում Հայաստանի դէմ կատարելիք դաւաքելու աշխատանքների համար: Այդ խորհրդակցութիւնից յետոյ Շաֆիզ բէյը անձնում է Նախիջևան, տեսնում է բոլոր հրամանատարների եւ ղեկավար խաների հետ, ծանօթացնում է Ձեւեղէթի ծրագրին, այցելում է ռազմական բոլոր կարեւոր վայրերը եւ հրահանգներ առնում՝ վերադառնում է Բալայէզլ: Սալիլ բէյը մի քանի օր մընում է Մակուում, տեսնում է շրջակայ խաներին, յայտնում է նրանց թիւրք-բոլշեւիկեան գործակցութեան պայմանները եւ աշխատում համախմբել նրանց ուժերը՝ թիւրք-ազրբէջանեան բանակի հետ միասին չորս ուղղութեամբ Երեւանի վրա շարժելու նպատակով: Բարերախտաբար, հեռատես խաները խոհեմութեամբ մերժում են գործակցել թիւրքերին: Միայն Մակուի Սարդարը շարունակում է իր երկդիմի քաղաքականութիւնը:

Շաֆիզ բէյի Բալայէզլ հասնելուց յետոյ, սկսում է զէնքի ու ռազմամթերքի փոխադրութիւնը դէպի Նախիջևան: Որքան եւ զգուշութեամբ կատարէին այդ աշխատանքները, դադարիքը սակայն չուտով բացւում է: Այսպէս, յայտնի է դառնում, որ մայիս 23-ին Շահթախտ է հասել 30,000 փամփուշտ՝ Շարուր-Նախիջևանի ըմբոստների համար: Ներսէս Սրբազան այդ լուրը հեռագրով հաղորդում է Թեհրան, Իշխ. Արդութեանին, եւ սա վճռական բողոք է ներկայացնում արտաքին գործոց նախարարին եւ միաժամանակ բողոքի հեռագիր քաշում Մակուի Սարդարին: Վերջինս թէեւ մերժում է օժանդակ խմբեր առնել թիւրքերին, բայց զէնքի փոխադրութիւնը չի արգելում: Տաճիկները կասկածելով, որ իրենց գործողութիւնները լըրտեսում են Մակուի առաջնորդական փոխանորդ Պետրոս վարդապետը եւ թաւրիղեցի մի քանի առեւտրական հայեր, պահանջում են Սարդարից եւ սա հեռացնում է նրանց Մակուից:

Բոլոր այս շարժումները, անշուշտ, անծանօթ չէին եւ Երեւանի կառավարութեան, որ իր հերթին միջոցներ էր խորհում վիժեցնելու համար թիւրք-ազրբէջանեան դաւադրութիւնները: Յունիս ամսին, բոլշեւիկների յարուցած մայիսեան խռովութիւնները եւ Ձանդիրասարի ըմբոստութիւնը հաշտեցարդարի ենթարկելուց յետոյ, հայկական զօրքերը շարժեցին Նախիջևանի ուղղութեամբ եւ կարճ

ժամանակում յաջողութեամբ դրակեցին ամբողջ Շարուրը, մինչեւ Շահթախտ:

Հայկական զօրքերի յաղթական յառաջխաղացումը խուճապի մատնեց նախիջևանցիներին: 1918-ի գաղթականութիւնը, որ վերադարձել էր իր տեղերը, նորից փախաւ դէպի Մակու, Սոյ, Մարանդ ու Թաւրիզ: Շահթախտի տաճկական զօրքերը պարտւած՝ մասամբ քաշեցին Բալայէզլ, մասամբ էլ՝ Նախիջևանի ուղղութեամբ: Նախիջևանցիները շտապեցին պատերազմութիւն ուղարկել Երեւան: Միաժամանակ դիմում արին պարսիկ կառավարութեան խնդրելով նրա միջնորդութիւնը: Մակուի Սարդարը, որի մօտ ապաստանել էր Նախիջևանի խաների մեծ մասը, շտապում է հեռագրիւններով յայտնել Թեհրան Նախիջևանի ծանր վիճակը եւ միջամտութեան անհրաժեշտութիւնը: Թաւրիզ է հասնում Նախիջևանից մի պատերազմութիւն, ուր յուլիս 17-ին ոստիկանապետի միջոցով միջնորդութիւն է յարուցանում Նախիջևան հաշտարար մի յանձնաժողով ուղարկելու մասին: Այդ միջնորդութեան Հայաստանի ղեկավանը տալիս է հետեւեալ պատասխանը. «Հաշտարար յանձնաժողովի մասին կարելի է խօսել միայն այն դէպքում, երբ Նուրի եւ Սալիլ փաշաները իրենց զինւորների հետ միասին կը հեռանան, եւ թուրք ազգաբնակչութիւնը՝ անկեղծօրէն կը ցանկանայ հայերի հետ վերականգնել բարեկամական յարաբերութիւնները, այլապէս յանձնաժողովը իմաստ չունի»:

Նախիջևանի դէպքերը սոսկալի գոյներով էին ներկայացնում պարսիկ հանրային կարծիքի առջեւ: Մինչեւ իսկ Թեհրանի մամուլը արձագանգ տւեց: Հայաստանի դիւանագիտական ներկայացուցչութիւնը ստիպւած եղաւ Օգոստ. 14-ին հետեւեալ հաղորդագրութիւնը հրատարակել պարսիկ թերթերում. —

«Նկատելով, որ վերջին ժամանակներս դէպի Նախիջևան հայ զօրքի առաջխաղացութեան հետեւանքով պարսիկ մամուլի մէջ երեւացին լուրեր, որոնք իրենց անորոշութեամբ կարող են պարսիկ հասարակական որոշ շրջաններում ստեղծել մի տրամադրութիւն, որը երբեք համապատասխան չէր լինի երկու ցեղակից եւ բարեկամ ժողովուրդների բարեկամական անկեղծ ձգտումներին, Հ. Հ. դիւանագիտական առաքելութիւնը անհրաժեշտ է համարում ի գիտութիւն ընդհանուր պարսիկ ժողովրդին յայտարարել, որ հայկական զօրքերն իրենց առաջխաղացումով հետապնդում են երկու նպատակ. նախ՝ հեռացնել հայկական հողերից այն աշխարհահռչակ խառնակիչներին, որոնք բոյն դնելով Նախիջևանում, մշտապէս ձգտում են

վառ սղահել մերձաւոր Արեւելքում պատերազմի սպառնալիքն իր ազնուարեւր հետեւանքներով բոլոր ժողովուրդներին համար. երկրորդ՝ երկաթեղակային զինքն բանալով՝ միանալ հարեւան եւ բարեկամ պարսիկ ժողովրդի հետ առեւտրական, փոստ-հեռագրային եւ այլ յարաբերութիւններով եւ աշխարհով աւելի սերտ կապեր ստեղծել երկու բարեկամ ժողովուրդների միջեւ:

Նախիջևանի եւ շրջակայքի թաթար ժողովուրդը, միանգամայն օրինաւոր հպատակութեան զգացումներ տածելով դէպի Հայաստանի կառավարութիւնը եւ դժգոհ արտաքին խառնակիչ տարրերի գրգռիչ գործունէութիւնից՝ իր ներկայացուցիչներն է ուղարկել Հայաստանի կեդրոնական կառավարութեան մօտ, յայտնելու իր անկեղծ հպատակութիւնն եւ ջերմ ցանկութիւնը բարի հարեւանութեամբ ասրելու հայերի հետ:

Վերջին տեղեկութիւնների համաձայն, խալիլ փաշան փախել է Նախիջևանի սահմաններից, սակայն Էդիֆ բէյ անունով մի տաճիկ սպայի ղեկավարութեամբ մի խումբ տաճիկ եւ ասորի ջանցի խռովարարներ շարունակում են խալիլի գործունէութիւնը:

Հայկական զինուորական իշխանութիւնը, չնայելով վերոյիշեալ արգելքներին, այժմ եւս ցանկանում է խաղաղութեամբ վերջացնել գործը, որպէս զի թաթար խաղաղ ազգաբնակչութիւնը նոր նեղութեանց եւ փորձութիւնների չենթարկւի: *)

Նախիջևանցիները, սակայն, չուզեցին լսել Հայաստանի կառավարութեան յորդորները: Երեւան ու Թաւրիզ պատերազմութիւններ ուղարկելը նրանց համար ժամանակ վատաւելու քաղաքականութիւն էր: Մի երրորդ պատերազմութիւն էլ ուղարկել էին Ազրբէջան՝ խորհրդային իշխանութեան մօտ: Եւ իրական օգնութիւնը հասաւ այս կողմից. կարմիր բանակը փութաց յարձակւել Հայաստանի վրա. ուստի զօրքերը մտան Ղարաբաղ, գրաւեցին Զանգեզուրը եւ ձեռք մեկնեցին Նախիջևանցիներին: Ռուս-թիւրքական միացեալ ուժերի ճնշման տակ հայկական ուժերը ստիպւած եղան տեղի տալ: Շարունակաբար Նախիջևանը անցաւ խորհրդային տիրապետութեան տակ, եւ զաղթականութիւնը վերադարձաւ իր տեղերը: Վերադարձան եւ խաները՝ համոզւած, թէ ռուսների իշխանութեան ներքոյ Նախիջևանն իրենց համար այլեւս կը լինէր բոլորովին անպահով: Սակայն, նրանց յոյսերը չարդարացան. չուտով սկսեցին զանդաւածային ձերբակալութիւններ. բազմաթիւ մարդիկ բանտարկւեցին զանազան ա-

*) «Բիւլլետեն», № 12. «Այգ», 1920 թ. քիւ 33

նունների տակ՝ բուրժուա, կուլակ, հակայեղափոխական: Առաջին եւ ամենածանր հարւածը իջաւ խաների գլխին: Աքսոր, գիշերային զաղանի սպանութիւններ, բռնադատում. . . Նորից Նախիջևանցի փոխտաւաններով լեցեց Թաւրիզը, այս անգամ դառն զղջումով. «Սխալեցինք, մեզ զայթակեցրին մեր ղեկավարները. պէտք է միանայինք հայերի հետ ու ղրմադրէինք այս «չէյթաններին» . . .


Բայց «չէյթանը» արդէն կատարել էր իր դործը. բոլշեւիկները պինդ նստել էին Նախիջևանում, որ կամուրջ էր դարձել Բաղուի եւ Սնդորայի միջեւ: Նախիջևանից բոլշեւիկները ներկայացուցիչներ ուղարկեցին Բայազէդ՝ թիւրքերի հետ աւելի սերտ յարաբերութեան մէջ մտնելու համար: Մակուից անցնելիս ներկայացուցչութիւնը հիւրասիրեց Սարդարի կողմից:

Քիչ յետոյ, Նախիջևանում նորից երեւաց խալիլ փաշան: Այս անգամ նա գալիս էր Բաղուից, ուր տեղի էր ունեցել Արեւելեան Ժողովուրդների համագումարը Էնվէրի եւ թիւրք ջարդարար փաշաների մասնակցութեամբ: Այդտեղ սերտ գործակցութիւն էր հաստատւել թիւրքերի եւ բոլշեւիկների միջեւ: Գործակցութեան մի կէտն էլ ուղղւած էր Հայաստանի Հանրապետութեան դէմ:

Խալիլ փաշան բոլշեւիկներից ստացել էր մեծ քանակութեամբ ոսկի, ռադիօկայաններ եւ այլն, եւ Օգոստ. 21-ին, Մակուի վրայով անցաւ Անդորա: Նրան ուղեկցում էին 250 ասկեարներ եւ մի բոլշեւիկեան պատերազմութիւն, որ Մոսկւայից յատուկ յանձնարարութեամբ գնում էր Մուսթաֆա Բէմալի մօտ. . .

Հայաստանի խորհրդայնացումով, մանաւանդ Փետր. 18-ի զէպքերից յետոյ, հիմնովին փոխւեցին ուժերի յարաբերութիւնները եւ Արաքսի ափին: Սահմանի կացութիւնը, սակայն, մինչեւ այսօր էլ մնում է աննպաստ Հայաստանի ու հայ ժողովրդի համար: Հայ եւ պարսիկ բարեկամ ժողովուրդների միջեւ դաւադիր բոլշեւիկն ու քէմալական թիւրքն են նստած:

Թաւրիզ



ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՒԵԱՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵԼՔՈՆ ԽԱՆԸ

Պարսկաստանը վաղուց է որ անկման վիճակում էր դրնում։ Մինչև 19-րդ դարի կեսը, նոյն իսկ աւելի ուշ նա խիստ յետամընաց երկիր էր։ Նրա պետական կազմը շատ պարզ էր — Շահն ամեն ինչ էր։ Պարսկաստան նշանակում էր շահ։ Շահի հեղինակութիւնը սահմանափակում էր միայն Ղուրանի պատվիրաններով, որոնք մեծ մասամբ, նոյնպէս ի նպաստ շահի էին մեկնարանում։ Պետութեան բոլոր բարձրատիճան պաշտօնեաները բառիս բուն նշանակութեամբ շահի ծառաներն էին։ Բոլոր պաշտօնները գնում էին զբրամով շահից, վարչապետից, կամ նահանգապետներից։ Այդ պատճառով էլ իւրաքանչիւր պաշտօնեայի առաջին դործը լինում էր հաւաքել պաշտօնը գնելու համար ծախսած գրամը եւ ըստ կարելւոյն շատ դրամ գիղել իր անձի ապագայ ապահովութեան կամ նոր, աւելի ձեռնտու պաշտօն ձեռք բերելու համար։ Այդ դրամները ըստացւում էին ժողովրդից, եւ դարմանալի էէ, որ պարսիկ հեղահամբոյր ժողովուրդը անսահման առեւտրեամբ էր լեցւած գէպի տիրող դասերը։

Պարսկաստանի սոցաւագրական շարժման սկզբնաւորութիւնը պէտք է փնտռել անցած դարի քառասնական թւականներին։ Այդ շարժման հիմնական դործօնները — տիրող դասերի անիրաւութիւններից եւ վարչական կամայականութիւններից յետոյ — հետեւեալ երեք ազգականները հանդիսացան. 1) Բարականների կրօնական շարժումը գլխաւորութեամբ Շէյխ-Ալի-Մահմէդի (1828-1850), որ յայտնի է Բաբ անունով (Դուռ). 2) մասոնական կազմակերպութիւնը՝ հիմնւած 50-ական թւականներին Մելքոն-Խանի կողմից եւ 3) աւելի ուշ ծագած համախառնական շարժումը։

Բարբի յեղափոխական ոյժը բխում է նրա վարդապետութիւնից, ըստ որի բոլոր մարդիկ հաւասար են. չկայ մաքուր եւ անմաքուր

մարդ, ազնւական ու հասարակ։ Մարդիկ բոլոր շնչաւոր եւ անշունչ արարածների հետ միասին Աստուծոյ են, որ ամէն տեղ է եւ բոլորից վեր։ Բարբի հետեւորդների ունեցւածքը հասարակաց էր։ Նրանք մերժում էին հասարակական դիրքի ժառանգական իրաւունքները, ինչպէս եւ կառավարիչների, դեկավարների կամ վարդապետների ձեւական ընտրութեան անհրաժեշտութիւնը։ Բարբի ասելով՝ մտքի ոյժը ինքնին բաւական է պարտադրելու համար իր կամքը, առանց ձեւական օրէնքների տնայնութեան։ Երկրային կեանքը յաւիտենական է. մարդիկ չպէտք է վախնան այն բանից, որ սխալմամբ մահ են կոչում. մահ չկայ։

Այս պարզունակ եւ անարդւածներին ու ճնշւածներին բարձրացնող վարդապետութիւնը ահագին յուզում առաջ բերեց պարսիկներին մէջ, որոնք սոսկաւորակ շատ զգայուն են դէպի կրօնական խնդիրներն ու նորութիւնները։ 1844 թ. Բարբ հրապարակ հանեց իր վարդապետութիւնը եւ անմիջապէս նրա դէմ ծառացան հոգեւորականութիւնն ու աշխարհիկ իշխանութիւնները, որոնք զոյգին, թէ տիրող կարգերի համար ի՞նչ մեծ վտանգ է սպառնում այդ նոր վարդապետութիւնը։ 1850 թ. Բարբ խաչեց, որ աւելի եւս ուժեղացրեց հասարակ ժողովրդի համակրանքը եւ աւելացրեց Բարբի հետեւորդների թիւը։ Նասր-էդ-Դին շահի վրա կատարւած չորս մահափորձերից առաջինը տեղի ունեցաւ 1852 թ. չորս բարականների ձեռքով։ Թեթեւ վիրաւորւած շահը դաժան հալածանքի ենթարկեց բարականներին, որոնք անօրինակ տուժանութիւն ցոյց տւին։ Շահը շատ լաւ հասկանում էր, թէ իստութիւնները աւելի եւս առեւտրի սիրտի դարձնեն իրեն բարականների աչքին, ուստի պատասխանատուութեան մի մասը դրեց պետական բարձր պաշտօնեաների եւ զինւորականութեան վրա։ Նախարարները, պալատական բարձր պաշտօնեաները եւ բարձր հրամանատարական կազմը պարտաւորեցին մասնակցել հալածանքին եւ սեփական ձեռքերով կտրել բարականների գլուխները, գնդակահարել ու խարոյկների վրա այրել նրանց։

Այս զանգւածային մահապատիժներից յետոյ, ժողովրդական համակրանքը գէպի բարականները աւելի եւս աճեց, եւ բարակաւորութիւնը դարձաւ դադանի կրօն, իսկ բարակաւորութեան կենտրոնը տեղափոխեց Ռուսաստան, Միջին Ասիա, որ բարականները ոչ միայն դիմադրութեան չհանդիպեցին ուսում իշխանութիւնների կողմից, այլ եւ քաջալերանքի արժանացան։ Բարականութեան շնորհիւ պարսիկները վարժեցին դադանի դործունէութեան եւ իրենց իրաւունքների պաշտպանութեան ընդդէմ մարդկային իրաւունքները ոտքի տակ դնող բռնակալ իշխանութեան։

Համխոլամութիւնը ամենքին ծանօթ երեւոյթ է, ուստի հարկ չկայ երկար կանգ առնել նրա վրա, իր արմատներով նա կապւած է երիտասարդ թիւրքական շարժման հետ, որ կեանքի կոչեց Օսմանեան սուլթին սահմանադրութիւնը 1876-ին: Համխոլամութիւնը զօրացաւ եւ ամրացաւ յատկապէս ռուս - ճաղոնական պատերազմից յետոյ (1904 թ.): Համխոլամութիւնը հիմնւած է ոչ թէ ցեղային, այլ կրօնական միութեան սկզբունքի վրա, մի բան, որ համապատասխանում էր եւ պարսիկ ժողովրդի շահերին: Յեղափոխ սկզբունքը համաթրքութեան ձեւի տակ պարսիկների համար անընդունելի էր, որովհետեւ դրանով Պարսկաստանը կը բաժանէր երկու մասերի - հիւսիսային, ուր գերակշռում է թրքական տարրը, եւ հարաւային, ուր տիրապետում է զուտ իրանական ծագում ունեցող բնակչութիւնը:

Պէտք է ասել, որ համխոլամական շարժման ղեկավար Ջէլալ-էդդինը պարսկական մասոնական առաջին օթեակի անդամ էր եւ դառնում էր այդ օթեակի ղեկավարների եւ նրա հիմնադիր Մելքոն-խանի ուժեղ ազդեցութեան տակ: Ջէլալ-էդդինը սկսեց իր գաղափարներն քարոզել 1884 թ. եւ մինչեւ մահ մեծ եռանդով առաջ տարաւ այդ քարոզը: Նա սպանեց 1908 թ., երբ Գնդ. Լեախովի կազակների բրիգադը ռմբակոծեց Մէջլիսը:

Երբորդ ազդակը, ինչպէս ասացինք, մասոնութիւնն է, որ Պարսկաստանում առաջ եկաւ եւրոպական ազդեցութեան տակ: Անցեալ դարի երեսնական թւականներից սկսած պարսից կառավարութիւնը երիտասարդներ էր ուղարկում Եւրոպա կրթութիւն ստանալու նպատակով: Այդ երիտասարդները սովորաբար առնւում էին առաջնակարգ ընտանիքներից: Ուսնելու համար Եւրոպա ուղարկւած երիտասարդներից մէկն էր երիտասարդ Մելքոնը, որ Ջուղայեցի հարուստ հայ Միրզա - Եսկուր խանի որդին էր: Միրզա - Եսկուր խանը բարձր պաշտօն ունէր արտաքին գործոց նախարարութեան մէջ: Մելքոնը ծնւել էր Սպահան 1833 թ.: Նախնական ուսումը ստացել էր Թեհրանի հայկական դպրոցում: 12 տարեկան հասակում հայրը նրան ուղարկեց Փարիզ, Միսիթարեանների հիմնած Հայկազեան վարժարանը, ուր Պարսկաստանի եւ Հնդկաստանի հարուստ հայերը սովորաբար ուղարկում էին իրենց զաւակներին:

Պատանի Մելքոնը աւելի քան 5 տարի սովորեց այս դպրոցում եւ վերադառնալով Պարսկաստան՝ պաշտօն ստացաւ արտաքին գործոց նախարարութեան մէջ: Այստեղ Միրզա - Մելքոնը շուտով աչքի ընկաւ եւ նշանակեց երիտասարդ շահ Նասր-էդդինի անձնական թարգման եւ համհարգ: Հետագային Մելքոն խանը ինքը բացատրեց,

թէ իր արագ բարձրանալու եւ շահի հետ ունեցած մտերմութեան պատճառն այն էր, որ իր ընտանիքը ի հնուց անդի շատ մօտ էր շահի հետ եւ ինքն ու Նասր-էդդինը կաթնեղբայրներ էին:

Շնորհիւ շահի մօտ վայելած բացառիկ վստահութեան Մելքոն խանը, զեռ շատ երիտասարդ հասակում, նշանակեց յատուկ պատվիրակութեան պետ եւ ուղարկեց Եւրոպա ու Ամերիկա առեւտրական յարաբերութիւններ կապելու համար: Նրան յաջողեց Եւրոպայի եւ Ամերիկայի ուշադրութիւնը գրաւել պարսկական շուկայի վրայ, իսկ Ֆրանսայի հետ նոյն իսկ առեւտրական դաշինք կնքեց:

Փարիզում եղած միջոցին Մելքոն խանը կապեր հաստատեց բարձր դասի պատկանող պարսիկ երիտասարդների հետ, որոնց հետ միասին գրաւեց մասոնութեամբ, որ այս ժամանակները ափսոսելի էր Եւրոպայում: Նրանք մտան Մեծ Արեւելքի օթեակների մէջ եւ սկսեցին եռանդով աշխատել:

Հայրենիք վերադառնալով՝ այդ երիտասարդները կոչեցին պետական ծառայութեան: Նրանց ապաստւում էր փայլուն ապագայ եւ յաջողութիւն պաշտօնավարութեան մէջ: Արտասահմանի առաքելութիւնից վերադառնալուց յետոյ, Մելքոն խանը նշանակեց արտաքին գործոց նախարար: Շնորհիւ այդ բարձր դիրքի, անձնական հմայքի եւ կազմակերպական արտակարգ ընդունակութեան՝ նա շուտով առաջնակարգ դիրք գրաւեց արտասահմանից եկած պարսիկ մտաւորականութեան շարքում: Նա եղաւ եւ մասոնական առաջին օթեակի հիմնադիրը Պարսկաստանում: Օթեակի անդամների թիւը սահմանափակ էր, բոլորն էլ Եւրոպայից փրագարձած երիտասարդներ: Նախագահ նշանակեց իշխաններից մէկը, բայց օթեակի ողին ինքը՝ Մելքոն խանն էր: Օթեակի գոյութեան մասին, ըստ երեւոյթի, տեղեակ էր եւ երիտասարդ յս. Բ. եւ հետագայով ու համակրանքով էր վերաբերւում: Օթեակի դաւանարանութիւնը, ինչպէս եւ ծիսական մասն ու ձեւերը կառմամբ էին ֆրանսական Մեծ Արեւելքի հետեւողութեամբ: Օթեակը կոչւում էր Ֆարմասուն - խանա, աշխին, ֆրան - մասոնների տուն, իսկ իրենց մասոնները կոչւում էին Ֆարմասուն:

Մասոնութեան ընդհանուր, վերացական սկզբունքները եւ ազատութեան, հաւասարութեան ու եղբայրութեան գաղափարները պարսկական օթեակում աւելի գործնական ուղղութիւն ստացան: Պետական գործին աշխատանքի կոչւած մասոնների առջեւ դրւած էր երկրնորանք՝ կամ աչք զոցելով չըջալատող իրականութեան վրա՝ անձնատուր լինել սեփական կատարելագործութեան, կամ պայքարի բռնել իրական կեանքի ծանր պայմանների հետ եւ դրանով իսկ մասոնի չեղել մասոնութեան հիմնական նպատակներից: Պարսից օթ-

1002-2025

661



եակը ընտրեց երկրորդ ուղին եւ իրեն համար մշակեց հետեւեալ բանաձեւ պատւիրանը. «Մարդկութեան բարիքը ընդհանրապէս, իսկ պարսիկ ժողովրդի բարիքը ի մասնաւորի եւ ամենից առաջ»:

Այս պատւիրանը մղեց պարսիկ մասոններին ծառայելու իրաւաւորի եւ հարստահարած ժողովուրդին: Օթեակի առջեւ դրած անմիջական խնդիրն էր տգէտ զանգւածների լուսաւորութեան եւ ժողովուրդին իրաւունքի տարրական սկզբունքներին ծանօթացնելու անհրաժեշտութիւնը: Եւրոպական կրթութիւն ստացած եւ շահի համակրանքը վայելող այդ երիտասարդութիւնը գրգռեց կաշառակերութեան եւ ստրկամտութեան մէջ խրած հին պաշտօնէութեան եւ բարձրաստիճան երեւելիների դայրոյթը: Չկարողանալով ճակատ տու ճակատ կռւել նրանց դէմ, հին պաշտօնէութիւնը ուշադրութեամբ հետեւում էր նրանց քայլերին եւ աշխատում վարկարկել նիւթեր հաւաքել: Մի բան որ պատճառ դարձաւ, որ մասոնները աւելի եւս դադարի պահէն իրենց կազմակերպութիւնը. օթեակը հաստատուն տեղ չունէր. ժողովները տեղի էին ունենում ուշ յիշերները, անդամներից որ եւ է մէկի տանը. նրանք պէտք տեսան նոյն իսկ օթեակի անունը փոխելու. սկզբում կատակով կոչում էին ոչ թէ Գարմատուն-խանա, այլ՝ Ֆէրամուշ-խանա, ախրն՝ մոռացութեան տուն, այն իմաստով, որ օթեակից դուրս եկողը պարտաւոր էր մոռանալ նրա գոյութիւնը: Ըստ երեւոյթին, օթեակի նիստերում, դուռ մասոնական խնդիրներից դատ, նաեւ կեանքի մէջ կերտակելիք դործնական ծրագիրներ էլ էին մշակւում: Առաջին շրջանում օթեակը խուսափում էր բացառապէս քաղաքական քայլերից, այլ բաւականանում էր միայն անդամների անձնական դործունէութեամբ՝ քանալով միայն համաձայնեցնել այդ դործունէութիւնը: Սակայն, շատ շուտով պարզւեց, որ այս կարգի աշխատանքը չի կարող չօչափելի հետեւանքների հասցնել, եւ մասոնները որոշեցին անցնել քաղաքական պայքարի: Նրանք սկսեցին բացէ ի բաց արտայայտել վարչական կամայականութիւնների դէմ եւ վարչական բարենորոգումների ու օրէնքների հրատարակութեան անհրաժեշտութեան ի նպատակ:

Երիտասարդ շահի լաւ էր վերաբերւում մասոնների դործունէութեան եւ տեսականօրէն տրամադիր էր բարենորոգումներ մտցնելու, բայց պաշտօնեաներն ու պալատականները, որոնց դէմ էին ուղղւելու այդ բարենորոգումները, ոչ մի միջոցի առջեւ կանգ չէին առնում շահին մասոններից հեռացնելու համար: Նրանք յամառ կերպով ցոյց էին տալիս շահին թէ անձնապէս իրեն եւ թէ ինքնակալական կարգերին սպառնացող վտանգը: Ի միջի ալլոց, շահագործեցին եւ օթեակի «Ֆէրամուշ-խանա» անունը եւ շահին ներշնչում էին այն միտ-

քը, որ իբր թէ մասոնները ուզում են տապալել պետական տիրող կարգը, սպանել շահին եւ իրենց ձեռքն առնել իշխանութիւնը: Որ, իբր թէ, մասոնները օթեակի նոր անդամներից պահանջում են մտքից հանել կրօն ու հաւատ, մոռանալ թագաւորին տւած երդումն ու քաղաքացիական բոլոր պարտականութիւնները: Որ հէնց այդ պատճառով էլ օթեակը կոչւում է «մոռացութեան տուն»:

Յայտնի չէ, թէ նման ներշնչումների հետեւանքով Նասր-էդդինը իր վերաբերմամբ դէպի մասոնները փոխեց, բայց մասոններն իրենք կարծում էին, թէ առաջւայ պէս լաւ էր վերաբերւում: Նրա բարականներին ճնշելուց յետոյ (1852 թ.) Նասր-էդդինը մի քիչ հանդուստացաւ, իսկ դժգոհութիւնը օր աւելի շարունակւում էր սաստկանալ եւ տարածւել ամբողջ Պարսկաստանում, մասոնները վճռեցին, թէ այլեւս գործելու ժամը հասել է: Նրանք Մեքքոն խանի գլխաւորութեամբ չորս հոգինոց մի պատւիրակութիւն ուղարկեցին շահի մօտ եւ բացատրեցին թէ երկիրը ծայր աստիճանի թշուառ վիճակի մէջ է, թէ ժողովրդի դժգոհութիւնը աճում է, թէ այս վիճակն այլեւս անհանդուրժելի է եւ անհրաժեշտ է անմիջապէս վերջ տալ վարչութեան կամայականութիւններին եւ արդար օրէնքներ հրատարակել:

Մասոնների յանդուգն պահանջներն ուղղակի շանթահարեցին շահին: Նրա համար կասկած չէր մնում, որ մասոնների հակառակորդների ասածները ճիշդ էին: Շահի հրամանով պատւիրակներն անմիջապէս ձերբակալեցին եւ չլթալաւաղ տարեցին Արդաբիլ, այնտեղ մահապատժի ենթարկելու դադարի հրամանով: Բարեկամները, թիրեւս հէնց շահի լուրեւոյն հաւանութեամբ, օգնեցին Մեքքոն խանին եւ նրա ընկերներից մէկին, ճանապարհից փախչելու դէպի Թիւրքիա: Միւս երկուսը սպանւեցին: Մասոնները ենթարկեցին խիստ հալածանքի ու սրտիժների. նրանք բոլորը պաշտօնանկ եղան, զրկւեցին աստիճաններից, բանտարկւեցին կամ աքսորւեցին ու մանք էլ մահաւան դատապարտւեցին: Մասոնական առաջին օթեակը քանդուեց ու ոչնչացաւ եւ այլեւս Նասր-էդդինի օրով չվերականգնեց: Սակայն, մասոնութիւնը դրանով չվերջացաւ. անհատ մասոնները շուտով կապ հաստատեցին միմեանց հետ եւ օգնում էին միմեանց նիւթապէս ու բարոյապէս՝ հաւատարիմ մնալով մասոնական սկզբունքներին:

Այստեղ պէտք է տեսլ, որ դեռ առաջին օթեակի էսրճանումից առաջ, Պարսկաստանի գլխաւոր քաղաքներում, կազմւել էին գաւառական օթեակներ, որոնք նոյնպէս քայլուեցին, կամ մասոնները իրենք լուծեցին: Դժբախտաբար, որ եւ է տեղ, կարելի չեղաւ

նակ նա նշանակեց Պարսկաստանի լիազոր դեսպան ամբողջ Եւրոպայի համար

Պարսկաստանի շահերի տեսակէտից աւելի լաւ ընտրութիւն կարելի չէր անել: Մեկըն խանը շատ բարձրացրեց Պարսկաստանի վարկը Եւրոպայում, գրաւեց առեւտրական շրջանների հետաքրքրութիւնը եւ 12 տարի անընդհատ, մինչեւ 1890 թ. մեծ յաջողութեամբ առաջ տարաւ իր բեղմնաւոր գործունէութիւնը, մինչեւ որ վերջնականապէս գտաւելով շահի հետ, թողեց պետական ծառայութիւնը:

Մեկըն խանին դեսպան նշանակելը մի ճարտիկ խաղ էր շահի կողմից. դրանով նա ազատեց խելօք նախարարի բռնակալութիւնից: Շահը միշտ ասում էր. «Ես այնպիսի նախարարներ եմ ուզում, որ չգիտենան, թէ Բրիտանիան ի՞նչ բան է՝ քաղաք թէ կաղամբ»:

Իրրեւ ընդհանուր Եւրոպայի դեսպան, Մեկըն խանը իրեն կեդրոնաւոր ընդունեց Լոնդոնը: Այստեղ սկսւում է Պարսկաստանի ազատագրական շարժման ղեկավարների գործունէութեան նոր շրջանը: Նրանց պայքարը նորից ուղղւած էր Պարսկաստանում տիրող կամայականութիւնների դէմ, բայց այս անգամ աւելի լայն ծաւալով եւ ուժեղ թափով եւ մասնակցողների աւելի մեծ թւով: Մասունները մասամբ փոխեցին եւ աւելի պարզեցին ու հանրամատչելի դարձրին իրենց սկզբունքները:

Արդէն մի քանի անգամ ասել է, թէ մասոնական վարդապետութիւնը Պարսկաստանում անխառն ձեւով չի պահւել. նա փոխւել ու յարմարեցւել է տեղի եւ ժամանակի պայմաններին: Այսպէս, յայտնի է, որ պարսիկ մասոնական օթեակների քայքայումից յետոյ, պարսկական մասոնութեան ղեկավար Մեկըն խանը, իր վարդապետութեան յարող եւ տիրող կարգերից դժգոհ անձերի համար կազմեց մի գիրք -- Ալամի Աղամիէթ (Մարդկութեան աշխարհը) - որի ձեռագիրը շատ տարածւած էր կազմակերպութեան անդամների շրջանում: Ի՞նչ էր այդ գրքի բովանդակութիւնը, ինձ յայտնի չէ: Մեկըն խանի ասելով՝ նա ունէր կրօնական վարդապետութեան բնոյթ, որ կազմւած էր մասոնութեան սկզբունքների հիման վրա: Նման խառնակութիւնը մեզ չպէտք է չփոթեցնէ, ոչ միայն այն պատճառով, որ այդ երեք վարդապետութիւններն էլ իրենց միջեւ ունին շատ ընդհանուր կէտեր, այլ եւ այն պատճառով, որ պարսիկներն իրենց բնաւորութեամբ շատ են հետաքրքրւում կրօնական բնոյթ կրող նորութիւններով, մասնաւոր եթէ նրանք առաջ են բերում նոր գծեր եւ աւելի հասկանալի են դարձնում իրենց դաւանած կրօնը:

Մեկըն խանի բացատրութեամբ՝ նա իր հետեւորդներից պահանջում էր չգոհանալ միայն արժանաւոր մարդ կոչւելու իրաւուն-

քից, այլ եւ ջանալ հասնել տղամարդ կոչւելու բարձրագոյն արժանիքին: Ինքը Մեկըն խանը 1888 թ.ին իր հիմնած «Մարդկութեան Աշխարհը» կազմակերպութեան մէջ մտնող անդամների քանակը հաշւում էր 30,000 հոգի: Դժւար է ասել, թէ որքան էր համապատասխանում իրականութեան այս թիւը:

Սակայն, վստահութեամբ կարելի է պնդել, թէ Մեկըն խանի կուսակիցների թիւը բաւական մեծ էր, թէ նրանք պատկանում էին հասարակութեան տարբեր խաւերին, եւ չի պատահել եւ ոչ մի գործ, որ Մեկըն խանը Լոնդոնում ծրագրած եւ իր ճարտիկ հետեւորդների միջոցով գործադրած չլինէր: Մեկըն խանի կազմակերպութեան մէջ, որ խիստ շեղում էր մասոնութեան վերացական սկզբունքներից յօգուտ գործնական նպատակների, պահւած էին մասոնութեան արտաքին-ծիսական ձեւերն ու խօսքերը, իսկ նշանաբանները յաճախ փոխւում էին:

Բացի այս կազմակերպութիւնից, Մալքոն խանը արտասահմանում հրատարակում էր «Կաւուլ» (օրէնք) անունով մի պարբերական, այլ եւ դէպքից դէպք լոյս էր ընծայում գրքոյկներ ու թռուցիկներ:

«Կաւուլ»ը սկզբում հրատարակւում էր անկանոն կերպով, Բաղդատում կամ Պոլսում, եւ դադարի կերպով մտցւելով Պարսկաստան՝ ահագին յաջողութիւն ունէր այնտեղ: Երբ 1890 թ. Մեկըն խանի յարեւրութիւնները շահի հետ բոլորովին խզեցին եւ Մեկըն խանը հրաժարեց ղեկավարութիւնից, «Կաւուլ»ի հրատարակութիւնը փոխադրեց Լոնդոն եւ սկսեց լոյս տեսնել իրրեւ ամսաթերթ: Ահա թէ խաղրեց Լոնդոն եւ սկսեց լոյս տեսնել իրրեւ ամսաթերթ: Ահա թէ «Կաւուլ»ի մասին ինչ գնահատութիւն է տալիս պարսիկ մամուլի պատմադիր Միրզա Մոհամէդ Թաւրիզին. «Կաւուլ»ը կազմւում էր բացառապէս Մեկըն խանի կողմից եւ խորը յեղափոխութիւն էր առաջ բերում հասարակութեան գիտակցութեան մէջ. նրա պարզ ոճն ու ինքնատիպ բովանդակութիւնը իր վրա էին հրաւիրում ընդհանուր ուշադրութիւն: Մի շարք նոր բառեր պարսկերէն ընթացիկ լեզւի մէջ մտան այդ պարբերականի միջոցաւ: Շնորհիւ իր աննման ոճի եւ շարադրութեան ձեւի այս պարբերականը դարձաւ պարսիկ պարբերականներից ու թերթերից լաւագոյնը, իսկ պարսիկ ժողովրդի մէջ բերականներից ու թերթերից լաւագոյնը, իսկ պարսիկ ժողովրդի մէջ գրւում Պարսկաստանի ազատագրական շարժման մէջ: Առհասարակ, Մեկըն խանի գրւածքները երկու ուղղութեամբ պատմական խոշոր նշանակութիւն են ունեցել՝ պարսիկ աւելի ուշ շրջանի վերածնութեան քաղաքական եւ գրական յեղափոխութեան տեսակէտից: Քաղաքականօրէն նրա գրւածքները ներշնչման աղբիւրներ են ծառայել Պարսկաստանի

բոլոր վերանորոգելիներն և յեղափոխականների համար, իսկ գրական տեսակետից նպաստեցին թեթեւ, ամենքին մատչելի եւ բոլորին հաճելի գրական ոճի հաստատման»:

Քաղաքական գրեւծքներից զատ, Մելքոն Սանին է վիճակած Պարսկաստանի առաջին թատերադերը լինելու պատիւը: Թատրոնական գրեւծքն էլ նա օգտաւորեց քարոզչութեան համար: Նրա թատերգութիւնները ներթուր ու կառուցեւծքով այնքան էլ փայլուն չեն, բայց խիստ սրամիտ ու կծու կերպով խարաղանում են վերին դասերի եւ վարչութեան արատները: Այդ թատերգութիւնները թուով չորս պարսիկ հասարակութեան մէջ լայնօրէն տարածւած էին վիճաբանութեան օրինակներով եւ առաջին անգամ տպւեցին 1922 թ. Բերլինում, իսկ Ֆրանսերէն թարգմանութիւնը լոյս տեսաւ Փարիզում, 1934-ին:

Մելքոն Սանի կատարած մեծ դերը նոր պարսիկներէն գրական ոճի կատարելագործման խնդրում ոչ ոքի կողմից մէծի առարկայ չէ. թէ պարսիկները իրենք եւ թէ Եւրոպայի գիտնականները ընդունում են առանց առարկութեան: Գալով նրա քաղաքական դերին՝ ոմանք առաջնակարգ աստիճանի վրա են դնում նրան, իսկ մեծամասնութիւնը դասում է երկրորդ տեղ՝ համիւլամութեան քարոզիչ Զամմալ-էդ-Դինից յետոյ, որը իր հերթին գտնւել է Մելքոն Սանի ուժեղ ազդեցութեան տակ եւ մտնում էր վերջինիս հիմնած մասոնական օթեակի մէջ:

Նա շատ հեռու եմ Մելքոն Սանին պարսիկ յեղափոխութեան մէջ գլխաւոր դեր տալու մտքից, բայց չեմ կարող չընդունիլ որ նրան է պատկանում Պարսկաստանի ազատագրական շարժման ծառայող բովանդակ գործի ղեկավարութիւնն եւ ուղղութիւն տալը:

Պետական պաշտօնը թողնելուց յետոյ, Մելքոն Սանը եւ մասոնական օթեակը անցան գործօն պայքարի պարսիկ կառավարութեան կատարած ապօրինութիւնների եւ կամայականութիւնների դէմ: Մանաւանդ բուն էր հակառակութիւնը օտար դրամադլիսի միջամտութիւնների եւ հարստահարութիւնների նկատմամբ: Ընդիմադիրների առաջին յաղթանակը եղաւ վիճակախաղի մէկ մենաշնորհի ձախողումը: Չար լեզուները ասում էին որ այդ մենաշնորհը շահից չընչին գնով ստացել էր ինքը Մելքոն Սանը կամ նրա կուսակիցներից մէկը եւ իր հերթին ծախել Լոնդոնի սակարանում, 40,000 անգլիական ոսկիով: Այդ վաճառքը կատարելուց յետոյ, Մելքոն Սանը ահագին աղմուկ ու գրգռում առաջ բերեց Պարսկաստանում, եւ շահը ստիպւած եղաւ հրաժարել մենաշնորհից՝ հատուցանելով, ի հարկէ, անգլիացիներին վնասները:

Յաջորդ դէպքը ծխախոտի մենաշնորհն էր, որի առթիւ ընդդիմադիրները ընդհանուր ճակատամարտ մղեցին կառավարութեան դէմ: Այս մենաշնորհով տարեկան 15,000 անգլ. ոսկի վճարով անգլիացիք իրաւունք էին ստանում Պարսկաստանի ամբողջ ծխախոտը պնել իրենց նշանակած գներով, մշակել եւ մենաշնորհաւ կերպով վաճառել թէ Պարսկաստանում եւ թէ արտասահմանում: Պէտք է ասել որ Պարսկաստանում ծխելը շատ է ընդհանրացած. մեծ ու փոքր, այդ թէ կին ծխում են: Բացի այդ, Պարսկաստանում պատրաստում է նարդիլէի ծխախոտը, որ տարածւում է նաեւ Թիւրքիայում եւ Միջին Ասիայում եւ Հնդկաստանում: Մենաշնորհը ստորագրեց 1890 թ., եւ ընդդիմադիրները անմիջապէս պայքար բացին նրա դէմ: Երկիրը, ողողեց, արտասահմանից, Մելքոն Սանից ստացուող, կամ ներսը պատրաստող բողոքագրերով, կոչերով ու թուցիկներով: Դժգոհութիւնը ժամէ ժամ աճում եւ լայնանում էր, բայց կառավարութիւնը չէր ուզում տեղի տալ: 1891 թ. Ժողովրդական յուզումները այնպէս սաստկացան, որ շահը ստիպւեցաւ դուրս գալ մայրաքաղաքից եւ շրջել Երկրում: Թեհրանում մնացած վարչապետ Իմին-էս Սուլթանը բէստ նստաւ ուսեսաց հիւպատոսարանում, բայց եւ այնպէս մենաշնորհից չհրաժարեց: Այն ժամանակ, 1891 թ. Դեկտեմբերին, մուշտէիդներից մէկը, Հաջի Միրզա - Հասան - Շիրազի, հրատարակեց մի Ֆէթիա, որով պատւիրում էր ժողովուրդին չծխել, մինչեւ որ Պարսկաստանի համար վնասակար մենաշնորհը չջնջել: Հակառակ կառավարութեան ձեռք առած բոլոր միջոցների, ամբողջ Պարսկաստանը մէկ մարդու պէս թողեց ծխելը: Տեսնելով ժողովրդի այս ձեւի հակառակութիւնը, բրիտանական դեսպանը մերժեց պաշտպանել մենաշնորհի դէմ իր հպատակներին, եւ 1892 թ. Յուն. 1-ին շահը ստիպւած եղաւ հրաժարել մենաշնորհից: Մուշտէիդը հեռագրով շնորհաւորեց շահի վճիռը, բայց ծխելու վրա դըրած արգելքը չվերացրեց, մինչեւ որ Յուն. 2-ին շահը ստորագրեց մենաշնորհի վերացման հրամանագիրը: Նոյն օրն իսկ մուշտէիդը վերացրեց արգելքը, եւ ամբողջ Պարսկաստանը նորից սկսեց ծխել: Կարելի ասել, որ համաժողովրդական այս ընդվզումը ծխախոտի մենաշնորհի դէմ եղաւ Պարսկաստանի ազգային զարթոնքի ամենափայլուն արտայայտութիւններից մէկը:

Ծխախոտի այս դէպքից մի քանի տարի անցած, 1896 թ., սպանւեց Նասր-էդդին շահը: 1896 թ. տարեկան պէտք է հաշւել եւ Մելքոն Սանի ու նրա հիմնած պարսիկ մասոնական օթեակի գործունէութեան վախճանը: Նոյն այդ թւին վերջ գտաւ եւ «Կամուս»-ի հրատարակութիւնը: Մելքոն Սանը նոր շահի կողմից նշանակեց Հոսովի դես-

պան, եւ թողնելով Լոնտոնը՝ տեղափոխւեց իր նոր պաշտօնատեղին: 1908 թ. նա մեռաւ Լոնդոնում:

Մեկըն Սանի բնորոշման անցնելուց առաջ, մի քանի խօսքով, ասենք, թէ այնուհետեւ ինչ ընթացք ունեցաւ յեղափոխական շարժումը Պարսկաստանում:

Մուղաֆֆար - Էդդինի դահ բարձրանալով, 1896 թ., կեսնքի սլալմանները Պարսկաստանում մէկէն ի մէկ փոխւեցին: Նոր շահը մեղմ ու բարի բնավորութեան տէր մարդ էր, լաւ էր տրամադրւած դէպի բարենորոգումները եւ յօժարութեամբ ընդառաջ էր գնում, երբ իրեն այդ ուղղութեամբ առաջարկութիւններ էին արւում: Նրա առաջին գործը եղաւ՝ պաշտօնից հեռացնել վարչապետ Էմին - Էս Սուլթանին, որ Մեկըն Սանի եւ մասոնների թշնամին էր եւ որի դէմ էին ուղղւած դիմաւորապէս ընդդիմադիրների յարձակումները: Մուղաֆֆար-Էդդինի դահակալութեան առաջին օրից հէնց վերաբացւեց Պարսկաստանի մասոնական օթեակը, որի գլուխ կանգնեց Միրզա Գերիմ ծածկանունով մէկը, որի ուլ լինելը յայտնի չէ: Ըստ երեւոյթին, պետութեան բարձրաստիճան պաշտօնեաներից մէկն է:

Դժբախտաբար, սակայն, ազատութեան հովը խիստ երկար չփչեց Պարսկաստանում: Մուղաֆֆար-Էդդինը տկարակամ մարդ էր. իր առողջական պատճառով նա ստիպւած եղաւ ուղեւորել եւ քաղաքական բուժարաններից մէկը: Դրա համար դրամ էր հարկաւոր, մէկ միլիոն ոսկի: Ազատական նախարարներից եւ ոչ մէկը չկարողացաւ ձարել այդ գումարը: Այն ժամանակ, 1896 թ. Օգոստ. 10-ին, նորից պաշտօնի կոչւեց Էմին-Էս Սուլթանը, որը Բեքիայում կնքեց մէկ միլիոն անգլ. ոսկու փոխառութիւն, իբրեւ երաշխիք տրամադրելով Ատրպատականի եւ Գիրմանշահի հարկերն ու մաքսերը, իսկ քիչ յետոյ կնքեց Ռուսաստանում երկու եւ կէս միլիոն անգլ. ոսկու մի նոր փոխառութիւն, որպէս ապահովութիւն ներկայացնելով Պարսկաստանի մնացած բոլոր մաքսային հասոյթները:

Նորից իշխանութեան գլուխ գալով՝ Էմին-Էս Սուլթանը՝ անմիջապէս հալածանք սկսեց իր թշնամի մասոնների դէմ: Պարսիկ մասոնութիւնը նորից դադարեցաւ եւ մասամբ կրկին անցաւ քաղաքական կուռի: Այս անգամ, սակայն, նրանք շարժման ղեկավարը չէին, այլ պոչից էին գնում: Զբաղւած էին աւելի տեսական, վերացական՝ փիլիսոփայական խնդիրներով, ինքնախորացումով եւ ինքնակազմակերպումով: Մինչդեռ կեսնքը գործ էր պահանջում. Պարսկաստանը բռնւած էր յեղափոխական հրդեհով եւ բոլոր պարսիկները յեղափոխականներ էին:

1907 թ., արդէն մահւան մահճի մէջ, Մուղաֆֆար-Էդդինը ըս-

տորադրեց Պարսկաստանի սահմանադրութիւն չնորհող հրովարտակը: Նոյն թւականին Միրզա Գերիմը նորից վերականգնեց Պարսկաստանի մասոնական օթեակը, որ դարձաւ սովորական մասոնական մի օթեակ, որ յեղափոխական շարժումներին եւ քաղաքական պայքարին չմասնակցեց:

Հետագայ դէպքերը Պարսկաստանում տեղի ունեցան եւ շարունակուեցին զարգանալ բոլորիս աչքի առջեւ եւ մեր նիւթի սահմաններից դուրս են:



Գրականութեան մէջ եւ չեմ հանդիպել ոչ մի յօդւածի, որ յատկապէս ներքեւ լինէր Մեկըն Սանին, բայց Պարսկաստանի նորագոյն գրականութեան կամ ազատագրական շարժման մասին խօսող շատ հեղինակներ յաճախ յիշում են եւ նրա անունը *) : Այդ հեղինակների կողմից, սակայն, առանձին համակրանք չի զգացւում դէպի Մեկըն Սանը, բոլորն էլ ընդունում են նրա խաղացած մեծ դերը Պարսկաստանի ազատագրական շարժման մէջ, նրա խորունկ ճանաչումը Արեւելքի կեսնքի, վարպետութիւնն ու գործնական ոգին: Այս բացասական վերաբերումը, ըստ երեւոյթին, բացատրւում է նրանով, որ թէ անգլիացիներին եւ թէ ռուսներին Մեկըն Սանի գործունէութիւնը բաւական հոգս եւ անախորժութիւններ է պատճառել: Մինչդեռ Պարսկաստանում ամէն մի քաղաքական գործիչ, սովորաբար, լինում էր բարեկամ երկու պետութիւններից մէկին եւ թշնամի միւսին, Մեկըն Սանը ոչ անգլիացի էր, ոչ ռուսացի, այլ պարսկացի էր եւ ամենից բարձր դասում էր պարսիկ ժողովրդի շահերը:

Եւրոպական դրեթէ բոլոր հեղինակների կողմից Մեկըն Սանի հասցէին ուղղւած հիմնական մեղադրանքը, թէ նա անկեղծ չէր եւ վաճառող մարդ էր, կայանում է այն բանում, որ պաշտօնի մէջ յաջողութիւն ունենալու համար նա իբր թէ քրիստոնէութիւնից անցել էր մահմեդականութեան: Բացարձակապէս անհեթեթ մի պնդում: Արդէն բոլոր պատիւներից ու պաշտօնի բարձրացումներից եւ Եւրոպայի ընդհանուր դեսպան նշանակւելուց յետոյ էր, որ Մեկըն Սանը ամուսնացաւ Պոլսում Տատեան ամիրայի աղջկայ հետ: Այդ ամուսնութիւնից նա ունեցաւ զաւակներ, որոնց վիճակը ինձ յայտնի

*) BROWNE. « A literary history of Persia. t. IV «The Press and Poetry of modern Persia.»

SYKES, «History of Persia». t. II, 1921

չէ: Գիտեմ միայն, որ Մեղքոն խանի ալրին դեռ ողջ է եւ իր ազապ աղջկայ հետ ապրում է Եւրոպայում՝ մերթ Փարիզում, մերթ Լոնդոնում:

Գրականութեան մէջ կայ մի վկայութիւն Մեղքոն խանին անձնապէս ճանաչող մէկի կողմից: Այդ վկայութեան հեղինակը Մերձաւոր Արեւելքի քաղաքականութեան չափ լաւ ծանօթ եւ խիստ խորաթափանց մի անձնավորութիւն է *): Ես առաջ եմ բերում հետեւեալ հատուածը այդ վկայութիւնից, որ լիովին բնորոշում է Մեղքոն խանին:

«Արեւելքի մարդը (Մեղքոն խանը) ասաց. «Գուցէ ձեզ համար հետաքրքրական լինի լսել պատմութիւնը մի կրօնի, որի պետը ես էի մի ժամանակ: Այդ ցոյց կը տայ ձեզ, թէ կրօնները ինչպէս են ծագում, եւ դուք կը տեսնէք, որ մարդկայնութեան դադափարը նոյնքան յատուկ է Ասիային, որքան եւ Եւրոպային: Եւրոպան իսկապէս անընդունակ է գտնելու իսկական մի կրօն, որ կարողանար դըրաւել մարդկանց հոգիները, ինչպէս Ասիան անընդունակ է գտնելու քաղաքական մի դրութիւն: Ասիայի միտքը հայեցողական է, Եւրոպայինը՝ գործնական: Պրակտիկական ամէն ոք «Նոր Քրիստոս» է ծնում: Ամէն մի գիւղում մենք ունինք «Աստուծոյ որդիներ», եւ իւրաքանչիւր քաղաքում՝ նահատակներ կրօնի համար: Ես իմ աչքերով տեսել եմ հարիւրաւոր բարականներ, որոնք մահ ու տանջանք էին ընդունում, որովհետեւ հաւատում էին մարդարէին, որի վարդապետութիւնը նման է Քրիստոսի վարդապետութեան եւ որը Քրիստոսի պէս խաչուեցաւ:

«Քրիստոնէութիւնը սոսկ մէկն է ասիական հարիւրաւոր դաւանանքներից, որ առաջ անցաւ շնորհիւ յունական մտքի, որը նրան տուեց տրամաբանական ձեւ եւ գործնական կադմակերպութիւն: Եթէ քրիստոնէութիւնը մնար բացառապէս ասիական դաւանանք, վաղուց արդէն կորած կը լինէր, ինչպէս կորել են հարիւրաւոր ուրիշ բարոյական ու խորհրդապաշտ վարդապետութիւններ թէ քրիստոնէութիւնից առաջ եւ թէ յետոյ:

«Ես ծնւել եմ հայ քրիստոնեայ ընտանիքում, բայց դաստիարակւել եմ մահմեդականների մէջ եւ իմ մտքի եզանակը մահմեդական է: Ես չահի կաթնեղբայրն եմ, եւ երբ նա գահ բարձրացաւ, ինձ նշանակեց վարչապետ: Քսան տարեկան հասակումս ես Պարսկաստանի գերիշխան վարիչն էի: Ես տեսայ կառավարութեան գոր-

ծած գեղծումները, երկրի տնտեսական բարեկեցութեան անկումը եւ յափշտակեցի բարենորոգումների դադափարով: Մեկնեցի Եւրոպա, ուր ուսումնասիրեցի կրօնները եւ Արեւմուտքի ընկերային ու քաղաքական դրութիւնները: Ուսումնասիրեցի զանազան աղանդների, զաղտնի ընկերութիւնների եւ Փրան-մասոնութեան ոգին: Ես կադմեցի կադմակերպութեան մի ձեւ, որը իր մէջ պիտի պարունակէր Եւրոպայի քաղաքական միտքը եւ Ասիայի կրօնական իմաստութիւնը: Ես գիտէի, թէ անօգուտ բան է փորձել Պարսկաստանը եւրոպական ձեւով վերակազմելը եւ որոշեցի իմ նիւթական, գործնական բարենորոգումներին հաղցնել այն հազուատը, որը իմ ժողովուրդը կարող է հասկանալ. — կրօնական հազուատը:

«Ես համախմբեցի աւելի քան 30,000 հետեւորդներ: Կեանքի մէջ մտայրի մի շարք նիւթական բարենորոգումներ: Իմ վարդապետութեանն է պարտական Պարսկաստանը, որ տեղի ունեցան մի շարք բարենորոգումներ: Թէեւ սկզբում ես կրօն հիմնելու դիտաւորութիւն չունէի, բայց իմ հետեւորդներն ինձ սուրբ էին համարում եւ «Սուրբ Հոգի» էին կոչում: Շահը ինձ կոչեց «Խալիֆ բարենորոգիչ»:

«Ես գրեցի մի գիրք՝ իմ կրօնական դաւանանքի Աստածաշունչը»:

«Տարօրինակ էր լսել այս փոքրիկ ծերունուն, որ խօսում էր հիանալի Փրանսերէնով: Ես ճամբու դրի նրան մինչեւ տուն, եւ խօսակցութեան ժամանակ նա աւելի ճշգրտեց Արեւելքի եւ Արեւմուտքի մասին ունեցած իր դադափարները. երկուսին էլ ծանօթ է եւ ծանօթ է խորապէս:

«Ես հեռացայ նրանից այն տալանորութեան տակ, թէ նա իմ երբ եւ իցէ հանդիպած մարդկանցից ամենից նշանաւորն էր, որ համոզւած էր, թէ արեւելիան միտքը աւելի գերազանց է, քան արեւմրոհանը: Այստեղ, Եւրոպայում, ո՞վ կարող էր ստիպել մէկին, որ իրեն մանուկ զգայ:

«Այս պատահական հանդիպումը խորապէս ազդեց իմ վրա եւ որոշ հափով յեղափոխականացրեց իմ դադափարները»:

Ահա թէ ինչ տեսակ մարդ էր Մեղքոն խանը:

Փարիզ

*) BLUNT, «A Secret history of the English occupation of Egypt», pp. 82-85.

ՇԱԽԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ

ՆՊԱՍՏ ՄԸ

ՀԱՅ ԵՒ ԹՈՒՐԲ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Բ. ՄԱՍ

«Աշուղ» բառին ծագման մասին մեր վերապահությունը արձանագրելիք վերջ, անհրաժեշտ է տալ բառին իմաստը, - աշուղին դիմադրի՞մ կամ աշուղական ստեղծագործութեան նկարագիրը:

Արգէն մասնեցի տեսակէտս, - ըստ իս, աշուղական ստեղծագործութիւնները պէտք է դասուորել ժողովրդական բանահիւտութեանց բաժնին մէջ: Եւ ահա նոր հարց մը, - աշուղական արւեստին յարաբերութիւնը ժողովրդական երգերուն հետ: Առաջին անգամ Գ. Լեւոնեանն է, որ կը շօշափէ այս հարցը եւ կ'աշխատի լուծել՝ բոլորովին տարբեր եղրակացութեամբ մը: Գ. Լեւոնեան նախ կը դիտէ որ «յաճախ, նոյնիսկ դրական շրջան(ակ)ներում, չփոթում կամ նոյնացնում են ժողովրդական եւ աշուղական երգերը. մինչդեռ էականում դրանք բոլորովին տարբեր բաներ են»: (*)

Ներկայացնենք Լեւոնեանի տեսակէտները.

1- ժողովրդական երգերը կարծես ծնունդ կ'առնեն «ժամանակէն եւ տարածութենէն» դուրս: Ե՞րբ յօրինւած են, ո՞ր յօրինւած են, - չենք գիտեր յաճախ:

2- ժողովրդական երգերը մեծ մասամբ չունին քեմայի ամբողջութիւն, «խրաքանչիւր քառակ դրեթէ մի առանձին բան է ասում, եւ, ուրեմն, հեշտութեամբ կարող են այդ քառակները խառնել կամ ձուլել մի ուրիշ, տաղաչափական տեսակէտից նոյ-

*) «Հայ ժողովրդական եւ աշուղական երգերը, համեմատական տեսութիւն», - Տեղեկացիք Խորհ. Հայաստանի Գիտութեան եւ Արեւստի Ինստիտուտի, 1930, քիւ 4, Երեւան:

նաչափ երգի. այդպէս են բոլոր ջան-գիւլիւմները, հարբանները»:

3- ժողովրդական կենցաղային երգերու չորսանգակութիւնը շատ անհատական է, «հեղինակը երգում է ի՛ր համար, ոչ ուրիշներին»:

4- ժողովրդական երգերու մէջ յանգերը onomatopéique են, - «Միամիտ գեղջուկն (հեղինակը) յաճախ յանգերին զոհ է բերում իր երգի տողերի միմեանց հետ ունեցած օրգանական ու տրամաբանական կապը»:

5- ժողովրդական երգերու մէջ չկան, կամ շատ հազադիւտ են ընկերային դասեր (բարոյախօսութիւն, քարոզ, խրատ):

6- ժողովրդական երգերու հեղինակը յաճախ «տղատ է զգում իրեն իր երգի տաղաչափութեան եւ յանգաւորումի մէջ. ինքը նրա համար առանձին եղանակ է յարմարեցնում, հոգ չէ թէ ուրիշներն ինչ եղանակով կ'երգեն»:

Հիմա սահմաններ աշուղական երգերը, միշտ ըստ Լեւոնեանի.

1- Աշուղական երգերու հեղինակները յայտնի են, աշուղը իր երգին վերջին տունին մէջ կը յիշատակէ իր անունը:

2- Աշուղական երգերը կարճանագրւին տետրակներու մէջ, եւ եթէ ժողովրդական մէջ տարածւին, չեն խառնիր կամ կցւիր ուրիշ աշուղի մը երգերուն, չնորհիւ իրենց մասնաւոր յօրինւածքին:

3- Աշուղական երգերը կը գրւին ժողովուրդին համար, - «աշուղը հասարակական դէմք է եւ պրոֆեսիոնալ երգիչ, նա երգում է օրւայ չարիքը, մտրակում հասարակական ցեղերին, դառնում հրապարակախօս»:

4- Աշուղական երգերը, ըստ բովանդակութեան բաղմաղան են, - խրատական, քարոզական, բարոյախօսական: «Աշուղի ըստ երեւոյթին անձնական-անհատական երգերն իսկ կարող են համարւել ընդհանուրի սեփականութիւն, յարմարւել ուրիշ անհատների կեանքին ու սպրումներին, որպէս հասարակական լիրիկա»:

5- Աշուղական երգերը բաղմատեսակ են նաեւ ըստ ձեւի, ունին տաղաչափական բաղմապիսի կանոններ, դրելու արւեստը բարդ է եւ ունի իր վաղուց մշակւած օրէնքները:

6- Աշուղական երգերը միշտ կ'երգւին լարային նւագարանի հետ, (ոչ թէ նւագաչութեամբ, այլ փոխին ի փոխ):

Քննադատութիւն:

Գ. Լեւոնեանի այս différenciation-ը, որ կը կատարի անհատականութիւն տալու համար աշուղական եւ ժողովրդական երգերուն, արհեստական է՝ չըսելու համար բռնադրօսիկ: Ընդունել այս բա-

Ժանուսը այս սահմանումներով՝ կը նշանակէ թերազնահատել ժողովրդական ստեղծագործութիւնները, որոնք ընդհակառակն, արեւոտական տեսակետով, արժէք են բոլոր աշուղական երգերէն: Գ. Լեւոնեան կը շփոթէ ժողովրդական արեւոտը ռամկասացութիւններու եւ անշնորհ յանդարանութիւններու հետ, զորս մեր ժողովուրդը, արհամարհանքով մը, կանւանէ «խաղ»: Ո՞ր քննադատն է, որ կըրցիր է բացատրել «անտունի»ներու եւ «հայրէն»ներու արեւոտը, հիւսած հին եւ հրաշալի տաղաչափութեամբ մը: Եւ որքա՞ն բաղմադան են ժողովրդական երգերը իրենց տաղաչափական նրբութիւններով, թեմաներու հարստութեամբ, քիբերդ, հարսներդ, ազմերդ, ողբերդ, ծաղերդ, անիծերդութիւն:

Հայ ժողովրդական բանահիւսութիւնը, - խօսքը չափածոյին մասին է դեռ, - խորո՞ւնի, չա՞տ խորունկ արեւոտ մըն է, որուն պատարկներուն առջեւ, յաճախ, հիացումէն կաղչի մարդ եւ կը պապանծի: Ունինք տաղանդաւոր եւ պանծալի աշուղներ, սակայն երբեք չեմ կրնար համեմատութեան դնել զանոնք ժողովրդական երգերու դոհարներուն հետ:

Այս ճշգրտմէն վերջ, անցնինք աշուղական արեւոտին:

Երգը, ծաղումով, ժողովրդական է: Կազմած՝ երեք տարրերէ՝ Պտը, Նաղ եւ Բառ: Ուրեմն, թատրոնի մը բեմին կամ դիւղի մը հրապարակին վրա պէտք է երեւակայել երեք դերակատարներ, protagoniste, deutérageoniste tritagoniste, որոնք կը ներկայացնեն՝ պատիկ յուզումի մը կեանքը կամ մեծ դիւցադներդութեան մը տեսիլը: Փրոքալոնիսքն է նապածուն, որ ոչ միայն կը վարէ պարուհին, այլ եւ (սկիզբները աջ ոտքին ծայրը անցւած՝ հնչեղ մետաղով մը) կը դափէ գետինը եւ կշռոյթ կուտայ բառերուն: Ետքէն թէեւ բաժնեցան երգին այս բաղկացուցիչ տարրերը, սակայն եւ այնպէս պարը տակաւին կը պահէ դժագրական կամ շարժագրական (cinésigraphique) երաժշտութեան մը պատրանքը, ինչպէս խօսքը՝ երաժշտական կախարդանքի մը դրոշմը:

Նախաքրիստոնէական դարերու յունական ակտներէն եւ հայկական գուսաններէն վերջ, Միջին-Դարուն յանկարծ կը միանան երգին ու նապածուն: Եւ պատմութեան մէջ կը յայտնուի նոր արեւոտագէտ մը նոր անունով, - քուսպատուր կամ աշուղ:

Չարմանալի է որ, այդ շրջանին, Եւրոպայի մէջ կը փորձել միացնել ոչ միայն երգն ու նաղը, այլ եւ պարը: Արգարեւ, troubadour ն ու jongleur ր, ի՞նչ կարծիքովս, կը ներկայացնեն

հին æðe ն (երգիչ) ու cinède ր (պարող): Պէտք է արձանագրել, որ ուրիշներ jongleur - ին կուտան տարբեր նշանակութիւն մը, հիմնւելով թրուադատներու վկայութեան վրա, - ստորադաս արեւոտագէտ մը, հասարակ ձեռնածու (jonglar) կամ հոսպիտ (bafo) որ պաշտօն ունէր ընկերակցելու երգահանին (troubador), նազարան զարնելու, արտասանութիւն կատարելու, զանազան խաղեր փորձելու, ունկնդիրները զօսցնելու համար: Ինձի կը թւի թէ այս ըստորադասութիւնը արգիւնք է այն կոիւններուն ու վէճերուն, միշտ շահու պատճառով, որոնք յաճախակի դարձած էին երկու արեւոտագէտներուն միջեւ: Թէ երգիչներու վկայութիւնը կատկածելի է՝ փաստ որ երբեմն ալ կը դանգատին թէ իրենց հասարակ ձեռնածուն միշտիւ կը շրջի, կերպէ ու կը պարէ: Ճիշդ է, սակայն, որ երգահանը, շահագործելու համար իր ընկերակիցը, բնորոշ է բոլորովին déclassé անհատ մը, կը բաւէ որ շնորհք ունի երգելու եւ ճրկուն շարժումներ փորձելու: Ճանչնալու համար այս երկու արեւոտագէտները, անհրաժեշտ կը համարիմ քննել ոչ թէ միայն տրւած վկայութիւնները, այլ եւ պատմութիւնը, - հին օրերու եռատարր արեւոտը, քայքայելի վերջ, Միջին - Դարուն երեւան կուգայ դարձեալ, այս անգամ ձեւափոխւած՝ կրկնատարր, երգ ու նրաղ միացած: Միայն թէ երգահանին ապիկարութեան կամ շահախրոնդութեան պատճառով, deutérageoniste ր չէ կրցած զարգանալ, այլ դարձած՝ արեւոտ տարր մը, նապածու կաքաւիչ միաժամանակ, նոյնիսկ . . . հոսպիտ կայ ծաղրածու:

Տարբեր ձեւով է կատարւած այս արեւոտին դարգացումը Արեւելքի մէջ:

Մեր տաղասացները կը ներկայացնեն դարգացման առաջին աստիճանը այն ձգտումին, որ է իրար միացնել դարձեալ բանաստեղծութիւնն ու երաժշտութիւնը, - տաղը (խօսք) եւ ասմունքը (եղանակ), կամ քերթողը (բանահիւս) եւ ասողը (երաժիշտ): Չարգացման այս ընթացքը, որ ի վերջոյ պիտի յանգէր օփերային, ժողովուրդին մէջ կը մնայ նախնական ձեւով, - ետքէն կաւեհնայ միայն երաժշտութիւնը կամ նաղը: Եւ ահա աշուղը, - ժողովրդական երգիչ մը պարզապէս, որ իր ստեղծագործութիւնները կը ցուցադրէ նազարանի մը ընկերակցութեամբ (յաճախ բայց ոչ միշտ):

Երբ Գ. Լեւոնեան կը սահմանէ աշուղական արեւոտը, քիչ մը շատ կը տարւի նապակցութեամբ, եղանակներու եւ երաժշտական կանոններու ճանաչումով: Նապը չէ, որ աշուղը կը դարձնէ ժողովրդական երգիչ մը, որովհետեւ ամէն աշուղ նազարան չունէր

անսպասան: Եւ յետոյ, չենք կրնար աշուղական դործ անւանել նա-
եւ ամէն ոտանաւոր, որուն վերջին տունին մէջ կը յիշատակուի բա-
նասիւսին անունը: Երբ Գ. Լեւոնեան, իր սահմանումներուն մէջ,
կառաջնորդելի աշուղներու երաժշտական եղանակներու քննու-
թեամբ, կը մոռնայ որ մենք ոչ մէկ ծանօթութիւն ունինք այդ ե-
ղանակներուն մասին, - Սայաթ Նովան, որ այնքան մօտ է մեզի իր
թեւականով, անծանօթ կը մնայ մեզի իր երաժշտութեամբ, եւ Գ.
Լեւոնեան ինքն է որ կասկածի տակ կը դնէ «Սայաթ Նովայիան ե-
ղանակներու» վաւերականութիւնը: *)

Կեդրակացնենք, - աշուղը ժողովրդական երգիչ մըն է եւ կը
սլափանի ժողովրդական երգերու կամ բանահիւսութեան հարբու-
տութեան: Ինք կը յօրինէ խօսքը եւ եղանակը, կամ ծանօթ եղա-
նակի մը կը սլափաճեցնէ իր խօսքը: Ինք կերպէ եւ կը տարածէ իր
ստեղծագործութիւնները: Կամ կը նւագէ լարաւոր նւագարանի մը
ընկերակցութեամբ: Նւագը երկրորդական է, որովհետեւ ընկերակ-
ցութիւնը կը կատարելի փոխն ի փոխ, - յաճախ երբ կը լսէ երգիչին
ձայնը, կը հնչէ նւագը:



Այս ճշգրտմէն վերջ, Թուրքերուն հետ մեր վէճը կը դառնայ ոչ
թէ երաժշտութեան կամ նւագարանի վէճ, - այդ հարցերուն մաս-
նագէտ մը կրնայ, օր մը, քննել թրքական եւ հայկական երաժշ-
տութեանց յարաբերութիւնը, ինչպէս եւ հայ երաժիշտներու (Պա-
սա Համբարձում եւ իր նախորդները) նպատար թրքական երաժշ-
տութեան, - այլ սլափաճէ ժողովրդական երգերու, մանաւանդ
տաղասացներու փոխադրեցութեան հարց:

Նորութիւն մը չէ Թուրքերուն յաւակնութիւնը, - թէ հայ տա-
ղասացները կը գտնուին թրքական արեւստին աղղեցութեան տակ:

Ժամանակին, Եւրոպայի մէջ եւս վէճի նիւթ դարձաւ այն տե-
սակէտը թէ քրուպատուներու արեւստը կը կրէ արաբական աղղե-
ցութիւն: Ի՞նչ փաստ կար, - Միջին-Դարուն, արաբական քաղաքա-
կրթութիւնը եկած խրած էր Եւրոպայի կողերուն մէջ: Սպանիոյ դը-
րաւումով, խափ աշխարհը բերան բերնի եկած էր այլեւս եւրո-
պական ժողովուրդներու հետ: Եւ դիտելի էր, որ քրուպատուներ-
ը կը ծաղկէին ճիշդ այդ շրջանին, մանաւանդ արաբական քաղա-

*) Գ. Լեւոնեան, - «Սայաթ Նովա, հայերէն խաղերի լիակատար ժողովա-
ծու», Տպ. Երեւան, 1931, էջ 72:

քաղկրթութեան սահմաններուն վրա: Կատկած չկար, ուրեմն, որ
քրուպատուները աղղեւած էին արաբական բանաստեղծութենէն:
Նոյնիսկ գրեցին թէ քրուպար կը ծաղի արաբերէնէ (!): Արաբա-
կան աղղեցութեան ուրիշ փաստ մը եւս... խաչակրաց արշաւանքը,
որ խափական աշխարհէն Եւրոպա կը փոխադրէր արեւելեան բա-
նաստեղծութիւնը, յանդարանութիւնը, նոյնիսկ... կին երգելու ա-
ւանդութիւնը:

Այս տեսակէտին կը յարէին Սիւմոնտի, Ռիպերա, Թիրապուշի,
Կէնկէնէ, Վիլմէն եւ ուրիշներ: Սակայն քիչ չեն անոնք, որ ուրա-
ցան արաբական աղղեցութիւնը քրուպատուներու արեւստին վրա:
Փօրիէլ որոշ վերադասութիւն ցոյց կուտայ *)): Ֆ. Շլէկէլ, իր
կարգին, կը դրէ. - «Այն աղղեցութիւնը, զոր Արեւելքի բանաստեղ-
ծութիւնը դործեց Եւրոպայի վրա, խաչակրաց արշաւանքին շնոր-
հիւ, այնքան մեծ չէ որքան կը կարծւի, եւ եթէ աղղեցութիւն մը
կայ, կուզայ ոչ թէ Արաբներէն, այլ Պարսիկներէն» **): Շլէկէլի
եղբայրը եւս, Կիլեոմ, կը յայտնէ նոյն տեսակէտը, ինչպէս կար-
ձանագրէ Ալֆրէտ Ժանրուա, (սակայն ես ձեռքիս տակ չունիմ Կի-
լեոմի աշխատութիւնը): Պէտք չէ մոռնալ նաեւ անմահ Տիէզը, որ
առաջին քարը կը նետէ եւ կը քանդէ արաբական աղղեցութեան
վարկածը:

Առանց երկար պարզութեան կատարելու, դժանանք արձանագր-
ելով ինչ որ կրնեն Տիէզ, Փօրիէլ եւ ուրիշներ՝ հաստատելու հա-
մար թէ արաբական աղղեցութիւն չկայ եւրոպական աշուղներու
դործերուն վրա: Անոնք պարզապէս կը կատարեն եւրոպական եւ ա-
րեւելեան երկիրներու ժողովրդական ստեղծագործութեանց համա-
դրական վերլուծումը՝ դէմ սոս դէմ դնելէ առաջ:

Ալֆրէտ Ժանրուա թրուպատուներու փիլիսոփայութիւնը կը
բանաձեւէ մէկ բառով. - Զգայապաշտութիւն: Իսլամական ժողովրդ-
ական բանաստեղծութիւնը՝ միսթիսիզմի վարդապետութեամբ:
Արդարեւ թրուպատուները իրենց արեւստը կանւանէին gay-savoir,
- այսինքն երգել կինը, սէրը, խրախճանքը, հեռու որ եւ է բարո-
յական մտահոգութենէ եւ երկնային վարձատրութեան յոյսերէ:
Պարզ խօսելով՝ անոնք կերպէին սպօրէն սէրը ***), այն կինը կամ

*) C. Fauriel, - Hist. de la poésie provençale, Գ. հատոր, էջ 310:

**) F. Schlegel, - Hist. de la littérature ancienne et moderne, (Փրանս-
քաղգամութիւն, ժընեւ, 1829) Ա. հատոր, էջ 378:

***) Alfred Jeanroy, - La Poésie lyrique des Troubadours,
տպ. 1934, Փարիզ, Ա. հատոր, էջ 94:

աղջիկը, որուն կը հանդիպին պատահաբար: Ընդհակառակն, արաբական արւեստը թաթախւած էր միոթիսիզմի մէջ եւ իսլամ աշըքները դրաղած էին միայն ընտանեացական արապէսներով:

Ժանրուայի մեթոտին հետեւելով, յաջորդիւ դէմ յանդիման կը դնենք հայկական եւ թրքական արւեստներու փոխադասութիւնը, հաստատելով միաժամանակ թէ հայ աշուղները կը հետեւին հայ ժողովրդական բանաստեղծութեան, որուն մէկ մատղաշ ճիւղը կը կազմեն, ինչպէս թուրք աշուղները կը հետեւին արաբական եւ պարսկական արւեստին, որուն կրօնաշունչ լարն է որ ամէնէն աւելի կը խօսի իրենց:

Փարիզ

(Վերջը յաջորդ անգամ)



Փ. Փ. ՓԱՆԱԻԹԵՍՔՈՒ

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՒ ԶԷԼ ՊՈՒՆԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ ՍՈՒԶԱՎԱՅԻ ՀԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(30 Յուլիս, 1401)

Ստորեւ առաջ բերւած յօդւածը Բուքրէշի Բաֆֆի Միութեան մէջ կարդացւած մէկ դասախօսութիւնն է, որ հեղինակը՝ Պրոֆ. Փ. Փ. Փանաիթեւու՝ սիրով տրամադրել է մեզ «Վէմ»-ում հրատարակելու համար: Ռումէն ուսուցչապետի ուսումնասիրութիւնը լոյս է տեսել նաեւ Բուքրէշի «Revista Istorică Romană» պատմական հանդէսի 1934 թ. 4րդ համարում, պրակ 1-4: Հայերէն թարգմանութիւնը կատարել է Լ. Յարութիւնեանը: Թէ հեղինակին եւ թէ թարգմանչին յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը: ԽՄԲ.:

ԼՎՈՎԻ ՀԱՅ ԵՊԻՍԿՈՒՍՈՅ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Լվովի մէջ ցարդ գոյութիւն ունի հայկական հին արքեպիսկոպոսութիւն, որ ժամանակին ծաղկած վիճակ ունէր, բազմաթիւ հաւատացեալներով, հարուստ վաճառականներով եւ որ սակայն այսօր կը հսկէ միայն փոքր թւով հաւատացեալներու վրա՝ յաջորդները այս քաղաքի հին հայ դպրութիւն: Հայոց Մայր Եկեղեցւոյ դիւանական թուղթերու մէջ կը գտնուի Մոլտավիոյ պատմութեան սկզբնական ժամանակներու համար մեծ նշանակութիւն ունեցող փատաթուղթ մը՝ Ալեքսանտրու Զէլ Պունի կողմէ 30 Յուլիս 1401-ին տրւած հրովարտակը, Սուլաւայի հայ եպիսկոպոսութեան հիմնրման համար: Դեռ 1842-էն, Լեհացւոց պատմագիր մը, Ք. Զաքարասիվիչ կը յիշէ վկայական մը՝ տրւած մոլտավական 6909 թրւականին, այսինքն 1401-ին, որով Մոլտավիոյ իշխան Ալեքսանտրը կը հաստատէ Յովհաննէս կոչեցեալ մը իբր եպիսկոպոս հայոց եւ անոր աթոռ կուտայ Սիրէթի (°) մէջ, Կ. Պոլսոյ Անտոն կաթողիկոսի եւ Վիթովլ իշխանի յանձնարարութեանց հիման վրա... Ան-

կանոնադրված որ տիրած է մինչև Ժոս Ժամանակներս Լվովի հայոց զիւանդան մէջ, որ անմատչելի է ժողովրդեան, անկարելի ըլլած է վերոյիշեալ արտայայտութեան քննութիւնը: Վերջերս 1932 թ. տեղի ունեցած հայ ցուցահանգէսի մը շնորհիւ երեւան եկաւ նաեւ Զաքարասիւնի վրէժի յիշատակած փաստաթուղթը, բնականաբար սլաւոններէն եւ ոչ թէ ռուսներէն հրովարտակ մը: Հայր Զ. Յրերթինսքին որ ինծի հետ միաժամանակ գտաւ այս արժէքաւոր փաստաթուղթը հայոց եկեղեցւոյ զիւանդան մէջ, հրատարակեց զայն զիւանդաններէն պարբերաթերթի մը մէջ, գտնելով զայն սակայն իբր անկարելորդ:

Բայց որովհետեւ ինչպէս հրովարտակի հրատարակութիւնը, այնպէս եւ մասնաւորապէս զերմաներէն թարգմանութիւնը, զոր պարտինք Հայր Յրերթինսքին, սխալ են կատարւած, եւ ձեռք բերի անոր մէկ լուսանկարը, որուն վրայէն կուտամ նոր տպագրութիւն մը եւ ռուսներէն թարգմանութիւն մը: Լուսանկարի ձեռք բերման համար, որ հանգիպեցաւ որոշ զժառանգութիւններու, զիւանդ վարիչներու կողմէն, երախտագէտ եմ Վրինայի համալսարանի ուսուցիչ պար. Շթ. Գլիքսելին:

Ահաւասիկ բնագիրը եւ թարգմանութիւնը հրովարտակի:

Լվովի հայ արքեպիսկոպոսութեան զիւանդան ընադիրը անթուղի իր փաստաթուղթ մըն է: Լաւ մնացած մագաղաթ մը, 21×30 սմ., անեղծ պահած մոմէ կնիքներ, կախած կարմիր եւ կանաչ ժապաւէններէ, Մուրափական եղի զինանշանով եւ շուրջը սլաւոններէն արձանագրութեամբ:

Գիրերու ընթացքը բացարձակապէս նոյնն է Պրաթէի սարկաւազի կողմէ գրւած միւս բոլոր հրովարտակներուն, կնիքը նոյն «մեծ կնիք»-ն է՝ կախած Ալեքսանտրի 16 Սեպտ. 1408 թ. հրովարտակէն:

Թարգմանութիւնը. Շնորհիւ Աստուծոյ, մենք Ալեքսանտր իշխան, տէր Մուրափիոյ երկրին, իմ Պոկտան եղբորս հետ, կը ծանոթացնենք բոլոր բարի ազնականաց, որոնք պիտի նային այս նամակին կամ պիտի լսեն, թէ այս իսկական Յովհաննէս հայոց եպիսկոպոսը մեր քով եկաւ, մեր մուրափական աթոռին եւ ներկայացաւ մեզ Պոկտոյ եկեղեցւոյ ուղղափառ օրթոտոքս պատրիարք Անտոնի իրական նամակով, որովհետեւ իրենց հայ պատրիարքը դեռ չեմ ճանչցած, որպէսզի բարձրանայ այս եպիսկոպոսութեան, մեր Վրթովթ իշխանի օգնութեամբ: Նմանապէս երդեցաւ մեր իշխանութեան ընդունիլ եւ կարգաւորել եկեղեցական բոլոր խնդիրները:

Ուրեմն մենք տւինք հայոց Յովհաննէս եպիսկոպոսին հայոց

եկեղեցիները իրենց քահանաներով: Մեր ամբողջ երկրի մէջ ոյժ պիտի ունենայ իր եպիսկոպոսական իրաւունքով, բոլոր հայերու վրա: Իրեն աթոռ տւինք Սուշավայի, մեր քաղաքի մէջ: Հայերէն անոնք որ զինք յարգեն մեզ յարգած պիտի ըլլան, մեր երկրի Մուրափայի մէջ: Անոնք որ չլսեն իր խօսքը՝ մենք պիտի պատժենք իր ձեռքով:

Այս է իմ հաւատքս վերագրեալ Ալեքսանտր իշխանի, հաւատքը իմ տէրութեան եղբորս, Պոկտանի, եւ հաւատքը Մուրափիոյ մեծ եւ փոքր ազնականներուն: Եւ զրեցաւ Սուշավայի մէջ, մեր կնիքով, 6909 (1401) թ. յուլիս 30-ին, Պրաթէյի ձեռքով:

ՄՈՒՏՈՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆ ՀՆՈՒԹԻՒՆԸ

Հայերը կը կազմեն մէկը Մուրափայի ամենահին օտար բնակչութենէն: Որոշ հեղինակներ կը կարծեն, թէ անոնց հաստատութիւնը այս կողմերը սկսած է 11-րդ դարէն, բան մը որ դժուար է ընդունիլ: Քանի որ այս հայերը սեղմ յարաբերութեան մէջ էին Լեհաստանի հայերու հետ, աւելի հաւատալի է թէ անոնք եկած ըլլան Լեհաստանէն, Կարմիր Ռուսաստանի վրայով, իբր առեւտրականներ, 14-րդ դարու վերջերը, երբ կը սկսի լեհական ծաւալումը այս կողմերը եւ առեւտրական ճանապարհի բացումը դէպի Սեւ ծով: Արդէն Լեհաստանի հայերն ալ իրենց հայրենիքէն եկած են 13-րդ դարուն, Քաֆֆայի եւ Ուքրանիայի վրայով:

Ինչ կը վերաբերի Մուրափիոյ հայոց եկեղեցւոյ ներառւածութեան կազմակերպութեանը, անոր ծագումը պէտք է փնտռել Փեթրու Մուշաթինի ժամանակները, երբ կը սկսին Մուրափայի յարաբերութիւնները Լեհաստանի հետ: Առաջին տեղեկութիւնը որ ունինք այս ուղղութեամբ՝ 1365-էն է, երբ Մուրափայի այն ժամանակայ իշխան Փեթրու Մուշաթին իր ժամանակակից հայոց եկեղեցին կենթարկէ Լվովի հայոց եպիսկոպոսին: Եթէ այս տեղեկութիւնը ճիշդ է՝ հայ ազգիւրը եղելութենէն յետոյ է եւ անվստահելի՝ եկեղեցական այս յարաբերութիւնները տեղի ունեցած են աւելի առաջ, քան վերոյիշեալ իշխանի հաւատարմութեան: Երբեմն Լեհաստանի Վլադիսլավ թագաւորին (1387-ին): Լվովի հայոց եպիսկոպոսութիւնը հիմնւած է 1365-ին, Քաղիմիր Մեծի օրով: Իր լիազօրութիւնը Մուրափիոյ հայ եկեղեցւոյ վրա փաստւած է աւելի վրատահելի փաստաթուղթերով: Էջմիածնի Կաթողիկոսի Լվովի եպիսկոպոսներուն ուղարկած կոնդակներէն պարզ կերպով կը հասկցւի այս գերիշխանութիւնը: Լվովի եպիսկոպոսներուն ուղղւած այս կոն-

տովացի եկեղեցականները: Պատրիարքը, խօսքը կը վերաբերի նոյնինքն Անտոնին, կը նշանակէ Պետրոսը փոխանորդ մուտովական միթրոփոլիթութեան, կը կանչէ մուտովացի եպիսկոպոսները Կ. Պոլսոյ սինոդի առջեւ եւ նոյն ժամանակ Միթրիէնէի միթրոփոլիթը կը զրկէ Մուտովա, իրաւունք տալով անոր վերցնել նզովքը, ի բաց ձգելով սակայն մեթրոփոլիթը եւ եպիսկոպոս մը, որոնք կը մնան նզոված: 1397-ին Պեթղէհեմի արքեպիսկոպոս Միքայէլ զրկւած է իբր քննիչ, պարտականութիւն ունենալով հանդարտեցնել վէճը: Հաշտութեան այս բոլոր փորձերը անցան անյաջող, որովհետեւ մուտովացիները չհամաձայնեցան զոհել իրենց եպիսկոպոսները, այնպէս որ վերջ ի վերջոյ, հապիւ 1401-ին, Մաթէոս պատրիարքի օրով, Ալեքսանտրու Զէլ Պոնի զրկւած պատուիրակութեան հետեւանքով, պատրիարքութիւնը ճանչցաւ Իօսիփը իբր Մուտովայի օրինական միթրոփոլիթ:

Փաստերու այս կարճ ցուցադրութենէն կը հետեւի, թէ նոյնիսկ Շթէֆան Ա.—ի օրով եւ Անտոն պատրիարքի ժամանակ, փորձած է երկու կողմէ ալ հաշտութեան եղբ դռնել: Պետրոս մուտովացի քահանայի Պոլիս պատգամաւորութեան եւ կամ պատրիարքի Մուտովա զրկւած պատգամաւորութիւններու առթիւ է, որ Յովհաննէս եպիսկոպոսը ստացած ըլլալու է Անտոն պատրիարքի յանձնարարականները ուղղւած Մուտովայի իշխանին: Այս նամակները ուղղւած էին ուրեմն Շթէֆան Ա.—ին: Ուշացումը քանի մը տարիներ մինչեւ Յովհաննէսի ճանաչումը իբր Սուլայայի հայ եպիսկոպոս կը բացատրուի պատրիարքութեան եւ Մուտովայի միջեւ եղած վէճի երկարաձգումով: Միայն այն ժամանակ երբ այս վէճը վերջ գտաւ, եպիսկոպոսը կը ցած է արժեքներ իր յանձնարարագիրները: Իրապէս պարզ պատահումնք մը չի կրնար ըլլալ այն իրողութիւնը, որ իր ճանաչումը տեղի ունեցաւ նոյն տարին եւ նոյն ամսին, Յուլիս 1401, երբ պատրիարքութեան կողմէ ճանչցւեցաւ մուտովական եկեղեցին: Այս ճանաչումը տեղի ունեցաւ 26 Յուլիս 1401-ին, իսկ պատրիարքի յանձնարարականով եկած հայ եպիսկոպոսին տուած հրովարտակը նոյն տարւոյ 30 Յուլիսին է, երբ ղեռ Պոլիս կը գտնէին Մուտովայի պատգամաւորները:

Կ. Պոլսոյ պատրիարքէն նամակները ստանալու օրէն մինչեւ անոնց ճանաչումը Մուտովայի իշխանի կողմէն, քանի մը տարիներ չարունակ, Յովհաննէս եպիսկոպոսը կը թափառի Լիթուանիայի մէջ, ուր կը ստանայ նաեւ Վիթորիո իշխանի յանձնարարագիրը, որ կցւեցաւ Բիւզանդիոնի մէջ ստացածին: Յովհաննէս հաւանաբար կուգար Արեւելքէն, անցած էր Կ. Պոլսէն, յետոյ Լիթուանիայէն,

եւ միայն այն ժամանակ, երբ տեղի ունեցաւ հաշտութիւնը պատրիարքութեան եւ Մուտովայի միջեւ, կը ցաւ ներկայացնել հանդուցեալ պատրիարքի յանձնարարագիրը, իրեն աթոռ տրւեցաւ Սուլայայի մէջ, այն եպիսկոպոսութեան, որ պէտք է հիմնւած ըլլար Ալեքսանտրի նախորդներու օրով:

ԱԼԵՔՍԱՆՏՐՈՒ ԶԷԼ ՊՈՒՆԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԼԻԹՈՒԱՆԻԱՅԻ ՀԵՏ

Վերեւ հրատարակւած փաստաթղթին մէջ, Ալեքսանտրու Զէլ Պոնի Վիթորիո կը կոչէ մեծ Լիթուան իշխանը, զարմիկը մեր տիրոջ՝ Լեհաստանի Վլատիսլաւ Թագաւորին, բան մը, որ կը ցուցնէ Ալեքսանտրի աւատի դիրքը, իր իշխանութեան սկիզբէն սկսեալ, ոչ միայն Լեհաստանի, այլ եւ Թագաւորի զարմիկին հանդէպ որ Լիթուանիա էր մնացած: Լիթուանիայի եւ Մուտովայի յարաբերութիւններու խնդիրը, կից եւ զուգահեռ այս իշխանութեան յարաբերութիւններուն Լեհաստանի հետ, յիշիկ լուսարանած չէ պատմական քննադատութիւնը: Պիտի սահմանափակւինք միայն քանի մը բացատրութիւններով, որոնք կապ ունին մեզ զբաղեցնող փաստաթուղթին հետ:

1401-ին երբ Ալեքսանտր կուտայ հայ եպիսկոպոսութեան համար իր վիսլայական, ղեռ տեղի չէր ունեցած առաջին ծանօթ ողջոյնը զոր Ալեքսանտր բրաւ Վլատիսլաւ Իաճիելլո Թագաւորին, 12 Մարտ 1402-ին, լրացնելով այս ձեւակերպութիւնն այ: Փաստօրէն ասիկա ոչ այլ ինչ էր, եթէ ոչ վերանորոգումը նման ձեւակերպութիւններու զորս բրած էին Ալեքսանտրու Զէլ Պոնի նախնիքները: Այդ իսկ պատճառով Մուտովայի նոր իշխանը կը նկատէր, բնականաբար, իր աթոռը բարձրանալէն ի վեր, իբր աւատ Իաճիելլոներու:


Վիթորիո քաղաքական դիրքը սակայն բոլորովին պարզ չէր Ալեքսանտրի աթոռ բարձրացած վայրկեանին: Որդի Քիւլսթութի եւ առաջին կարգի զարմիկ Վլատիսլաւ Թագաւորի, Վիթորիո կը հետապնդէր Լիթուանիոյ ազատագրումը եւ այդ իսկ պատճառով ըմբոստացած էր ընդդէմ իր զարմիկին, դաշնակցելով Թէութոն Ասպետներու հետ անոր դէմ: Հապիւ 1392-ին տեղի կուենայ հաշտութիւն մը երկու զարմիկներու միջեւ եւ Վլատիսլաւ կուտայ Վիթորիոն մը երկու զարմիկներու միջեւ: 1398-էն ան կը կոչուի զուգ կամ մեծ իշխան այս երկրի, որուն միայն մէկ փոքր մասին վրա տէր էր: Բայց 1401-ին անոր իշխանութեան սահմանները կը լայնցըլին, եւ Թա-

դաւորն ու Վիթուրը անբաժան են վարչական բոլոր դորձերուն մէջ:

Նկատելու արժանի է, որ Վիթուրի անձնական յարաբերութիւնները Մոլտովայի իշխանական ընտանիքի հետ աւելի հին են, քան մեր փաստաթուղթը: 1400-ի Մարտին, Փէթրէ Մուշաթինի որդին, որ փախեր էր Բրէշք, Լիթուանիոյ մէջ, ինքզինքը Մոլտովայի ժառանգորդ կոչելով, խոնարհութեան թուղթ մը կուտայ Վլատիսլաւին, ինչպէս նաեւ մեծ իշխան Վիթուրին, որոնց չնորհիւ կը յուսար վերստանալ հայրենական աթոռը: Միւս կողմէ պէտք է նկատի առնենք, որ Ալեքսանտր 1418-ին կամուսնանայ Վիթուրի քոյր Ռինկալա-Մարիայի հետ, որ այրին էր Հենրիկոս Մազովիացիին: Այս բոլոր իրողութիւնները կապացուցանեն Լիթուանիայի կամ Վիթուրի անձի հետ ունեցած ուղղակի յարաբերութիւնները, զուգընթաց այն յարաբերութեանց, զորս Մոլտովան ունէր Փոլոնիայի հետ: Մեծ կարեւորութիւնը դոր կուտայ Ալեքսանտր Վիթուրին՝ իր տէրը կոչելով դայն իր իշխանութեան սկիզբէն իսկ, նախ քան պաշտօնական ողջոյնը, թերեւս ապացոյց է, թէ ուսմանական Երկրի Միրչեայի հետ միասին ուրախ եղած է իր աթոռը բարձրանալու եւ Իուկա-Վոտան քչելու համար ստանալ նաեւ լիթուան դորեղ իշխանի օգնութիւնը:

Փաստաթուղթը, որով Ալեքսանտրու Չէյ Պուն կը հաստատէ Մուշաթայի հայոց եպիսկոպոսը, ինչպէս կերելի, բազմաթիւ պատմական կարեւոր խնդիրներ կը յարուցանէ: Մոլտովայի այն ժամանակայ պատմութեան վերաբերող աւելի շատ փաստաթուղթերու պակասին հետեւանքով կարելի չէ որ անոնք մերձեցանապէս լուծուին, ուստի եւ մենք կը գոհանանք միայն վերը յիշուած ենթադրութիւններով:

Բուքրէշ



ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՏԱՐՕՆԻ ԱՇԽԱՐՀԸ

II

ԴԵՊԻ ՏԱՐՕՆ

Խոր թախիծով եւ շարագուշակ նախազգացումներով համակւած կը մեկնէի Վանէն: Պարտականութիւնը կը հարկադրէր ինձ, այդ վտանգներով յղի օրերուն, բաժնւելու վայրէ մը, որուն ամէն մէկ լեռ-բլուրը, հովիտն ու ժայռը կապւած էին սրտիս պատմութեամբ մը, եւ ժողովուրդէ մը, որուն հետ անցուցած էի երկար տարիներ՝ լեցուն սքանչելի պահերով եւ դառն ու տառապանքով լի օրերով, որ զիւրին չէր ձգել եւ յեղափոխական այն սերունդը, որուն հետ ապրեցայ ու միասնեղ կրեցի յեղափոխութեան կեանքի ծանրութիւնը, զառնութիւնները եւ հոգեկան հաճոյքը: Կը զգայի, որ վերջին անգամը պիտի տեսնէի չէն Վասպուրականը....:

Որոշած էինք գաղտնի պահել մեկնումս ժողովրդէն եւ տեղացի ընկերներէն: Լուր տարածած էինք թէ Աղթամար պիտի երթամ մը տրամադրւի ինձի մինչեւ հոն: Միւս կողմէ, կարգադրած էի, որ մեր հին հայրուկներէն Լօրթօն, որ այդ ատեն ձիապանութեամբ կապէր, մեկնումիս հետեւեալ օրը իրերս բերէ Աղթամար, ուրկէ պիտի ուղեկցէր ինձի մինչեւ Բաղէշ:

Եթէ չեմ սխալիր, Հոկտեմբերի սկիզբներուն էր, երբ ճամբայ ելայ՝ մեր սքանչելի ծովակի եզրէն, ձիերու զանգաղ քայլերով, ստաիկանը հտեւէս: Մաշտակ գիւղի քովէն անցածս պահուն չկրցի զրկել ինձի իմ համեստ, հաւատարիմ զինուոր Գասպարին տեսնելու հաճոյքէն: Շատ երիտասարդ չէր, երբ օր մը եկաւ ինքզինքը նըւերելու յեղափոխութեան. ունեւոր էր եւ ամուսնացած: Մինչեւ վերջը մնաց իր պարտականութեան զլուխը, իսկ սահմանադրութեանէն վերջ վերադարձաւ գիւղը իւր գութանին քովը:

Իմ անակնկալ երեւումէս շփոթած ու անսահման ուրախ՝ գիւղը գլխուս հաւաքեց եւ գիւղով կը ճգնէր համոզել մնալու իրենց քովը։ Մաշտակը ոչինչ գիտէր աշխարհին սպառնացող վտիճարիկներէն - դաշտերէն հօտերը գիւղ կուգային խաղաղ, կտուրներն ճիւղ ու պիտով կը վխտային. միայն Գասպարն էր մտախոհ. չէր կորսնցուցած հայդուկային հոտառութիւնը վտանգի ժամերուն։

-- Պատերազմի հոտ կուգայ, Պարոն. եթէ բլնի, էս շները մեր բուրդը կը գզեն. ըսինք ըստուց դէն դէնքի պէտք չմնաց, էս անգամ էլ աւելի...» կը խորհրդածէր նա, միեւնոյն ժամանակ իւր հարցական հայեացքը ուղղելով դէմքին։

Ոստիկանն ալ հանգիստ չէր։ Ճամբան կողմնակի հարցերով կը ճգնէր խօսակցութիւն սկսել ու վերջը ախ ու վախով դարձաւ ինձ։

-- Պէյ Էֆէնտի օրթան գէշ կը տեսնեմ. նորէն քեաֆի Ռուսը մեր հողիէն վաղ չի գար. վա՛յ մեզի պէս ֆուկարաներուն. չնչին ամսական մը ունիք, որ շան առջեւ ձգւած փշրանքներ են. ի՞նչ պիտի լինի մեր ընտանիքներուն վիճակը, այս խեղճ երկրի վիճակը. Աստուած մեզ օգնութեան հասնի...։

Քաջալերեցի զինքը եւ բաժնեկցայ Ոստանէն, ըսելով, թէ Ոստանէն անդին չեմ ուղեր նեղութիւն տալ իրեն։

Իրիկնամուտ էր երբ մինակս ճամբայ ելայ. ուշ գիշեր էր, երբ ծեծեցի Ախալանքի Աղթամարի Կաթուղիկոսարանի դարպասը, դամբոններու յարձակումներու մէջէն։

Քնաթաթախ դուրս ելան հօտաղները, ապա հին բնակրս՝ Դանիէլ Վարդապետը ուրախութենէն ինք իրմէ ելած, եւ Եղնիկը։ Ըսին թէ նկարիչ Թէրլէմէզեանը եւս 8-10 օրէ ի վեր հոն է ու առաջնորդեցին հիւրասենեակը։ Մինչեւ առաւօտ հարցեր կուտային քաղաքական բնդհանուր վիճակի մասին։ Տաք թէյը կուլ տալով, կը ջանայի բաւարարել։ Անհանգիստ չէին. հաւատացած էին, որ ոռւսթրքական պատերազմի մը պարագային ոռւսները շարաթէ մը Վասպուրականի տէրը պիտի դառնան. անհուն էր այդ երկու վարդապետներուն հրճանքը։ Թէրլէմէզեանն էր միայն քիչ մը յոռետես, վստահութիւն չունէր ոռւսներու վերաբերմամբ եւ կը վախնար, որ մեր ժողովուրդը ոտքի տակ երթար։ Հետեւեալ օրը ցոյց տուաւ ինձ իր նկարած պատկերներուն շատ արժէքաւոր ու գեղեցիկ հաւաքածուն, որոնք բոլորն ալ, դժբախտաբար, կորսնցուց Վանի առաջին նահանջի ատեն։

Հետեւեալ օրը երեւցաւ Լօրթօն իր փառայեղ ձերմակ պիտերով, յաղթանդամ մարմնոյն համեմատութեամբ փոքր ձիու մը վրա։ Ահագին փափախը վար առաւ. «Օխնեա՛ տէր» մը արտասա-

նեց քիչին տակէն իր սովորական հեգնականի նմանող Ժպիտով ու դառնայով ինձ. «Էհլա՛, տէ՛ քէլի էրթանք, էսա վարդապետներու մօտ շատ կենալ չեղնի, կը մատնեն...» ու մանկական քրքիջով մը մօտեցաւ ուտելիքներուն։ Լօրթօն զինուոր եղած էր ինձ հին Նախիջեւանի մէջ հայ-թաթարական բնդհարումներու միջոցին. ինձմէ առաջ հոն էր արդէն, մասնակցած թաթարական լեռնային գիւղերէն մէկու վրա եղած արշաւանքի մը. սպաննած էր թաթար աղնըւական սալառնաթող ժէնէրալ մը, որուն վերարկուն, կարմիր աստոտով, կը կրէր միշտ։ Նշանակած էինք եկեղեցու դիքերու հըսկիչ. փորը դուրս ցցած, զորշ տափակ փափախը գլխին, ձեռքերը ետեւ դրած կը հետեւէր մանաւանդ թաթար անցորդներուն ու շարժումներուն։ Մեծ սիրահար էր քաղաքի բէգերու դէմ կռիւներուն. «Ձոջ շներին պիտի սատկեցնել. ինոնք են մեղաւոր, թէ չէ ֆուքարա, քննոտ թաթարը խեղճ ի»։ Անգամ մը, սակայն, յանձնած էինք դարանէն գնդակահարել տեղի մեծ բէգերէն մէկը, որ ջարդի հեղինակներէն էր. գնաց եւ վերադարձաւ։

-- Վերջացրի՞ր, կը հարցնեմ։

-- Չէ՛, Պարոն։

-- Ինչո՞ւ, այնտեղ չէ՞ր։

-- Չէ՛, էնտեղ էր, համա ձեռքս չգնաց միամիտ իր տեղ նստած մարդը սպաննել . . .

Կարգապահական պատիժ նշանակեցի եւ գէնքը ձեռքէն առի մէկ շարաթ. յոնձնեց, բայց չդադրեցաւ անարդար համարելու պատիժը. «Յեղափոխականը պէտք չէ որ պատի ետեւէ մարդ դարնէ»։

Աղթամարէն դուրս ելլելէ վերջը՝ զգալի եղաւ կարծես, որ Վասպուրականէն կը հեռանամ։ Արեւմտեան Գաւաշը եւ Կարճկանը հին ատեններ իբր ֆետայի այցելած էի թէեւ, բայց ոչ շատ յաճախ։

Գոմս գիշերեցինք. հին չրջիկներէն Վարդանը լրագիրներէն գիտէր աշխարհի վիճակը, բայց մեր ժողովրդի մէջ լաւատեսութիւն մը կար եւ խոր հաւատ՝ դէպի «ոռւսի թուրք» ամենակարողութիւնը։ Տեղեկութիւններ տւին իրենց չրջանի համիտիկներու խմբաւորումներու մասին. յայտնեցին, որ շատերը կը փութապիին եւ գունդերու կէսն իսկ չի ժողովելը։

Հետեւեալ ամբողջ օրը գրեթէ կանցնէինք Կապուտ-Կողի անտառապատ լեռնալանջերէն ձգւող արահետով, որ կախած էր խորշերու մէջ թաւալող ծովին վրա։ Սորփէն այն կողմ կիջնեք տափարակը եւ Խնձորկինէն աստիճանաբար կը բարձրանանք գիշերելու Ուրտափ գիւղը մեր երախտաւոր զինուոր հռչակաւոր «Փա-

լապել» Կարապետի մօտ: Ոչ ոք ունի նա. ախու մը, որուն մէջ դետինը կը դղրտացնէ իր մշտաթամբ նոթոյը, Դաշնակցութեան Մօսինը եւ եւփունջին: Երկար տարիներով նա սովորութիւն ըրած է հրացանը ծունկերուն մէջ դրկած, եւփունջիին մէջ պլլելիլ եւ պառկիլ իր նոթոյին քով կապած տախտակամածին վրա: Երկինքէն իջած էինք անոր համար: Փաթթեցաւ մեզ, համբուրեց ձեռներըս եւ գրեթէ ձեռքերու վրա տարաւ իր մենաւորի դախտին վրա:

Դառնացած էր իր գիւղացիներէն, որ մեղկ են, մոռցած են յեղափոխութիւնը. դանդաղացաւ գիւղի ուխէն, որ կը պառակտէ ժողովուրդը, իր խօսքով «մատնիչ» է եւ «լրտես»: Ամբողջ գիշերը անոր ու Լօրթօյի փափառքը կը լսէի կրակին քով. երկու հին գինակիցները իրենց եւ ազգի ցաւերը կուլային. Լօրթօն կից-կտուր կը պատմէր. «քաղքէն» կուգար, շատ բան պէտք է որ դիտարար. կը պատմէր քաղաքական բարդ խնդիրներն, որ լսած էր դէս-դէնէն. ինքն ալ յաճախ կը խնդար իր ըսածներուն վրա. բայց Փաշապետը խիստ մտախոհ ու լուրջ կը լսէր ու տենդադին լարւածութեամբ հարցեր կուտար աւագ ընկերներու ամէն մէկի մօտին, պատերազմի, կառավարութեան, զօրակոչի, եւն. եւն.: Լուսարաց էր, երբ Լօրթօն նստած տեղը քնացաւ. Փաշապետը թէյ կը պատրաստէր:

— Կարապետ, ի՞նչու չքնացար, հարցուցի ես:

— Է՛, Պարոն, ամէն օր դործս ի՞նչ է: Եւ քաջալերւած նստաւ եւ իր «դէրտեր»ը բացաւ:

Գիւղին մէջ դաւադիրներ կային իր դէմ. կառավարութիւնը անոնց միջոցաւ կուղէր սպաննել տալ զինքը: Ու աւելցուց.

— Պարոն Վառմեանը կնիքը դրկեց ինծի որ Վան էրթամ, համա ես տեղէն չեմ էլնի, չուր մեր դաւաճանն ուխտը չսպաննեմ: Կր խնդրեմ, որ հրաման տաս, ես ինոր հախէն դամ.....»:

Շատ համոզեցի, որ մինակ չմնայ այս անկիւնը, անմիջապէս մեկնի Վան միանալու հին ընկերներուն: Խուսափողական համաձայնութիւն մը տաւ ու հեծնելով իր հրաշայի ձին ինկաւ առաջներս ու ետ ու առաջ քշելով առաջնորդեց մինչեւ Բաղէշի կիրճի բերան գտնուող «խանը»: Վերադարձի պահուն խիստ յուզւած էր: Նորէն կրկնեցի պահանջս անմիջապէս Վան մեկնելու. կէս-խոստում տալով՝ ձին մտրակեց եւ անհետացաւ: Ջարդերէ առաջ խարելով Բաղէշ տարին եւ բանտին մէջ սպաննեցին այդ մարդ-սովորը:

Բաղէշը կը գտնուի դէպի հարաւ. Սյերդ տանող կիրճին մէջ. երկու կողմերէն պատնէշի մը պէս կերկարին հիւսիսէն հարաւ Կոյանի ու Խիզանի եւ միւս կողմէ Մօտկանի ամեհի լեռնաշղթաները:

Լօրթօն, հակառակ իր յարատեւ կենսութեան, ընաւորութեան, լուռ է, մոռաց եւ մոռհոգ.

— Ինչո՞ւ չես խօսիր, Լօրթօ:

— Ի՞նչ խօսամ, պարոն, սիրտս հանգիստ չի. ափսո՛ս մեր մամլաքեաթը . . . ես էլ պիտի գամ հետդ մինչեւ Մուշ. մենակ չեմ թողնի երթաւ էս վայրենի տեղերից . . . :

Գէշ էր ազդուած կիրճի մոռաց տեսքէն: Հակառակ իր յաղթանդամ հասակին, Լօրթօն տղաւորուող էր եւ փութըր զգացումներ ունէր: Արցունքով բաժնեցաւ ինձմէ. «Դաշնակցութեան աստուածը քեզի հետ» արտասանեց կերկրացող ձայնով ու վերադարձաւ Բաղէշէն: Ջայն ալ վերջին անգամ տեսայ....:

Բաղէշ մտայ ուսու-թըքական պատերազմի յայտարարութեան օրը. այդ օրն իսկ Խիզանի Շէյխ Սայիտ Ալիի ըմբոստութիւնը զըսուած եւ անոր պարագլուխներէն Շէյխ Սէլիմը գեռ կը ճօճէր կախաղանին վրա, քաղաքի հրապարակին մէջտեղը: 70ը անցած, երկար մօրուքով ծերունի մը, որ գլուխը մէկ կողմի վրա հակած պարտնէն կախւած էր:

Հայոց թաղին մէջ Սլաքի տունն էր (Արմենակ Յոխիկեան), ուր իջանք:

Սլաքը յեղափոխական հին երախտաւորներէն էր. շատ լաւ քրքրտաղէտ, բազմիցս իբր գործակալ աշխատած էր քիւրտ զանազան աշխրէթներու, եւ գլխաւորապէս Հայտարարացի պետերէն Մուստաֆա բէզի մօտ, որի բնակավայրը Տիատինի Միրզաջան գիւղն էր: Բէզը եւ իր կինը մեր հաւատարիմ բարեկամներէն էին. հոն էր մեր դէնքերու փոխադրութեան գլխաւոր կայաններէն մէկը: Սլաքը մեծ համբաւ կը մայելէր չրջակայ աշխրէթներու մէջ եւ շատ օգտակար եղաւ յեղափոխական գործին: *)

Բաղէշի եւ չրջակայի հայութեան վիճակը, Սլաքի պատմածներուն համաձայն, շատ լուրջ էր եւ վտանգաւոր: Կառավարութիւնը համիտիներու գունդերը լեցուցած էր քաղաքը, որոնք անխիշտանութեան եւ թալանի կը մատնէին շուկան, որ հայերու ձեռքն էր: Նոյնիսկ հայ թաղերն ալ սպառնալիքի տակ էին: Նոյն վիճակը, մերթ աւելի վատաբար, կը տիրէր նաեւ հայ գիւղերու մէջ եւ ճամբաներուն վրա: Միւս կողմէ խառօքն զօրահաւաքի ձեռնարկւած էր հայերու, որոնց մէկ մասը, դաժան պայմաններու մէջ կաշխատեցնէին ճամբաներու եւ նոր զօրանոցներու շինքերու վրա,

*) Անոր մասին ժամանակին պատմած եմ «Հայրենիք» ամսագրի մէջ:

միւս մասը կը շրջէր դէպի հիւսիս. հայերու զօրահաւաքը չարահաճութեան եւ ապօրինութիւններու ենթարկւած էր: Անխնայ բռնադատումներ սկսած էին Բաղէշի վաճառականներէն, եւն. եւն.:

Սլաքը եւ տեղական ընկերները պատմելով այդ բոլորը՝ խորհուրդ տւին այցելել նաեւ առաջնորդին ու անկէ վերջ կուտակալին: Պէտք էին արդէն այդ երկու այցելութիւնները:

Առաջնորդ Սուրէն Գալէմեան երիտասարդ վարդապետ մըն էր, խոշոր, սեւ, վառվռուն աչքերով: Դաշնակցութեան համակիրներէն չէր թէեւ, բայց այդ օրերուն անփորձ ու երիտասարդ վարդապետին համար քիչ օժանդակութիւն չէր ունենալ իր քով ծամանեան խորհրդարանի անդամ մը, որուն առջեւ դոց չէին կուտակալի եւ ուրիշ կառավարական անձանց դուռները: Նա եւս թափեց իր դառնութիւնները, պատմեց իր դիմումներու մասին, որոնք բացարձակ ապարդիւն կը մնային:

Ստացայ տեղեկութիւններ եւ բնութագրի՞ծը նաեւ կուտակալին մասին: Մուստաֆա Ապտիւլ Սալըքը Իթթիհատի դպրոցէն ելած էր, կըթլած, փորձ, խիստ տակտով ու խորամանկ մէկն էր, կըսէին, որ չէր հանդուրժեր հայերուն: Առաջնորդին հասկցուցած էր, թէ վարդապետը պէտք է որ բաւականանայ միայն հոգեւորական պաշտօնով, թէ հայերը, իբրեւ օսմանեան երկրի քաղաքացիներ, արդէն կը վայելեն հաւասար իրաւունքներ, ուրեմն եւ պարտաւոր են ծառայել հայրենիքին ու կրել ծանրութիւնը:

Կուտակալը դիւ ընդունեց որոշ յարգանքով, բայց խիստ վերապահ էր եւ սակաւախօս: 40-էն քիչ մը անց, մօրուքով, ոսկէ ակնոցներու տակէն կը փայլէր իր սուր, որոնող հայեացքը, որ սակայն քիչ անգամ կը հանդիպէր աչքերուն:

Լսեց ինծի ուշադիր ու քաղաքավարի, ապա լսաւ, թէ այդ բոլոր դանդատներուն տեղեակ է ինքը. կը ջանայ ապօրինի եւ անարդար դէպքերուն վերջ տալ, բայց դաժան պահանջը պատեւրադմի պէտք է որ բաւարարւի. բանակին զինուոր եւ պաշար են հարկաւոր, իսկ թիկունքէն կը պահանջէ կարգապահութիւն եւ ամէն տեսակի զոհողութիւններ. «Դուք մէպուս էք եւ ինձմէ ազէկ պիտի գիտնաք - աւելցուց նենդ ժպիտով մը - թէ նման պահերուն ի՞նչ պարտականութիւններ կը ծանրանան ժողովուրդին վրա: Կը խընդրէի ձեզ, յորդորել հայ տարրը, որ կրէ այս օրերու դժւարութիւնները. անտեղի միջամտութիւններ չըլլան կառավարական կարգադրութիւններուն, վստահ եղէք, թէ ես ալ պիտի ջանամ, որ ամէն քայլ կատարելի օրէնքի սահմաններուն մէջ: Աւելորդ չեմ համարեր ձեր միջոցով յիշեցնել նաեւ հայ առաջնորդին եւ կուտակ-



ԱՐՄԵՆԱԿ ՅՈՒՆԿԵԱՆ

(Սլաք)

ցական պետերուն, որ այս արտակարգ պայմաններուն մէջ Հեմ-կրնար հանդուրժել ու եւ է արգելք եւ շեղում մեր կարգադրութիւններէն.....» :

Այսպէս լմնցուց իր յորդորը Բաղէշը ապագայ Հռչակաւոր ջարդարար Ապարիւլ Խալըզը (որուն դէմքը սպառնայի էր այդ վայրկեանին) եւ որ Մուստաֆա Բէմալի ելեւմտական նախարարը դարձաւ հետագային :

Ինծի կը մնար վերադառնալ Սլաքի քով եւ առաջնորդին հետ մեր երկտասարդութիւնը փրկելու ճարը խորհիլ : Ինչպէ՞ս սակայն : Ենթակաները Հնէրկայանայի՞ն զինուորակոչութեան ատեանին : Բայց չէ՞ որ այդպիսիներու ինչքը կը գրաւէին. ծնողները պատանդ կառնէին եւ տունը կայրէին : Կառավարութիւնը որոշած էր մերժել հայերու զինուորական փոխարժէքը (պէտէլ) : Սլաքը այն կարծիքէն էր, որ աչքի ինկած, նեղ պարագաներուն անհրաժեշտ եղող երկտասարդները պէտք էր պահէին. կէս-փախստական պէտք էր որ դառնային նաեւ յեղափոխական եւ հասարակական գործիչները : Վտանդը ակներեւ էր հայերուն համար : Պէտք էր պատրաստուիլ ինքնապաշտպանութեան իսկ ձախողանքի պարագային լիւս ելնել ու Մոսկանի գծով միանալ Սասունցիներուն կամ անցնիլ Կարկառ : Այս կարծիքէն էր նաեւ Վանի «տաճկադէտ» Արմենակը (որու մասին խօսած եմ յիշողութիւններուս մէջ — «Հայրենիք» ամսագիր) :

Սուրէն վարդապետը ընկճւած էր ընդունիլ, անգոր կատաղութեամբ մը համակւած, շատ լաւատես չէր հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան կարողութեան մասին : Ժամանակէն առաջ մեր պատրաստութիւնները ուղադրութիւն պիտի գրաւէին եւ մատնէին ձախողանքի : Նա դանդաճային ջարդերուն չէր հաւատար. հրնարաւոր կը գտնէր սակայն, հայ զեկավարութեան ձերբակալութիւնները կամ աքսորը : Այդպիսիները արթուն պէտք է գտնէին՝ ի հարկին պահելու : Խնդրեցին ինձմէ, որ հեռագրեմ Պոլիս կառավարութեան եւ Պատրիարքարան՝ մեղմացնելու հալածանքը եւ խրատութիւնները : Հեռագիրը աննպատակ համարեցի, բայց հետեւեալ օրը տեղեկագիրներ գրկեցի Պոլիս եւ ըրի շարք մը առաջադրութիւններ :

Այս ամբողջ խորհրդակցութիւններով եւ առաջարկներով հանդերձ, ամենքը բնադրօրէն կը զգային թէ ահարկու վտանգ մը կախած է մեր գլխուն : Հետեւեալ բնորոշ դէպքը պիտի հաստատէ այն նախադրացումը, որ իւրաքանչիւրը ունէր :

Կուսակալը ինծի ոստիկան մը տւաւ ուղեկցելու մինչեւ Մշոյ դաշտի առաջին հայ գիւղը : Ընկճւած՝ բաժնեցայ իմ ընկերներէն

եւ տարաբախտ առաջնորդէն, որոնք քանի մը ամսէն զոհ դացին դարձելի կուսակալի թակարդին: Ոստիկանը ձիաւոր էր, ի հարկէ, եւ կիրճին մէջ, թէ մը վանդուղ կոչւած անապատի տարածութիւնը անցնելու՝ քովէս կերթար, երբեմն այս ու այն կողմէն, հարցեր տալով, բայց երբ Դուդէն իջանք դաշտը եւ արեւը կը թեքէր դէպի արիւղոնը, ձիուն քայլերը դանդաղեցուց եւ ետեւէս 15-20 քայլի վրա սկսաւ դալ: Ի հարկէ, այդ ժամանակ իթթիհատը դեռ վատ-թարազոյն չարութիւնը չէր ծրագրած մեր դէմ, բայց եւ այնպէս սրտիս մէջ կասկած ինկաւ - արդե՞օք ետեւէս պիտի գնդակահա-րէ...: Իբր մէսուս զէնք կրելու ազատ իրաւունք ունէի. առանց մազէր ատրճանակը դեռ Բաղէշի մօտերէն, իր կոթին հալցուցած, ծունկերուս վրա կը պահէի (մը վանդուղը շատ ապահով վայր մը չէր), բայց ինչպէ՞ս կրնայի դիտել ետեւէս եկող ոստիկանին շար-ժումները եւ կանխել զայն, եթէ հրացանը չտկէր ինծի: Երբ կը մտածայի, յանկարծ, նկատեցի իր սուերը, որ քովընտի կրնար միշտ (հորիզոնին մօտեցող արեւը ետեւնուս էր). Հայեացքս ըստ-ւերէն չկտրեցի այլեւս, իր բազուկներու կամ հրացանի ամէն մէկ շարժումը կը տեսնէի...: Այս դիրքին եւ զգացումներու մէջ էր, որ հասանք Մեղրագետի ափունքի վրա գտնուող շատ փոքր հայկական գիւղ մը, որուն անունը, դժբախտաբար, մոռցեր եմ այժմ:

Գիւղի ուսը - Ռէս Յակօն, եթէ չեմ սխալիր, եւ իր բազմա-մարդ ընտանիքն ու եղբայրները կը կաղմէին «գիւղին» մեծամաս-նութիւնը: Պատերազմէն երկու չունէին բնաւ. «բան մը եթէ պա-տահէր, Գրգունն ու Նէմրութը ետեւնին էր, իսկ «Շամբուտը» (Վարդենիսի ընդարձակ ճախճախուտը) առջեւնին... կրնայի՞ն ամ-փոփել իրենց գեղջկական ուղեղին մէջ պատերազմին եւ անոր հե-տեւանքներուն ահաւորութիւնը:

Այդ գիւղէն մինչեւ Մուշ ստիպւած էի մինակս երթալ: Ճամբու ամբողջ երկայնքին հայ գիւղեր էին, իսկ «ճամբան» բարդ չէր: Առջեւս էր Տրմետը, ուր ժողովուրդը տարօրինակօրէն հանգիստ էր դարձեալ. «ասկեար չընք էրթա. թֆընկներս կառնենք, կելնենք դիրքեր», այսպէս կը պատասխանէին իմ հարցին, ցոյց տալով ինձ գիւղի ծայրէն բարձրացող բլուր մը (պատմական արհեստական բլուր մըն էր, որոնցմէ կը գտնւին կարծեմ, ուրիշ գիւղե-րու մէջ): Մկրագոմի մօտ Մեղրագետէն անցայ գիւղացիներու հունով եւ Տէրկէվանքի գեղեցկատեսիլ ճերմակ տուներու ուղղու-թեամբ եւ արտերու ծայրերէն ինկայ խոտհեղ- Մուշ մեծ ճանա-պարհին վրա:

III

ՏԱՐՕՆԸ

Մ'չոյ դաշտի հարաւային եզրին, Սասնոյ լեռնաշղթաներու եւ անկէ գահավիթող ձորի մը մէջ դեռեղւած է Մուշ քաղաքը, որուն շուրջ հայկական թաղերը լեռնաթեւերէն իջած են մինչեւ դաշտին ստերը:

Արեւելեան հին դիւղաքաղաք մըն էր կարծես - փոքրիկ շէնքեր, «տառապաներով» խանութներ եւ աղտոտ, ծուռ - մուռ փողոց մը, որ դաշտէն կը բարձրանար դէպի քաղաքը: Շուկայի մէջէն կանց-նէի՝ լեցուն չըջանի քիւրա հասարակ ժողովրդով, համիտիէներով եւ տեղացի կէս թիւրք, կէս քիւրդ տարրերով: Ակնածանքով ճամ-բայ կուտային ձիուս, կարծելով թէ թիւրք պաշտօնեայ մըն էի: Շուկայի ծայրն էի հասած, երբ ոստիկան մը, որ հեռուէն կը դի-տէր ինձի, մօտեցաւ, բարեւեց եւ հարցուց թէ՝ կրնա՞ր ո եւ է բանով օգտակար լինել: Ըսի թէ Դաշնակցութեան քլիւպը կը փըն-տոէի: Ոստիկանը անմիջապէս խիստ սիրալիւ ժպիտով մը խնդրեց հետեւել իրեն:

Քարքարուտ անպիտան ճամբայ մը կերկարէր ձորի կողերէն. ձիւս դժարութեամբ կ'իջնար: Զորի յատակէն պղտիկ ջուր է մը ան-ցանք. բարտի եւ ուռի ծառերու ետին, կեցանք երկյարկանի տան մը առջեւ: Դաշնակցութեան «քլիւպն» էր:

Ռուբէնին գիտէի Պոլիսէն: Տեղացի կարեւոր ընկերներէն - Կով-կասէն կամ Վասպուրականէն - բաւական թուով ընկերներ կը ճանչ-նայի. կարծեմ Սալմաստ հանդիպած էի Մճօյին. Կոտոյի Հաջիին՝ նոյնպէս հինէն, երկար տտեն Վան մնացած էր, ճեմարանէն՝ Արշակ Միրիջանեանը. Թիմարի «չըջիկ» Հաջին: Մեծ հաճոյք մըն էր ինձ համար նորէն հանդիպիլ Տարօնի հին եւ լաւ ընկերներուն:

Հետզհետէ ափումըր եկան բաղմաթիւ այլ պատասխանատու ըն-կերներ - Գաւառեան Տիգրանը, Միրջանեան Արշակը, Սօլկար Արմե-նակը, երկու Յարօններ, Համադասպը: Առաջին անգամն էր, որ ի-րենց հողի վրա եւ հարազատ միջալայրին մէջ կը տեսնէի Տարօնի ժողովուրդը եւ ընկերները:

Մեծ տարբերութիւն կար Վասպուրականի եւ Դուրանի ընկեր-ներու ընութագծերու, յեղափոխական ըմբռնողութեան եւ հոգե-բանութիւններու միջեւ: Վանցի երիտասարդը կամ ընկերը կը սի-րէ ընդհանրապէս ինքզինքը ցուցադրել առաջին իսկ հանդիպումին եւ իր ունեցած խելքի եւ գիտութեան պաշարը առաջը թափել՝ լաւ

գաղափար կազմել տալու հոգածութեամբ: Իրապէս ալ, ի հարկէ, անոր ըմբռնողութիւնը աւելի լրիւ է եւ գիտակցական. էմպալսիսի է եւ յախուռն իր զգացումներու եւ արտայայտութիւններուն մէջ, մինչդեռ Տարօնցին չի սիրեր, մանաւանդ նոր միջավայրի կամ անձի առջեւ, ինքզինքը ցուցադրել. դանդաղ են իր շարժումները, սա- կաւախօս է եւ դիտող: Իւրայայտուկ փիլիսոփայի մը կշիռով, վե- րապահ է ու քիչ բաւերով շատ բան կըսէ. պիտի հասկնաս. կամ կը խօսի, իր իրական միտքը ծածկելու համար. պէտք է լաւ ճանչ- նալ զայն, հասկնալու եւ մանաւանդ տարբերելու համար անոր ի- րական իմաստը: Մէկ խօսքով, աւելի բարդ է անոր տիպը. հասա- րակական խնդիրներու ըմբռնողութիւնը նախնական է թէեւ, բայց խստօրէն ճշդեամբ, որուն յամառօրէն կը հաւատայ ինք: Իւրայա- տուկ սքանչելի ոճ մը ունի, նուրբ երգիծանքով եւ հեղանքով լի: Ինձի կը թւի թէ Մշեցին է հին հայի իրական տիպը, իր բնածին ի- մաստութեամբը: Երկար ատեն պէտք էր ընտելանալու եւ մանաւանդ ճանչնալու Դուրանի ընկերներուն. առանձին արեւստ մըն է անոնց հետ վարելու եւ խօսելու կերպը: Մեր կուսակցութեան կազմա- կերպութիւնն ալ հոն տարբեր երանդ եւ ձեւեր ստացած էր: Դուրանի ժողովուրդը իր յատուկ կնիքը դրած էր մեր կուսակցութեան դա- ւանանքի, մտածողութեան եւ կազմակերպութեան վրա, որ էջը նը- մանէր այլ տեղերուն:

Դաշնակցութիւնը կրօնական դաւանանք մըն էր դուրանցիներ- րուն համար. կուսակցական զեկավարները այդ սրբազան կրօնի քուրմերն էին իրենց բոլոր ստորոգելիներով: Զանգեզուրէն դաշ- նակցական էին ամենքը, դաւանութեամբ դաշնակցական: Անոնց չէր հետաքրքրեր ծրագիրը եւ այլն: Լաւ գիտէին միայն, որ Դաշնակցու- թիւնը նւիրած է հայ Հայրենիքի եւ ժողովրդի ազատագրութեան. Դաշնակցութիւնը ապգն է: Անոր անդամ եղողը զինուոր մըն է, որ կուրօրէն պարտական է ենթարկուիլ պետի հրամանին կամ «կարմիր կնիքին», որ զինուորագրւածը համակ զոհողութիւն պէտք է լինի. երիտասարդութիւն, սէր, ծնողք, տուն - հարստութիւն դոյութիւն չպիտի ունենան անոր համար. աղքը եւ զէնքը իր պատիւն են, - ա- հա բովանդակ ըմբռնողութիւնը Դաշնակցութեան մասին: Արդէն մեր ըմբռնած կազմակերպութիւնը հոն դոյութիւն ալ չունէր: Իւ- րաքանչիւր զիւղին մէջ կազմակերպութիւնը «կոմիտէ» մը ունէր, այսինքն անհատ մը, որուն մէջ կը մարմնանար կուսակցութիւնը. այսինչ զիւղի Մկրտիչը, Մանուկը, Պետրոսը, Ղազարը մէկ-մէկ «կոմիտէ» էին, որոնք սովորաբար բնական ներկայացուցիչները կը համարէին ամբողջ զիւղին: Կուսակցութեան ընդհանուր ղեկավա-

րը ասոնց միջոցով կարգադրութիւնները կընէր: Զեւական էր նաեւ Կ. Կոմիտէի դոյութիւնը. Բիւրոյի ներկայացուցիչը տէրն էր եւ կարգադրողը բոլոր խնդիրներու: Դրեթէ ամէն զիւղի մէջ ունէինք նաեւ հին, արժէքաւոր ֆետայիներ, մարդած բաղմաթիւ կուռներու մէջ, որ խաղաղ զիւղացիներ էին դարձած՝ նւիրած օրւան ապրուս- տին եւ ընտանիքին, սակայն ականջնին միշտ Դաշնակցութեան ձայնին էր. պէ՞տք ունէին իրեն - ալ անոր աչքին ոչինչ կուգար, տրեխը կը կապէր, հրացանը ուսին, դաժան մտասեւեռումով մը կը քայլէր հոն, ուր պէտք էր: Այսպէս էր Դուրանի առասպելական մարդը: Սասունցին թէեւ կը տարբերէր Դուրանցիէն իր աննկուն յամառութեամբ, վճռականութեամբ, աւելի - յախուռն էր եւ յան- դուզն, բայց նոյն տիպի դաշնակցականն էր եւ Սասունցին:

Դաշնակցութեան ակումբը նախապէս կարծեմ բժիշկ Զավրեա- նի հիւանդներու ընդունարան էր եղած: Շէնքի կէս յարկ բարձրու- թեան վրա, փոքրիկ սենեակի մը մէջ տեղաւորւած էր դրաղարան - ընթերցարանը, ուր կը ժողովէր քաղաքի պատանեկութիւնը: Վարը ախոռն էր, իսկ վերի յարկը հինգ սենեակ եւ մի սրահ ունէր: Սենեակներէն մէկը իւր խոհանոց կը դործածէր, երկրորդը բժ- Զավրեանի դործիքներու եւ զեղերու պահեստն էր, միւս երկու սեն- եակներու մէջ, մենք էինք տեղաւորւած, իսկ հինգերորդը հիւրա- սենեակի յատկացւած էր. հոն էր որ կընդունէինք թիւրք պաշտօն- ականներու այցելութիւնը: Ակումբի «կառավարիչը», խոհարարը, ձիապանը, սուրհանդակը մեր հաւատարիմ Պօղոսն էր. մեզմ, բա- րեհամբոյր երիտասարդ մը, որ շառուրնէ մինչեւ իրիկուն անտըր- տունջ կը կատարէր տունի եւ դուրսի գործերը, յաճախ գաւառէն եկած ընկերներուն կուսակցական խորհուրդներ եւ թելադրութիւն- ներ անգամ ընելով...: Քիչ անգամ կը ճաշէինք առանձին. իսկ առ- հասարակ քաղաքի թէ շրջանէն եկած հին ընկերները կը սեղանակ- ցէին մեզի ամբողջ օրերը հոն անցնելով: Իրիկունները միայն կը մնայինք առանձին Ռուբէնի հետ եւ մտահոգեալ բարդացող քաղա- քական վիճակի մասին միտքերու փոխանակութիւն կունենայինք օրւան զէպքերու, տեսակցութիւններու առթիւ:

Ակումբէն քիչ վեր, բլուրի լանջին Սուրբ Մարինէի թաղի դե- րեզմանատունն էր, որուն մէջ հանգիստ կառնէին Տարօնի արծիւ- Գէորգ Զաւուչի ոսկորները...:

Հօկտեմբեր եւ Նոյեմբեր ամիսներուն յաճախ մեծ ու փոքր ըն- կերները կը ժողովէին մեր ակումբը զրոյցի: Խիստ կը հետաքրք- րէին քաղաքական եւ ռազմական անցուղարձերով: Օրւան աղե- տալի չարիքը զինուորագրութիւնն էր, որ կը մտահոգէր ժողովուր-

տան, ցրելու համար դէշ տրամադրութիւնները եւ չխուսափին զին-
ւորութիւնէ:

Հասկցուցի իրենց, թէ ես Մուշ կը գտնուիմ իրրեւ մէտուս եւ
թէ հիւր եմ. կրնամ միջնորդի դեր կատարել անշուշտ իրենց եւ
Դաշնակցութեան միջեւ: Միայն վստահ կրնամ ըսել, որ հայ ժողո-
վուրդը եւ Դաշնակցութիւնը ռուսահայերու այդ շարժման հետ ոչ
միայն ոչ մէկ կապ ունին, այլ եւ հիմնովին հակառակ են: Իսկ
Թիւրքիոյ մէջ անոնք իբր պարկէշտ օսմանեան քաղաքացի, իրենց
վրա ինկած բոլոր պարտականութիւնները հաւատարմօրէն պիտի
կատարեն: Զինւորութիւնէ խուսափելու խնդիրը, ըսի իրենց, ընդ-
հանուր է. քիւրտերը եւ Մուշի բնակիչները նոյնպէս կը խուսափին:

Այս բոլոր խօսակցութիւնները, ի հարկէ, երկուստեք կը կա-
տարէին փոխադարձ գաղտնի տրամադրութիւններն ու քայլերը
հասկնալու դիտաւորութեամբ: Զիս հետաքրքրող հարցերէ կը խու-
սափէին: Տեղական մէկ քանի ընկերներուն յանձնարարեցինք, այս
առիթէն օգտուիլ եւ յաճախել իթթիհատական քիւլաք եւ չըմանները:
Բայց օգուտ մը չունէր, քանի որ դաւադրական ծրագիրները եւ
գաղտնի կարգադրութիւնները կը պատրաստուէին վերը, լերան
կրճէին ամրացած փարամազի քէօշկի կամ Հաջի Մուսայի «օտայի»
մէջ, Հաջի Իլիասի անմիջական ղեկավարութեան տակ:

Բռնադրաւումները սկսան եւ մեծ թափ ստացան արդէն Դեկ-
տեմբերի սկզբին, երբ, մանաւանդ Մուշը դարձաւ կեդրոն պահես-
տի ուժի կազմակերպման: Տիգրանակերտէն, Պարբերդէն, Ճապաղ-
ջուրէն, Կինճէն, Հաղոյէն ժողոված ընտիրներու խումբներ կը բեր-
ւէր ամէն օր: Քաղաքի մզկիթներու, դպրոցներու, խաներու մէջ
այլեւս տեղ չէր մնացած: Զրեց զօրանոցները կարդի կը դրէին հոն
եւս լեցնելու համար: Բէտիֆ գունդերու կազմութեան ղեկավարու-
թիւնը կը տեղաւորէր քաղաքի բռնադրաւում տուններուն մէջ: Շտե-
մարանները կը լեցնէին գիւղերէ յափշտակուած եւ գիւղացիներու
սայլերով եւ անասուններով փոխադրուող հացահատիկներով. չուկան
աւերակի էր վերածուած. խանութները դատարկ էին. կեանքը մե-
ռած:

Այդ օրերուն էր, որ դէշ լուրեր կուգային ռուսական սահման-
ներէն - Էնվէրի սարսափելի պարտութեան գոյժը: Պուճապը ահա-
դին էր: յուսահատութիւն կը թաղաւորէր. համիտիէ գունդերը, ո-
րոնք, հազար մէկ զժաւորութիւններով ժողոված էին - բաղմաթիւ
գայթակղեցուցիչ խոստումներով, անշուշտ թալանի - դիշերները
կը ցրէին նորէն իրենց գիւղերը կամ լեռներու մէջ կանհետանա-

յին: Մուսա բէգը եւ իր եղբայրները, որոնք նոյնպէս պատրաստ-
ւած էին ճակատ մեկնելու, գաղտնօրէն ցրեցին գունդերը, եւ Մու-
սա բէգը «հիւանդացաւ»:

Մէրվէթ պէյ եւ քիւլաք համակ գործունէութիւն էին. պաշար
եւ մարդ պէտք էր հասցնել: Դեռ ոչինչ չսովորած նորակոչները
փութով ճակատ կը դրկէին ցնցոտիներով ու անօթի. անոնց մեծ
մասը ճամբաներուն վրա կիյնային պաղած. տեղը նորեր կը բեր-
ւէին անընդհատ:

Միւթէսարըֆը այդ ատենն էր, որ դիմեց ինձի ստանձնելու
ճակատին մթերք հասցնելու համար կազմած յանձնաժողովի նա-
խագահութիւնը. . . . Մերժել անհնար էր: Ընկերները թելադրեցին
ընդունիլ, թերեւս մէջէն աւելի օգտակար լինէինք:

Կառավարութիւնը տեսնելով որ մեծ յոյս չկայ հայ նորակոչներ
ժողովելու, ճակատը (մինչեւ Պուճա) մթերք դրկելու խմբեր կազմեց
- «ամէլիա թալուրներ» եւ առաջարկեց, որ հայերը դռնէ այդքան
աջակցութիւն բերեն երկրի պաշտպանութեան գործին: Այդ յանձ-
նաժողովի մէջ կը մտնային 8-10 հոգի տեղացի երեւելիներ եւ եր-
կու սպաներ: Դժուար չեղաւ այդ ձեռնարկի համար քանի մը հարիւր
հոգի հաւաքել. նախ կը թւէր թէ պարզ երթեւեկութիւն մըն էր:
Նախապէս որոշեցաւ բեռան ծանրութեան չափը, սնունդի պայման-
ները. ճշտեցան հանգստի եւ գիշերելու իջեւանները (մէնզիլ) ու
փոխադրութիւնը սկսաւ: Այդ ատեն (Դեկտեմբերին) չկար դեռ
ջարդի ծրագիրը, ատու հանդերձ սոսկալի էին բեռնատար (չալա-
կաւոր) հայերու քաշած նեղութիւնները: Ամէն մէկ մեկնող խումբին
հետ, մեր կողմէ անպաշտօն տեղեկատու մը կը գնէինք, որոնք նը-
կատուած թերութիւնները կը հաղորդէին մեզ: Առաջին խումբը վեց
օրէն վերադարձաւ. դժգոհութիւններ ունէին, ի հարկէ, նեղու-
թեան, սնունդի, վարեցողութեան մասին, որոնք այնքան ալ մը-
տահոգիչ չէին: Բայց, հետզհետէ, երբ ձմեռը սաստկացաւ, ձիւնը
խորացաւ եւ բուքերը սկսան, անհանդուրժելի դարձաւ կացութիւնը.
ճամբան մեռնողներ եղան. իսկ մեծ մասը կը վերադառնար հիւժւած
եւ հիւանդ:

Հայերու նման մասնակցութիւնը - բանակի պիտոյքներու դրաւ-
ման եւ փոխադրութեան - բոտ երեւոյթին գնահատութեան կարժա-
նանար, եւ կառավարական խստութիւնները այդ խնդրոյն մէջ առ
երեւոյթ կը մեղմանային. սակայն միւս կողմէ անոր անուղղակի
քաջաբերութեամբ, աւելի լայն ծաւալ կը ստանային պատերազմէ
խուսափող աշիրէթներու սխրագործութիւնները հայ գիւղերուն
մէջ. անհատական եւ նոյնիսկ հաւաքական (Յրօնք եւն. տեղեր) ըս-

պանութիւնները յաճախակի դարձան. տուրքերը ամենայն խստութեամբ կը ժողովէին, հացահատիկի դիւնորական թաւանը կը շարունակէր: Տեղ-տեղ մերիններուն մէջ արդէն իսկ ըմբոստութեան եւ ընդդիմութեան դէպքեր տեղի կ'ունենային: Աղղային եւ կուսակցական շրջանակներու կարծիքը այն էր, որ մեր կողմէ ո եւ է առիթ պէտք չէ տալ, ընդառաջ պէտք է երթալ, ըստ կարելոյն, կառավարութեան պահանջներուն, ջանալով վարչական եղանակով մեղմացնել կամ առաջն առնել ապօրինութիւններու: Սակայն, ալ չափը կանցնէր. մեր համբերութիւնն ալ կը սպառէր, մահաւանդ, երբ տեղեկացանք, որ Զիպրանցիները հայ գիւղերու ասպատակութիւններէ վերջը, քաղաք են հրաւիրւած եւ հիւրասիրւած են միւթէսարըֆի կողմէ: Խիստ լեցւած էի. Խարախանեանք անյուսպ դայրոյթով համակւած, կողէր երթալ բողոքելու. այդ վիճակին մէջ չթողինք որ երթայ: Հանդիպեցայ Միւթէսարըֆին հեռագրատան մէջ, երբ ուղիղ հեռագրութելով կապւած էր Պօլսոյ հետ:

Պահ մը վերջ մօտեցաւ ինծի իր սովորական ժպիտով եւ գոհ երևոյթով: Խօսակցութիւնը սկսաւ մեղմ, բայց երբ իմ բողոքներուն, նա պատասխանեց չոր ու քիչ մը հեղնութեամբ, բսելով թէ անխուսափելի են նման դէպքեր պատերազմի միջոցին եւ թէ պէտք չէր խռովելի, ու դարմանք յայտնեց որ այս տարրական բանը հայերը չեն ըմբռներ, այլեւս չկրցայ զսպել ինքզինքն եւ սովորական քաղաքավարական դարձածքներ մէկ կողմ դնելով, ամենաբոլոր կերպով յարձակեցայ վրան, բսելով, թէ աւաղակները կը քաջայերէին, թիկունքը կը մտանգէի այս քաղաքականութեամբ, թէ հայերուն խորթ կը նային եւ ուժիւմը Համիտեան ուժիւմէն աւելի մատ դարձած է: Չեմ յիշեր այլեւս մանրամասնութիւնները. այն դիտեմ միայն, որ Միւթէսարըֆը պահ մը ինքնիրեն կորսնցուցած, շարած կը լսէր ինծի. քանի մը անգամ փորձեց իր սովորական ջղային ճրգճրգոցներով ազդել, բայց ես անկէ աւելի կը գոռայի: Վերջապէս, ինքն իրեն շուտով ձեռք առաւ եւ խոստացաւ վերջ տալ երկրի անիշխանութեան: Կողմնակի մարդը միայն հեռագրատան միւտիւրն էր, մանեցի կէս խափիկ մէկը, որ ի դարմանս իմ, նկատելի գոհունակութիւն կը զգար իմ յարձակումներէն: Այս մարդուն մենք պիտի հանդիպինք դարձեալ: Այս տեսակցութիւնէն եւ միւթէսարըֆի վերաբերմունքէն ես դէ, նախադրողութեան հետացայ: Շատ բան չփոխեցաւ այդ օրէն, ի հարկէ. միայն միւթէսարըֆ Սերպիթը, ինչպէս յետոյ տեղեկացայ միւտիւրէն, բողոքած էր Պօլսոյ իմ «միջամտութիւններուն» դէմ, որովհետեւ քանի մը օրէն Խորհրդաբանը հեռագրով կը կանչէր զիս:

Անկարելի էր այլեւս մնալ. միւթէսարըֆը անձամբ եկաւ յանձնելու հեռագիրը, աւելցնելով սիրալիօրէն թէ ամէն գիւրութիւններ պիտի տայ ինծի՝ ապահով Պօլսոյ հասնելու. քաղաքավարութեամբ կաքսորէի երկրէն:

Ծանր ազդեց մեր շրջաններուն վրայ իմ մեկնումիս հրամանը. լաւ թէ դէշ կապ մըն էի կառավարութեան հետ, քանի որ իշխանութիւնները կը խուսափէին առաջնորդին հետ քաղաքական կամ գիւնորական խնդիրներու առթիւ ո եւ է յարաբերութիւն պահել: Ռուբէնը լեզւի եւ իր անհատական հակումներու տեսակէտէն, չէր կրնար այդ դերը կատարել: Ծանր մտահոգութեամբ կը մեկնէի: Վերջին մեր խորհրդակցութեան մէջ սակայն թելադրեցին ինծի երթալ Ս. Կարապետ եւ հոն սպասել. եթէ ձիւնը եւ բուքը ներքէ, կրնամ շարունակել, եթէ ոչ՝ պէտք չէ վտանգել ենթարկել, որովհետեւ այդ ամիսներուն Կինճի կամ Օղնուտի ճամբաները անանցանելի կը դառնան:

Շեխանի եւ Զիպրէթի ճամբով, չեմ յիշեր որու առաջնորդութեամբ, Դեկտեմբերի վերջին օրերէն մէկը, բարձրացայ Ս. Կարապետ վանքը: Ահագին ձիւն էր եկած. արահետէ մը կը յառաջանայինք:

Առաջին անգամ կը տեսնէի Տարօնի համբաւաւոր Վարդան վարդապետը - յեղատիւական վէթէրանը դեռ 90-ական թւականներէն: 60-ին մօտեցած այդ սասունցին (Ահարօնքէն), ընկոյզի կոճղի կը նմանէր - հաստատուն եւ ամբակալմ. ճերմակ մօրուքի մազերը անիշխանական փութկոտութեամբ բուսած էին իր թուշերէն եւ կը զակէն. մանր, առոյգ աչքեր ու թափանցող հայեացք, որ շարունակ վրայէդ կանցնէր թափով: Դժուար է տալ անոր բարդ բնութագիծը. Սասունն ու Տարօնը անոր մէջ էին խտացած. Գեղամ եւ նա խիստ շատ ընդհանուր գիծեր ունէին: Զերմութեամբ ողջագուրեցաւ հետը եւ մէջքէս գրկած առաջնորդեց իր հիւրասենեակը: Դուրս գլխի այդ ժողովրդական իմաստուն մարդուն հետ երկար խօսեցանք երկրի վիճակէն, պատերազմէն, ուսական բանակի կամաւորութեան մասին: Այնքան երջանիկ հեռանկար էր անոր համար վերջիններուն կողմէ Տարօնը նաւաւելու միտքը, որ չէր ուզեր հաւատալ ու կը կրկնէր անընդհատ՝ «վախճամ չը տեսնենք...»:

Դեռ հաղիւ հանդստացած, լուր բերին թէ Զիպրէթի միւտիւրը կուգայ ձորէն: Վարդապետը խոր հառաչ մը արձակեց, կատաղութիւնով լեցւած հայեացքը երկինք ուղղեց ու սրտի խորքէն մըմընջաց՝ «Անիծեալ լինիս»: Զէր ուղեր, որ միւտիւրը տեսնէ զիս: Քուլի սենեակը անցայ, ուրիշ կրնայի գիտել հիւրասենեակը: Միւտիւ-

ըը լակոտ մըն էր - երկայնահասակ եւ նիհար: Ելած էր քննելու չըջանի պաշարի հաւաքման դործը եւ, իր ըսելով, «ղիարէթի եկած էր վանքին եւ մուրախաս էֆէնտիին»: Ամբարտաւան ու լկտի այդ սրիկան խօսակցութեան ընթացքին լրբօրէն եւ հռհռալով կը պատմէր վարդապետին իր բռնութիւնները, վարդապետը ձեռքերը իրար միացուցած, գլուխը մէկ կողմ հակած եւ գետին նայելով «է՛հ, երբեմն պէտք է խիստ ըլլալ էֆէնտի, բայց շատ անգամ քաղցրութեամբ աւելի լաւ արդիւնքի կարելի է հասնիլ» ու նման զգոյշ եւ ընդհանուր դիտողութիւններով կը բաւականանար: Այդ միջոցին էր որ իր ոստիկաններէն երկուքը ներս բերին հայ մը. ոչսն էր գիւղի մը: Լսեցի միայն միւտիւրին անոր ուղղած կարճ հարցերը, ապա կրակ կտրած վեր թռաւ եւ ձեռքի մտրակով անխնայ հարւածներ կը տեղար դէմքին ու մարմինն: Սոսկալի ցաւերէն ոչսը կոռնար, կը պաղատէր...: Վարդապետը մահու չափ տօգոյն, բեւեռած էր դեմին ու իր ձեռքերը կը կոտրտէր յուղմունքէն ու զայրոյթէն, միեւնոյն ատեն անհանդիստ ու պաղատական հայեացք կը նետէր իմ սենեակի կողմը. կը վախնար թէ դուրս գայի սենեակէն՝ չհանդուրժելով այդ վայրենի տեսարանին: Սակայն, պէտք էր դիմանալ: Քիչ յետոյ, երբ միւտիւրը իր ճաշը լափելով կը հեռանար, լարած ճիւղերէ թուլցած ու գունատած վարդապետը, ինկաւ իր բազմոցին վըրա ու կերկերուն ձայնով մը կրկնեց «նորոված իժեր. Աստուծ ալ չկայ. մեղա՛ քեզ Տէ՛ր, չե՞ս տեսնար մեր քաջածնները...»: Ապա երկարօրէն բացատրեց իր քաղաքական հայեացքը եւ հարկադրական վարեւակերպը թիւրքերուն հետ: «Քանի որ ոյժ չունինք ճակատէն կամ դաւադրօրէն զարնելու իժերուն, պէտք չկայ սուր եւ յախտուն քայլեր ընել. պէտք ենք հանդուրժել. ժպտալ անոնց. խաբել, ցոյց տալով թէ երբեք չենք խորհիր դաւել իրենց, թէ ըստ ամենայնի հաւատարիմ կը մնանք. պէ՛տք է այս, որպէսզի մեր պատրաստութիւններու ատեն չխանգարեն մեզի, քանի որ զօրաւոր են եւ ձեռքերնին երկար է: Կորստարեն է մեր գանդատները ցուցական եւ ըմբոստութեան ձեւով արտայայտել. համբերել ու պատրաստել. տալ ինչ որ կուզեն ու սպասել պէտք է դուրսի օգնութեան...»:


Վարդան վարդապետի բերնով կը խօսէր դառն դասեր ստացած ու զազազած Հայ ժողովուրդը: Այսպիսի տեսակէտներ արտայայտող այդ մարդը, սակայն, կը պատմէին ինձ, թէ երբ կը լսէր Հայ Ֆետայի մարդը, եւ կը կշտամբէր մոլեռանդօրէն մեր տղաներն՝ «Չկրցա՞ք այդ նզովից արմատներու քէօքը կտրել»:

Սոսկալի ձիւնախառն փոթորիկը կոռնար պարիսպներու երկայնքին. ճամբաները կանգուններով ձիւն էր նստած. բացարձակ անկարելի էր առաջ գնալ: Կը մնար վերադառնալ Մուշ:

Քանի մը օրէն, մեծ դժուարութիւններով, վերադարձայ Մուշ-
այցելեցի միւթասարըֆին. զիտէր արդէն, թէ ժամանակ մը անհը-
նար է ճամբայ ելլել: Ի պատասխան ստացածս հեռադրի, յայտնեցի
ճամբաներու փակած լինելը, եւ աւելցուցի, թէ պատեհազմի այս
դժուար օրերուն պիտի մնամ հոն:

1915-ի Նոր Տարին կը մօտենար : Զարագուշակ այդ տարին կը սկսէր սեւ նշաններով, որոնք ծանր մտահոգութիւն կը պատճառէին Տարօնի աղբայրին եւ յեղափոխական ղեկավարներուն :

Փարիզ (Շարունակելի)



համաձայն, առաջարկը բնական էր, բայց, ի հարկէ, իրագործելու հնար չկար:

Փիրանեանը գտնուծ էր անհրաժեշտ թաղից աննկատելի կերպով փոքրերին, աղջիկներին յունաց թաղ փոխադրել, այնտեղ ժամանակաւորապէս մնալու համար:

Ֆնտկլեանը ծիակ ելքը համարուծ էր ինքնապաշտպանութիւնը և առաջարկուծ էր թաղուծ եղած պէնքերը հաշիւ առնել, դիրքերի բաժանել եւ օգտագործել եղած ուժանակային նիւթերը:


Վերջին երկու առաջարկութիւնների պէս առարկութիւններ չկային: Յատկապէս անհրաժեշտ համարեց անմիջապէս ինքնապաշտպանութեան համար ձեռք առնել միջոցներ, որովհետեւ ոչ ոք չէր ծտածուծ տեղահանութեան վիւակին ծրագրի ծասին, այլ ենթադրուծ էր հին ջարդերի պէս մի բան:

Ժողովից չորս-հինգ օր յետոյ, գիշերը, ձերբակալեցին Փիրանեանին, Թերզեանին և Պօղոսեանին: Ֆնտկլեանը խուսափել էր և պահել ինչ որ յունական գիւղուծ: Այսպիսով Կեղրոնեան Կոմիտէի անդամներից թաղուծ փաստօրէն մնաց միայն Տիգրան Քիւրքչեանը:

Այժմ այլեւս տարակոյս չկար, որ ձերբակալելու են նաև ինձ: Արդէն փոլիս Հաճին քայլ առ քայլ հետեւուծ էր ինձ, այնպէս որ, յաճախ պէս առ պէս էինք գալիս և սիրալիր բարեւներ փոխանակելով՝ բաժանուծ: Մօտիկներից Կապտանեանը խորհուրդ էր տալիս փախչել, կած որ և է տեղ թաքնուել: Բայց ինձ համար շատ պարզ էր, որ այդ կարող է պրօվօկացիայի նիւթ դառնալ առաջին հերթին դպրոցի և ուսուցիչների համար: Եւ իսկապէս նոյն օրերին Հաճին դպրոցուծ ինձ մի թուղթ տւեց ստորագրելու, որի համաձայն ինձ արգիւլուծ էր թաղից հեռանալ: Այս կէս բանտարկած որի համաձայն ինձ արգիւլուծ էր թաղից հեռանալ: Այս կէս բանտարկած վիճակի մէջ մնացի ծօտ տասը օր, որի ընթացքուծ կարողացել էի մի քանի յանձնարարութիւններ անել Յակօբ Գալստեանին Հ. Յ. Դ. Կոմիտէի հանած որոշումների իմաստով:

Անտոյգ վիճակը հարկադրուծ էր դասաւանդութիւնը արագացնել, օր առաջ դպրոցը փակելու համար: Գլխաւոր ուշադրութիւնը կեղրոնացած էր վերջին ծրոյ դասարանի վրա, որի աշակերտութիւնը՝ ծանչ, աղջիկ միասին 24 հոգի՝ դպրոցի նոր, ընդարձակ ծրագիրը անցած անդրանիկ շրջանաւարտները պէտք է լինէր: Բայց հակառակ ուսուցչութեան ջանքերին գործը մնաց կիսատ...

Ապրիլի վերջերն էր, երբ ձեր հարեւան Քրիստոստուրի կինը շնչասպառ դպրոց ծտաւ և յայտնեց, որ ինձ ծօտ խուզարկութիւն կայ: Թէեւ



ՆԵՍՏՈՐԱՊՈՒՄՈՒ ՎՈՅԳՆՆԵՐՈՒՄՈՒ ՎԵՐԱԳՐՈՒՄՈՒ ՎԵՐԱԳՐՈՒՄՈՒ

Ծանր ճեջ, ի հարկէ, ոչինչ չէին դտել, եւ ծխածառութեամբ վարդոյից
դէպի ոստիկանութիւն գնալով՝ մտածում էի, թէ ի՞նչ կարող է լինել ճե-
ղագորանքը։ Ամենից վատը ընկերօջ՝ Վահանի ձերբակալութիւնն էր։ Վա-
հանը հիւանդ էր, քայքայւած ու ջղայնացած, երկար ժամանակ էր կնոջից,
էրեխայից լուր չունէր։ Նախ քան ձերբակալութիւնը ծի քանի անգամ
զրկեմ էի պարսկական հիւպատոսին ծի կերպ նրան Կիրասոն ճամբելու հա-
մար (Վահանը նոյնպէս ապրում էր պարսկական անցադրով), բայց անօ-

գուտ։

Բանտային այն բաժինը, ուր տեղաւորեցին ձեզ բաղկացած էր դէ՛ս առ
դէ՛ս կառուցւած երկու շէնքերից, որոնք իրարից բաժանուած էին երկար
քառակուսի բակով։ Բակի կողմնում կառուցւած էր մի շատրւան, որը
ջուր չունէր։ Ձախ կողմի բարձրադիր պատը բաժանում էր ձեզ բանտի
միւս բաժանմունքներից։ Այլ կողմում բակի դրան ձօտ մի նստարանի վրա
տեղաւորւած էր բանտի անհրապոյր հովիչը և Հերթով դիտում էր ձեզ մեր
տեղաւորւած էր բանտի անհրապոյր հովիչը և Հերթով դիտում էր ձեզ մեր
ձեզ դիմացի շէնքը։ Մեզ յատկացել էր բաւականաչափ ընդարձակ, ոչ
այնքան մաքուր, բայց չոր մի սենեակ։ Լայն ու բարձրադիր թախտերը
սենեակին տակն էին աւելի շուտ հանրակացարանի, քան բանտի ապաս-
տանքին Դժար չէր հասկանալ, որ մեր յարկաբաժնում մեզանից զատ
մաշոկ չկար։ Մենք էր հասկանալ, թէ ո՞վ կայ դիմացը։ Երկար չտեսցա
անասուգութիւնը, պատահանի ձօտ յայտնեցին առաջ թերղեանը, յետոյ
մի անհրապոյր երկու հսկայ շէնքերում մեզանից բացի մարդ չկար. բանտը,
գտնէ մեր բաժինը, պարտաւ էր։

... Եւստի օրներոնքին և ուրքան էլ

[illegible]

էր, անտանելի տօթ: Բառիս բուն առումով օդ չկար շնչելու: Գիշերները ճէկ-երկու ժամից աւելի չէի կարողանում քնել: Եւ ահա այդ արձիճի պէս ծանր գիշերներէց ճէկին, երբ սաստիկ գլխացաւից տառապելով նստած էի բաց պատուհանի առաջ, յանկարծ, լսեցի ծի աղօտ ձայն: Առաջին զգացումս այն էր, որ զլուխս է տմբածբում, բայց ձայնը գնալով որոշում էր — «Դո՛ւմ, դո՛ւմ, դո՛ւմ, դո՛ւմ»...

Հարում եմ բոլոր ուշադրութիւնս: Օ՛, ոչ, այլեւս կասկած չկայ. «Դո՛ւմ, դո՛ւմ, դո՛ւմ, դո՛ւմ»...

Սկսեցի հազնել: Ձայնը գնալով ուժեղանում էր. «Դմբբ, դը՛մ, դը՛մ, դը՛մ, դըմբբ, դըմ, դը՛մ — դը՛մ, դըմբբ, դը՛մ, դը՛մ-դը՛մ»...

Հարեւան սենեակում ձայր ու աղջիկ խօսում են շնչասպառ, ինչ որ քաշքշում են: Ձայնը այժմ պարզ ու որոշ է. թմբկահարութիւն է: Ներս է մտնում սարսափահար Ալեքսանդր-հանումը:

— Պարոն Վահան, այս ի՞նչ է...

— Պարոն Վահան, կուգա՞նք...

Նոյն վայրկեանին ուշադրութիւնս դրսում է շուկայ տանող փողոցի ծայրից դէպի ձեզ շարժող ծի սուէր: Քաշում եմ պատուհանի ձախ կողմը և դիտում: Բայց դեռ ճարդը ձեր դուռին չհասած ճանաչում եմ Պարոնակի Քեօռօղլեանին:

Պարոնակի վրա դէմք չի մնացել:

— Մի ժամ առաջ պատուհանից տեսայ, որ ձեր դիմացի պատին ինչ որ ճարդիկ ծի թուղթ փակցրին, — ասաց նա: Հէնց որ ճարդիկը հեռացան, վար իջայ և լուցկու լոյսով կարգացի հետեւեալը...

«Սա մտն քաղաքի բոլոր հայերին հրահանգում է տան օրւայ ընթացքում պատրաստ լինել, ճինչեւ նոր կարգադրութիւն, ճեկնելու երկրի ներքին գաւառները: Բոլոր բնակիչները կարող են հետերին տանել իրենց զոյքերը, որի համար նրանց հնարաւորութիւն կը տրուի: Եւ ոչ ծի հայի վտանգ չի սպառնում: Իշխանութիւնը պահանջներ պիտի տայ: Աճէն անհնազանդութիւն այս կարգադրութեան դէմ ճնշելու է ամենավճռական ձեռով»:

Թմբկահարութիւնը շարունակում էր: Պարոնակը պարզեց, որ Գերմանացիները վերադրաւել են Լեմբերգը և այդ տարի գիշերային ճեմ ցոյց է կատարում:

Որքան էլ նախապատրաստուած էի, լսեց ճէկէն ի ճէկ դժարացող հասկանալ Պարոնակի ասածները...

Պարոնակը ուզում է հասկանալ կարծիքս, բռնելիք վերքի մասին

— Ես կառաջարկեմ անմիջապէս հրդեհել թաղը... Թող արթնանան և ով ուր կարող է, թող փախչի, — ասում է Պարոնակը...

Կարծիքս այն էր, որ պէտք է սպասել լոյսը բացելուն, դրութիւնը պարզելու համար: Պարոնակը ճեկնեց, պաշտանաւորեցինք ծի ժամ յետոյ պատահել Յակօր Գալուստեանի մօտ, որի բնակարանը Հ. Յ. Դ. Կ. Կոմիտէի կողմից ճշգրտած երեք զիրքերից ճէկն էր: Յակօրը ասում էր ինձնից վերև, թաղի արեւմտեան մասի դրեթէ ձայրում: Քանի դեռ մութ էր, բռնեցի դէպի դաշտ տանող ճանապարհի ձախ կողմը և առանց ճարդու պատահելու տեղ հասայ: Յակօրը հրահանգի մասին չգիտէր, բայց թմբկահարութիւնը լսելով՝ տնեցիներին հետ ճէկտեղ՝ արդէն ոտքի վրա էր: Հօր՝ այս հին, տուր ու լուսկեաց և ցաւեր տեսած Չէլթունցի դիւղացու հետ միասին հանել էին տան ճէջ եղած թաքստոցից հինգ տանոցներն ու հրացանը:

Արդէն լուսանում էր: Երկինքը եղբով ծովի տակ մտած շերտ-շերտ կարծրում, վառում էր կրակով, եւ լոյսի առաջին ճառագայթների հետ Թուրքմանի բլուրների վրա երեւացին ոստիկաններ: Թաղը դաշտի կողմից օղակւած էր հրացանակիր ոստիկաններով:

Վրա հասան Պարոնակը, Գալուստը և Նշանը: Պարզեց, որ թաղի բոլոր ելքերը նոյնպէս բռնած են ոստիկաններով: Թաղը չորս կողմից պաշարւած էր: Միաժամանակ պարզեց, որ թաղում ոչ ծի հատ մուհաճիր չի մնացել: Գիշերը գնացել են ցոյցի ու էլ չեն վերադարձել:

Լուսացաւ: Արեւն ելաւ ու իր ընթացքը բռնեց: Ոչինչ, կարծես թէ ոչինչ չի պատահել:

Պարզ էր, որ Յակօրի մօտ նստելուց ծիտք չկար. վար իջայ դէպի թաղ: Խիստ դժար է նկարագրել թաղի իրարանցումը: Կանայք, պատերի տակ, ղոնների մօտ շարւած, նետում էին բոլոր անցորդների վրա ծիւղով, հարցումներով: Փոքրերը ձայրերի մօտ կծկտած՝ անյոյս կերպով աշխատում էին բան հասկանալ իրարանցումից: Տղամարդիկ, ձեր կանայք խմբւած էին եկեղեցու բակում, Առաջնորդարանում: Երիտասարդները այս ու այն կողմն ընկած՝ ելք, կարծիք, ղեկավարութիւն էին որոնում: Բայց դրութիւնը ամէն տեսակէտով անյոյս էր...

Քիւրքճեանի հետ համախորհուրդ որոշել էինք երեխաներին և աղջիկներին յունաց թաղ փախցնելու խորհուրդ տալ. մնացած բնակչութեան յանձնարարել բոլոր դէպքերում կառավարութեան որոշման չենթարկւել. Հ. Յ. Դ. Կ. Կոմիտէի կողմից ճշգրտած ինքնապաշտպանութեան երեք զիրքերը բռնել. աջակցել Քաղաքային Խորհրդին կարգադրութեան օրինական միջոցներ ձեռք առնելու գործում:

Դէպքերից յետոյ կարող եմ ասել, որ միակ ճիշդ եւքը Պարունակի ասածն էր...

Ժխրը, իրարանցումը գնալով սաստկանում էր, բայց թաղից դուրս ամէն ինչ հանդարտ ու խաղաղ էր:

Թակարդի մէջ ընկածի առաջին պատեպատից յետոյ, հեղ վաճառականները այժմ Առաջնորդարանում զուսպ և ուշադիր քննում էին դրութիւնը: Ներսը կարծես թէ հերթական «կարեւոր» ժողով է...

«Պատուիրակութիւն ուղարկել ճութեսարիֆի ձօտ, ինչորեւ եղած կարգադրութիւնը բեկանել: Յայտնել թաղի հաւատարմութեան հաւատարմութիւնը և ամէն կարգի երաշխիքներից զատ թաղից առաջարկել պատանդներ, ի թիւս որոնց նաև Քաղաքային Խորհուրդի անդամներին: Միջոցներ ձեռք առնել թաղում հանդարտութիւն պահպանելու համար »:

Գրեթէ յոյս չկար, որ պատուիրակութիւնը (Թոմարգալեան, Խերեան, Եաղլիեան) կընդունւի և կարող կը լինի վերադառնալ թաղ: Բայց տեղի ունեցաւ հակառակը:

Մութեսարիֆը պատուիրակութեան անդամներին ընդունել էր սիրալիր և ասել էր հետեւեալը.—

Տեղահանութեան կարգադրութիւնը ստացած է Պոլսից, և ինքը բաւական ձգձգել է կարգադրութիւնը, միշտ լուռ կարծիք յայտնելով Սաճառնի հայութեան հաւատարմութեան մասին, որի համար ոչ մի երաշխիքի պէտք չունի: Կարգադրութեան նախօրեակին ինքը արդէն դիմել է Պոլիս Սաճառնի հայերի վիճակը թէթեւացնելու խնդրով և յոյս ունի, որ իր դիմումը ապարդիւն չի անցնի: Յամենայն դէպս, Սաճառնի հաւերը կարող են կատարելապէս վստահ լինել, որ նրանց տեղահանութիւնը նախ և առաջ ժամանակաւոր է, ապա՝ Չախալլիից այն կողմը չեն անցնի: Աւելորդ է ասել,— յայտնել էր մութեսարիֆը,— որ մէկ հատ հայու քիթ չի արխնի ոչ Չախալլիում և ոչ ճանապարհին: Թէեւ հարկադրւած է ստացած հրահանգը գործադրել, բայց վստահ է, որ աքսորը երկու շաբաթից աւելի չի տևի: Հաւատացրել էր, որ տներն մէջ մնացած իրերից մազ անգամ չի պակսի, իսկ Չախալլիում ժամանակաւորապէս մնալու համար խոստացել էր տալ բոլոր դիւրութիւնները:

Սրա հետ միասին նէջմի բէյը ասել էր, որ թաղի մէջ մարդիկ կան, որոնք անպայման պէտք է հեռացնեն իր մութեսարիֆութեան սահմաններից, ինչ որ անհրաժեշտ է նաև թաղի ապահովութեան համար: Այնուհետեւ պարզել էր, որ եղած կարգադրութեան համաձայն, թաղի արու բնակչութիւնը պէտք է իր «վեսիկաները» (ներքին անցաթուղթ) վաղը և եթ վե-

րանորոգէ քաղաքապետարանում: Ասել էր՝ Սաճառնը պատկառման դօտի է, և ինքը չի կարող թոյլ տալ, որ քաղաքում վստահաւոր տարբեր լինեն: Բացատրել էր, որ նոր վեսիկաները պիտի տրւեն նախապէս արդէն կատարւած ստուգումների համաձայն և որ ինքը կարող է երաշխաւորել միայն նոր վեսիկաներ ստացողների վերադարձը Չախալլից: Ի վերջոյ, մութեսարիֆը, յայտնելով իր կատարեալ վստահութիւնը թաղի ճիշդ մեծամասնութեան հաւատարմութեան մասին, խորհուրդ էր տւել թաղում եղած ղէնքերը հաւաքել և յանձնել...

Թոմարգալեան էֆէնտին, ինչպէս առաջ, հաւատացրել էր, որ թաղում ղէնք չկայ:

— Աւելի լուռ ձեզ համար,— ասել էր մութեսարիֆը,— բայց երեւի կայ և դուք չգիտէք: Յամենայն դէպս, աշխատեցէք հանդարտ պահել թաղը, այլ կերպ ամէն ինչ կորած է:

Այնուհետեւ Եաղլեան էֆէնտին իրեն յատուկ պարզութեամբ ասել է.

— Բէյ էֆէնտի հաղրէթլերի, դուք մեր հայրն էք. մենք ապուլինել ենք Աստուծոյ և ձեզ, պատրաստ ենք ենթարկւել ձեր բոլոր հրահաններին. ներեցէք միայն հարց տալու, թէ երբ կարող է պատասխան լինել մեր վիճակի թէթեւացման մասին: Այդ անհրաժեշտ է իմանալ, որպէսզի մեր կանանց և երեխաներին կարողանանք հանգստացնել: Բացի այդ, մենք չենք կարող երկար ժամանակ թաղի մէջ պաշարւած մնալ. թոյլ չեն տալիս իջնել շուկայ, իսկ թաղում ուտելիք չկայ:

— Իրաւունք ունիս,— պատասխանել էր մութեսարիֆը,— մինչեւ վեսիկաների ստուգումը պաշարումը վերացնել չեմ կարող. գալով կատարած դիմումիս, ես յոյս ունեմ երկու-երեք օրից պատասխան ստանալ. ինչ մոտ է ուտելիքին, կը կարգադրեմ, որ մթերք բերեն թաղը, շուկայի գիներով վաճառելու պայմանով:

Առաջնորդարանում պատուիրակութեան զեկուցումը ոճանց համար յուսատու անակնկալ եղաւ, բայց ընդհանրապէս տարակուսանքների տեղի տւեց, մէկ-երկու շաբաթով աքսորելու, յետ գալու, վիճակը մեղմելու մասով: Նախապէս նոր վեսիկաների հարցը ոչ ոքի չէր զբաղեցնում, բայց յետոյ սկսեցին կասկածներ յայտնել նաեւ այդ մասին: Ինչո՞ւ միայն հայերը պէտք է նոր վեսիկաներ ունենան, ո՞վ է կասկածելին, ինչո՞ւ չեն բանտարկում եւայլն...

Առաջնորդարանի բակում թաղի երիտասարդութիւնը, ուսուցիչները բացարձակապէս դէմ էին արու բնակչութեան քաղաք իջնելուն: Ամէն մարդ

ուշադիր լսում էր: Բայց այն հարցման, թե ի՞նչ անել, ի՞նչպես ապրել, երբ թաղում ձթերք չկայ, գոհացուցիչ պատասխան չէր տրուում...

Ժողովը դեռ չէր վերջացել, երբ թաղի մէջ յայտնեցին երեք-չորս սայլեր, որոնք բերել էին հաց, ձթերք վաճառելու համար: Պատերազանքով թեան բերած տեղեկութիւնները կայծակի արագութեամբ, աղաւաղումներով, աւելի գոհացուցիչ չափազանցութիւններով, անցնում դառնում էին թաղի մէջ: Սպասւած բոլոր մեծ պատուհանների երեւութական մեղմացման յոյսն անգամ փրկութեան հաւասար մի բան էր երեւում...

Առաջնորդարանում ժողովը ընդհատել էր և մարդիկ շտապում էին իրար քով, խորհուրդ հարցնելու, մէկը միւսի որոշումը, կարծիքը, անելիքը հասկանալու համար: Ամենից վատը նրա՛նց դրութիւնն էր, որոնց վրա այս կամ այն չափով հատարակական պարտականութիւններ կային՝ Առաջնորդը, Քաղաքային Խորհրդի անդամները, ուսուցիչները և այլն: Այս առումով իմ դրութիւնը բաւիս բուն իմաստով թշուառ էր. այո՛, երբեք պէտք չէ աւելի հաւատ ներշնչել ուրիշներին դէպի քեզ, քան իրականի մէջ արժանի ես...

Յուզումնալից օրը ծոռացաւ իր վախճանին: Մութը կոխելուն պէս մարդիկ կծկեցին աներում:

Յաջորդ օրը առաւօտեան սէր-կոմիսար Սաբրի բէյը մէկ ոստիկանի ուղեկցութեամբ եկել էր Առաջնորդարան և յայտնել, որ ժամը մէկից սկսւում է վեսիկաների վերանորոգութիւնը և պէտք է տեւի մինչեւ երեկոյեան ժամի վեցը. այնուհետեւ գործողութիւնները պէտք է վերջանան, որով ամէն մարդ թո՛ղ գաջ իր թղթերը ստանայ:

Թաղը նորից իրար անցաւ. ո՛վ գնաց, երբ գնաց, գնա՞ն թե՛ չէ, դատաւար գնան, թե՛ միասին...

Խաղը այնքան ակնյայտ էր, որ ուսուցիչները, երկասարկութիւնը ամէն տեղ խորհուրդ էին տալիս տղամարդկանց վար չիջնել թաղից, բայց որքան ծոռենում էր ժամանակը, այնքան եղած կարգադրութեան ենթարկւելու կողմնակիցները շատանում էին. մարդիկ բոլոր տարակուսանքների հետ միասին, վախենում էին «օրինադանցութեան» հետեւանքներից:

Ժամը 1ին մի քանի մարդիկ արդէն ներկայացել էին քաղաքապետարան, թղթերը նորոգել և առանց միջադէպի կամ անսխալութիւնների տուն դարձել: Այնուհետեւ գրեթէ ամբողջ արու բնակչութիւնը վար իջաւ դէպի քաղաքապետարան ու... էլ յետ չեկաւ...

Թաղը որբացաւ. մնացել էին ուսուցիչները, երիտասարդների մի մասը, պարսկահայատակ Պալըղճեանները, ընդհանուր հաշւով երեւի ծոռ 100 մարդ: Մինչեւ ժամի երեք-չորսը դեռ թաղի մէջ յոյս կար մեկնածների վե-

րադարձի ծախն. այնուհետեւ յուսաբեկութիւնը, արագութեամբ անից-տուն տարածւելով՝ համակեց ամենքին: Կանայք, երեխաները խմբւած դռների, պատուհանների տակ՝ վախենում էին տնից հեռանալ: Բայց կային նաեւ անվախ կանայք, որոնք գնում գալիս, փորձում էին դուրս գալ թաղից, քաղաքապետարան հասնելու համար: Ի դո՛ւր, թաղի պաշարումը խստացել էր և այլեւս ոչ ոքի դուրս չէին թողնում:

Իրիկան դէմ Առաջնորդը մի անյոյս փորձ արու. դաւադ հաջու հետ սէր-կոմիսար Սաբրիին մի դրութիւն ծածկեց, որի մէջ յայտնելով թաղի մէջ տիրող իրարանցումը՝ խնդրում էր կարգադրել, որ թաղ ճամբւեն նրանք, որոնք իրենց գործողութիւնները վերջացրել են: Հաջին չվերադարձաւ...

Միածամանակ թաղի մէջ լուր տարածեց, որ համատարած խուզարկութիւններ պէտք է լինին և քաղաքապետարանում եղած արու բնակչութեան բախտը կախւած է այդ խուզարկութիւնների հետեւանքից: Մի վայրկեանի մէջ կարծես թէ թաղը հիմնաւորապէս փոխեց. կանայք սկսեցին ծանրադնին խուզարկութեան ենթարկել իրենց տները: Ինչն էր ստուգապէս կասկածելի, ոչ ոք չգիտէր: Փողոցներում պատահում էին ծեր կանայք, որոնք խնամքով փաթաթւած կապոցներ էին դէս ու դէն տանում, ի՞նչ էր արդեօք՝ զէ՛նք, զարդեղէն, ուտելի՛ք, գի՛րք — չգիտեմ...

Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Կոմիտէի կողմից ձշղւած երեք զիւրքերում եղած մէկ-երկու հրացաններն ու տանուցիները պահելու ոչ մի դժւարութիւն չեղաւ, որովհետեւ զիւրքերում նախապէս պատրաստւած էին թագստոյներ:

Արեւի վերջին ծառագայթները կայծկւում էին Թուռամանի բլուրների տարածւած ոստիկանների սկիւնների վրա: Բայց խուզարկութեան նշան չկար:

Թաղը կարծես թէ հաշտւել էր իր ճակատագրին: Իրականի մէջ վրա հասնող մութն էր, որ կծկւում էր բոլորին...

Լուսաբացին յայտնի դարձաւ, որ Սէր Դարեղին Շինիկեանին ընտանիքով աքսորում են: Թաղից առաջին մեկնողներն էին Շինիկեանները: Գաղթը սկսւում էր:

Քիչ անցած յայտնեցին թաղում ծանօթ, բարեկամ ունեցող թիւրքեր, յոյներ: Դրանցից իմացեց, որ քաղաքապետարանում եղած բոլոր հայերը ողջ են, որ ոչ ոքի հանդէպ բռնութիւն չի գործադրւել և աքսորւելու են միայն մինչեւ Չախալի: Հայերից ոմանք առմսեր էին գրել: Լուրը արագութեամբ տարածեց թաղի մէջ և համապատասխան տրամադրութիւն ստեղծեց: Լաց ու կոծը զաղարեց: Քանի որ տղամարդիկ դեռ Սաճանի մէջ էին, նշանակում է դժւար չէր նրանց հետ միանալ: Եւ կանանց մէջ հա-

նատարած տրամադրութիւն ստեղծեց ամուսիններին բախտակից լինելու ու նրանց հետ միասին աքսորելու: Յատկապէս անհամբեր էին փոքրերը:

Միաժամանակ տեղ-տեղ շշուկներ տարածւեցին թաղ մտած թիւրք բաւեկամների միջնորդութեամբ ոմանց իսլամանալու մասին:

Կէս օրին թաղում յայտնւեցին բաւական թուով թիւրք կանայք: Եկել էին գնումներ անելու. պնակներ, կաթսաներ, սփռոցներ, պրիմուսներ, կարի մեքենաներ, կապերտներ, խայիներ և այլն: Կային նաև մի քանի մանրավաճառ թիւրքեր, որոնք տնից-տուն դառնում նաւթ էին հարցնում:

Նախապէս այդ բոլորը տարօրինակ էր այնքան, որ հայ կանայք տեղ-տեղ վեճի բռնւեցին թիւրք կանանց հետ. «Ինչո՞ւ պիտի ծախեն»... Բայց գնման առաջարկութիւնը բանաւոր էր: Ճամբորդութիւն է, կանխիկ դրամի կարիք կայ, դրութիւնը կը պարզւի, նորից կարելի է ձեռք բերել, մի բան աւել-պակաս այդ դրութեան մէջ մեծ բան չէ, և այլն:

Թիւրք կանայք, մի քանի դուրուշներով ձեռք բերելով պահանջւած իրը, խնդրում էին տանտիրուհուն, թէ՛

— Հէլալ էթ: Եւ մինչեւ վերջինը «հէլալ» չէր անում ձեռք բերւած իրը, գնման գործողութիւնը չէր վերջանում:

Թրքուհիների թաղ մտնելը ունեցաւ մի կարեւոր հետեւանք: Հայ կանանցից, աղջիկներից ոմանք առիթից օգտուեցին և չարշաւների մէջ փաթեթաւորուած դուրս ելան ու յունաց թաղում պահւեցին: Հակառակ եղած խրատ-խուսառնքներին, պահուողների թիւը շատ քիչ էր: Յատկապէս յաճառ եղան այս ուղղութեամբ դպրոցի վերջին դասարանների աշակերտուհիները. և նրանք էլ, որոնք նախապէս պահւեցին (Յասմիկ, Անդինէ Խերեանները ևն.), յետոյ միացան գաղթին:

Աւելի շատ եղան այն ընտանիքները, որոնք առիթից օգտուելով՝ յաջողեցան իրենց փոքրիկներին տանել և «պահ տալ» ծանօթ և բարեկամ յոյներին: Մօտ ծանօթներից այդպէս վարւեց Կապտանեանը, Ալթունեանը, Վերջինի փոքրիկը ոչինչ չէր հասկանում և տատի հետ առանց առարկութիւնների գնաց: Բայց Կապտանեանների փոքրերին ոչ մի ձեռով հնար չէր լինում համոզել: Հրանտը բացատրել էր իրողութիւնը Արամին, իսկ սա պահանջում էր, որ հայրն էլ գնայ իրենց հետ: Վերջապէս, յաջողեց համոզել, որ հայրը պիտի գայ գիշերը, որպէսզի չբռնեն: Երեխաներին ընկերացան Կապտանեանի մայրը և կինը: Վերջինը կէս ճանապարհից իր փոքրիկներից փախաւ և վերադարձաւ թաղ, ամուսնու մօտ:

Այդ նոյն ժամերին թաղի մէջ յայտնւեցին մի քանի մուլաներ, որոնք այցելութիւններ էին կատարում: Նախապէս տարածւած շշուկները ոմանց

թրքանալու մասին իրողութիւն էին դառնում: Առաջին իսլամութիւն ընդունողը Գամբարեանների ընտանիքը եղաւ: Գամբարեանը թաղի հարուստ վաճառականներից էր և շատ մեծ յարգ ունէր մութեսարիֆի մօտ: Միակ ընտանիքն էր, որ ամենայն անկեղծութեամբ թրքացաւ: Իսլամութիւն ընդունած մնացած հինգ-վեց ընտանիքների անունները յիշատակելու պէտք չկայ, որովհետեւ նրանց համար այդ ծանր ողբերգութիւն էր:

Սրա հետ միասին պէտք է ասել, որ որ թրքացնելու նախաձեռնութիւնը գալիս էր թիւրք բարեկամներից, որոնք, գալիք պատուհասի ելքին իրազեկ՝ այդ ձեռով ուղղում էին մարդ փրկել: Սրանք խօսում էին քաղաքապետարանում եղած ամուսինների անունից, որոնցից ոմանք իբր թէ արդէն համաձայնել էին թրքանալ, և թիւրքերը համոզում էին կանանց: Բայց ի դուր: Կանանք սարսափելի յաճառ և կայուն մտացին մինչեւ վերջ:

— Եղբայր, ի՞նչ բան է երեք անգամ ասել «Լա-իլահէ-իլ-Ալլահ, Մուհամմէտ Ռասուլ-Ալլահ», որ դրա համար կեանքդ վտանգի տակ ես դնում — ասել էր մի աղատամիտ թիւրք, թաղում մնացած Հայրիկ-աղա Խրիմեանին:

Բայց եթէ Հայրիկ-աղան տատանման մէջ էր ընկել, կինը, — պատմում էին, — սպառնացել էր պարզապէս խողխողել նրան, եթէ այդ խօսքերը արտասանի:

Սրա հետ միասին թաղում կար մի կին, որ հաւածում էր մուլաներին: Այս անմոռանալի կնոջ անունը Դողրուճ հանում էր: Բարձրահասակ, յաղթանդամ, 70ը անց մի կին էր Դողրուճ հանումը եւ թաղի մէջ մարդ չկար, որ նրան չձանաչէր: Նա միխթարում էր մարդկանց դժբախտութեան դէպքում, կարգադրում էր ընտանեկան վեճեր, հսկում էր երիտասարդների բարք ու վարքի վրա, շիւր-շիւտակ խփում էր մարդու ճակատին այն, ինչ որ ճիշդն է, «դողր» է: Այժմ այցելում էր տնից-տուն և տատանողներին խրախուսում:—

— Գնացէք ձեր ամուսինների հետ, մի՛ գայթակղէք, գնացէք: Ասուած կառաջնորդէ ձեզ. գնացէք և մի վախենաք, որովհետեւ ձեր բոլոր ճանապարհները յայտնի են Աստծուն: Գնացէք և մի շեղիք Ամենակալի օրէնքներից, անվախ և համարձակ գնացէք, որովհետեւ Տէրը թոյլ չի տայ որ ձեր ոտքերը յոգնեն: Գնացէք և փառաբանեցէք Աստծուն, որովհետեւ ճշմարիտ փրկութիւնը նա է...


Իրիկնապահին ուստիականեր յայտնւեցին և թաղում մնացած տղամարդկանցից ոմանց ձերբակալեցին: Դէպքերը մօտենում էին իրենց զարգացման վճռական շրջանին: Պարունակը, Յակոբը, Քիւրքչեանը, ուսուցիչները, ես

և ճիւղները իրար կորցրինք: Մտայ աշնտեղ, ուր իմացել էի ոստիկանների թաղ հասնելը՝ Գարեգին Թերզեանի բնակարանը: Ինչ էր խկապէս իմ ցանկութիւնը — չեմ յիշում: Բայց ասել, թէ յատկապէս շահադրդուած էի, որ ինձ չձերբակալեն՝ չեմ կարող: Յունաց թաղ փախչելը, կամ որ և է տեղ պահելը այնքան էլ դժար չէր: Միայն կամք չկար, նպատակ չկար... Քիչ չանցած իմացայ, որ ոստիկանները անցել են թաղի այդ ծառը: Վերջին դասարանի աշակերտուհիներէից Սիրվարդ Մենձիկեանի ճիշդցով ստուգելով անցնելիք ճամբաս, Թերզեանների ծօտից դնացի Պալըզեանների տունը, որ գտնուած էր թաղի կեդրոնում, դէպի շուկայ տանող ճեմ փողոցի վրա: Մի ժամ յետոյ դուռը ձեծեցին, և Պալըզեանների ձեծ եղբայրը՝ Վահրամ դուրս ելաւ: Նախազգարով ամէն ինչ՝ ես պատրաստ կանգնած էի կիսաբաց տան դուռի յետեւը և «Թալիճջի ծուհէլլիմ» (ճարգանքի ուսուցիչ) բառերը լսելուս պէս, դուրս ելայ:

Նոյնինքն սեր-կոճիսար Սաբրի բէյն էր չորս փողիսներով: Նա անխօս վարէն-վեր նայեց և ձեռքով նշան արաւ, որ իջնեմ...

Բեկորադ

(Շարունակելի)



ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ

ՆԻԻԹԵՐ ՇԻՐՎԱՆՁԱԴԷԻ ՄԱՍԻՆ

Ինչպէս յայտնի է, 1911 թ. տօնեց Շիրվանգադէի գրական երեսնամեայ գործունէութեան յոբելեանը: Այդ առթիւ, Պալսում, վաստակաւոր վիպասան Տիգրան Կամսարականի նախաձեռնութեամբ ու ընդհանուր խմբագրութեամբ եւ 19 արեւմտահայ գրողների մասնակցութեամբ լոյս տեսաւ Շիրվանգադէին նւիրած մի հատոր: Հատորի խմբագրութեան ու տպագրութեան գործնական աշխատանքները յանձնւած էին պ. Արամ Անտոնեանին:

Հատորի լոյս տեսնելուց յետոյ, պ. Ա. Անտոնեանի՝ անձնական դիւանում պահել էին Շիրվանգադէի ձեռքով գրած ինքնակենսագրութիւնը եւ պ. Տ. Կամսարականին կամ պ. Անտոնեանին ուղղւած մի շարք նամակներ: Այժմ, երբ Շիրվանգադէն արդէն մեռած եւ ներքա կեանքն ու գործը այլեւս պատմութեան սեփականութիւն է, մենք օգտւելով պ. Ա. Անտոնեանի բարեհաճութիւնից՝ հրատարակութեան ենք տալիս այդ նիւթերը:

Առաջինը Շիրվանգադէի ինքնակենսագրութիւնն է, գրւած պ. Ա. Անտոնեանի խնդրանքով: Վերջինս օգտւելով նրանից, ժողովածուի համար կազմել էր Շիրվանգադէի կենսագրութիւնը: Ինքնակենսագրութեան ձեռագիրը մնացել էր անտիպ եւ այստեղ լոյս է տեսնում առաջին անգամ:

Երկրորդը 1908 թ. Պալսի հայ բերքերին ուղղւած մի նամակ է Շիրվանգադէի բատերախոյեռի ներկայացման առթիւ:

Այս գալիս են պ. Տ. Կամսարականին եւ պ. Ա. Անտոնեանին գրւած չորս նամակներ՝ ժողովածուին վերաբերող խնդիրների մասին: Նամակներ, որոնց մէջ բաւական ցայտուն կերպով արտայայտւած է Շիրվանգադէի իւրայատուկ նկարագիրը:

Ամբողջ նիւթը մենք հրատարակում ենք առանց որ եւ է փոփոխութեան եւ, բնականաբար, հեղինակի ուղղագրութեամբ. պատմութիւնը պատմութիւն է, լաւն էլ, վատն էլ պէտք է մէջտեղ գալ:

ԽՄԲ.

ՇԻՐՎԱՆՁԱԴԵՒ ՆԱՄԱԿԸ Պ. Ա. ԱՆՏՈՆԵԱՆԻՆ

Յարգելի եւ սիրելի արուեստակից,

Պատիւ ունեցայ Ձեր սիրալիր նամակն ընդունելու։ Անշուք պարծենում եմ, որ հաճել էք ընդունել մեր համակրելի բարեկամ Տիգ. Կամսարականի առաջարկը նուաստիս կենսագիրը կազմելու։ Վերին աստիճանի հաճելի պիտի լինի ինձ համար տեսնել Ձեր աշխոյժ եւ վարվուուն գրչի տակ շունչ առած իմ համեստ անցեալի պատկերները, որ ըստ մեծի մասամբ մուսյլ են։

Յայտնելով կանխաւ անկեղծ շնորհակալիքս, շտապում եմ կատարել Ձեր պատուէրը ամենայն սիրով, հաղորդելով այն, ինչ որ յիշում եմ եւ ինչ որ կարեւոր եմ համարում իմ կեանքից։

Միայն խնդրում եմ այս բոլորը գրել Ձեր կողմից եւ ոչ իրերէ ինքնակենսագրութիւն։

II

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Իմ ծննդեան թիւը ես ճիշդ չը գիտեմ։ Հանդուցեալ մայրս ասում էր, թէ ծնւել եմ ապրիլի 7-ին 1858 թուին։ Իմ ծննդավայրն է Աղուանից աշխարհի Շամախի քաղաքը։ Պատմական Շիրվանը, որ յայտնի է իւր սոսկալի երկրաշարժներով եւ սքանչելի բնութեամբ։ Այնտեղ գարուն եւ ամառ գիշերը մինչեւ լոյս երգում են սոխակները։ Շրջակայքը լի են սառնորակ աղբիւրներով, հրաշալի տեսարաններով։ Խիտ անտառներ չկան, կայ հարուստ բուսականութիւն, վայրի ծաղիկների շքեղ բուրաստաններ։ Երկինքն այնքան կապոյտ է, օդն այնքան յստակ ու մեղմ, որքան Կովկասի եւ ոչ մի վայրում։ Հրաշալի երկիր, երկրային գրախտ։

Ծնողներս եղել են անգրագէտ։ Հօրս անունն էր Մինաս, որին սովորաբար կոչում էին «Ուստա Մինաս»։ Մօրս անունն էր Ուսանա, որին քաղաքում անուանում էին «Գէօղալ Սօնա» իւր անզուգական գեղեցկութեան շնորհով։ Իսկական անունս է Ալեքսանդր Մովսիսեան։

Հայրս սկզբում եղել է արհեստով դերձակ, ապա տորակի *) արդիւնաբեր։

Մինչեւ 17 տար. հասակս կեանքս անցուցել եմ ծննդավայրում։ Մանկութիւնս ընդհանրապէս եղել է ոչ զուարթ։ Կեանքի դատանութիւններին ծանօթացել եմ շատ կանուխ եւ շատ վաղ եմ ճաշակել նրանց։ Տարուայ մեծ մասը հայրս բացակայ է եղել քաղաքից։ Ես շատ հազիւ եմ վայելել նրա դուրսդուրանքը, նոյն իսկ չեմ յիշում վայելել եմ արդեօք։ Աւելի յիշում եմ նրա խստութիւնները։ Այսօր էլ վառ կենդանի է իմ աչքերի առջեւ նրա խոժոռ կերպարանքը։ Վերին աստիճանի բարձրահասակ (ամբողջ հասանգում իւր ժամանակին նրա հասակի մի ուրիշը չի եղել), խոժոռ դէմքով, կապոյտ աչքերով, չիկաւուն բեխերով, կնճոռտ ճակատով, թաւ յօնքերով։ Բարկութեան բոսկիներին նրա ձայնը հնչում էր սուր, բարակ, մի բան, որ չէր համապատասխանում նրա խոշոր կազմւածքին։ Բաւական էր իմ կողմից մի թեթեւ սխալ, եւ նա պատրաստ էր ինձ պատժել։ Յաճախ նա մի ձեռով բարձրացնում էր ինձ փետրի պէս օդի մէջ, եւ ես ինձ զգում էի մի բարձր ծառի գագաթին։ Սպասում էր ինձ այնտեղից վայր ձգել, բայց երբէք չէր դրոյւմ։ Նա ինձ սիրում էր իւրովի եւ բնաւ իւր սէրը չէր արտայայտում սովորական ձեռով, փաղաքշանքներով ու համբոյրներով։ Բայց մօրս անվերջ դուրսդուրանքները փոխարինում էին նրանց։

Հայրս յայտնի էր իւր շիտակ, անշեղ բնավորութեամբ եւ ուղղամտութեամբ։ Իրրեւ անողոք ճշմարտախօս նա շատերին երկիւղ էր պատճառում։ Նա կատաղի թշնամի էր կեղծիքին. ստախոսութեանը, պարծենկոտութեանը եւ փարիսեցիութեանը։ Եկեղեցի այցելում էր շատ սակաւ, կամ երբէք, լինելով ջերմ հաւատացեալ, վասն զի չէր կարող տեսնել այնտեղ կեղծ ջերմեռանդութիւնը այն մարդկանց, որոնք ամբողջ օրը ստում էին, խաբում, կողոպտում եւ երեկոները իրանց մեղքերի թողութիւնը խնդրում Աստուծոյ տանը։ Նա այս ասում էր աներկիւղ ամենքին, եւ յաճախ նրա ընկերներն ու բարեկամները լսում էին նրանից դառը ճշմարտութիւններ։ Նրանք չէին սիրում հօրս, այլ յարգում էին, պատկառում էին նրանից եւ վախենում, եւ ինքը բնաւ չէր փնտրում մարդկանց սէրը, լաւ զգալով նրա իսկական արժէքը։ Մանկութիւնից անուած Դաղստանի լեզգիների շրջանում՝ շատ կողմերով նա բնաւ

*) Տորակ մի տեսակ արմախ է որից պատրաստում էին կարմիր գոյն։ Ուղարկվում էր այն Մոսկուա, Մարսէյ, Մանչեսթեր։ Այն կազմում էր մինչեւ 1872 թ. այսինքն մինչեւ «Ալիգարին» կոչուած մերկի գիւտը, Կովկասի համար խոշոր արդիւնաբերութիւն։

չէր նմանում իւր հայրենակիցներին: Նա չունէր հայի ոչ ծածկամասութիւնը, ոչ խորամանկութիւնը: Յիշում եմ նրա լայնաբերան դաշոյնը, արծաթապատ ատրճանակը, երկայն չախմախէ հրացանը, որ ամէն օր նա խնամքով սրբում էր իւր ճամբորդութիւնից առաջ: Յիշում եմ նրա կատաղի նժոյգները, որոնց խնամում էին միշտ երկու երեք լեզգի ծառաներ: Այն, մանկական անուշ յիշողութիւններ:

Ծնորհիւ իւր շիտակութեան եւ անկախ բնավորութեան, այդ մարդը Դադատանի նման վայրի երկրում վայելում էր ընդհանուր յարգանք, նաեւ Դուբայ քաղաքում, ուր նա մեծ մասամբ գտնվում էր իւր գործերով: Յաճախ լեռնականները եւ թուրքերը իրանց վէճերի միջոցին դիմում էին նրա միջամտութեանը եւ դատաւճռին եւ ոչ մի հանգամանք չէր կարող «Ուստա Մինասը» ստիպել դաւաճանել իւր խղճին:

Այդ, մի այդպիսի մարդ չէր կարող իմ մէջ յարուցանել քնքոյշ զգացումներ: Երկկուղ, յարգանք, խորին պատկառանք - ահա ինչ էի տածում դէպի այդ ամուր եւ զօրեղ կամքի տէր մարդը, որի մի հայեացքը կարող էր զսպել ամենազուսպ գաղանին: Նրա կամքի ամբողջութիւնը առասպելական էր: Իբրեւ ապացոյց ահա մի փաստ: 1872 թւին, երբ «ալիզարին» կոչուած ներկը հնարուեց, տորոնի արժէքը ընկաւ, շատերի հետ սնանկացաւ եւ հայրս: Կորցնելով իւր ունեցածը, նա ընկաւ եւ պարտքերի մէջ: Այն ժամանակ արդէն ծերութեան հասակում նա նորից դիմեց իւր նախկին արհեստին, դերձակութեանը Դուբայում եւ ուխտեց «չը տեսնել» իւր ընտանիքը մինչեւ նորից հարստանալը: Տասնութինգ տարի նա ապրեց մինակ, կարօտ իւր կնոջն ու զաւակներին: Կնոջ մահն ու դստեր ամուսնութիւնն անգամ չը կարողացան կոտրել նրա յամուտութիւնը եւ գրաւել դէպի ընտանիքը: Յիշում եմ, երբ 15 տարուայ բացակայութիւնից յետոյ ես գնացի Դուբայ նրան տեսնելու: Նա հիւանդ էր, անկողնում պառկած, չը ջապատուած տեղացի հայերով ու թուրքերով: Ներս մտայ, բարեւեցի: Ամբողջ կէս ժամ երեսիս չը նայեց: Վերջապէս գլուխը լուր բարձրացրեց, նայեց երեսիս եւ արտասանեց. «Օհ, մեծացել ես»: Եւ ոչ մի համբոյր, ոչ մի գուրդուրանք, տասնութինգ տարի ինձ, իւր միակ որդուն, չը տեսնելուց յետոյ: Այսպիսի մարդ էր հայրս:

Մայրս նրա հակապատկերն էր: 23 տարով երիտասարդ իւր ամուսնուց, քնքոյշ, նրբակազմ, խոշոր կինամոնադոյն աչքերով, թանձր, գանգուռ մազերով: Նրա բնավորութիւնը մեղմ էր, բարեհամբոյր եւ անսահման հեղ: Ես նրան պաշտում էի մանկական հոգ-

ւոյս սմբողջ թափով: Ոչ մի վիշտ կեանքումս ինձ վրայ այնքան խորը չի աղղել, որքան նրա մահը: Լինելով անգրագէտ, նա՛ ինձ տուեց ուսումնարան եւ նա՛ հողաց իմ կրթութիւնը: Մի երկու տարի մնալով տեղական բողոքականների ուսումնարանում, անցայ Ծամախու հոգեւոր դպրոց եւ կարճ ժամանակից յետոյ տեղափոխուեցի արքունական դպրոց, ուր եւ աւարտել եմ իմ սահմանափակ ուսումը:

Ես ունէի մի տատ (հօրս մայրը), որի մասին արժէ մի քանի խօսք ասել: Դա իւր որդու պէս բարձահասակ, բայց աւելի ամրակազմ մի կին էր, նոյնչափ անշեղ, շիտակ, նոյնչափ կատաղի թշնամի կեղծին եւ ստին, որքան իւր որդին: Այդ կինը, որի անունը Ծաղիկ էր, իրօք փուշ էր . . . տեղական կանանց համար: Նրանից վախենում էին ինչպէս կայծակից իւր անդուստ ճամարտախօսութեան շնորհիւ: Նա չը դիտէր կեղծել, չոյլ: Նա չը դիտէր ինչ ասել է մարդկանց հաճելի թուալ: Քաղաքում նա յայտնի էր իւր քաջութեամբ, որի ապացոյցը կրում էր իւր ձախ կողի վրայ: Այդ մի թղաչափ սպի էր մի մեծ վէրքի: Մի գիշեր նա քնած է լինում իւր ամուսնացած աղջկայ տանը, պատշգամբի վրայ: Յանկարծ, յարձակվում են վեց աւաղակներ կողոպտելու նպատակով: Աներկիւղ կինը դարձնելով փոխանակ աղմուկ բարձրացնելու, յարձակվում է նրանց վրայ: Իւր անդուզական ուժի շնորհով նա կարողանում է աւաղակներից երեքին մէկը միւսի ետեւից, փաթաթելով վերմակին մէջ, ձգել պատշգամբից ալի: Չորրորդը վիրաւորում է նրան դաշոյնով: Վերջապէս օգնութեան են համում հարեւանները: Աւաղակները փախչում են, տանելով իրոնց վիրաւոր ընկերներին:

Այդ հսկայ կներ ունէր մի խոր վիշտ - իւր կրտսեր որդին Յարութիւն անունով: Դա մի անդուստ, կատաղի մարդ էր, անդործ, չուայլ, քէֆեր սիրող: Ամէն գիշեր խեղճ մայրը աղօթում էր իւր «կորած» որդու փրկութեան համար: Յիշում եմ այն մռայլ ձմերային գիշերները երբ վիթխարի պառաւը գնդատեղի ծայրով յատակի վրայ դնում էր մի շրջան «չարից» փրկելու համար, եւ միշտ էլ երեւակայելով իւր որդուն, պարփակում էր նրան ապահովութեան մէջ: Մի գիշեր յանկարծ աղմուկ, դղրդոց: Մեր դռները ուժգին թափով բացուեցին եւ չորս մարդ ներս բերեցին հօրեղորս կիսաչունջ մարմինը: Յայտնուեց, որ նա կատաղած յարձակուել է իւր քնորդու վրայ, որ իւր չափ կատաղի մէկն էր, ծեծել է, եւ՛ քնորդին, դաշոյն ունենալով, եօթը վէրք է հասցրել նրան: Նա բռնաբերուեց վէրքերից եւ չորս ամիս չանցած սպանուեց մի որիկայի ձեռքով:

Այսպիսով, մանկութիւնից աչքերս սովորեցին արեան: Քիչ անցած մեռաւ իմ կրտսեր եղբայրը, չորս տարեկան Գաբրիէլը, ամենագեղեցիկ երեխան քաղաքի, որին ես սիրում էի անհուն սիրով:

Անդուսպ հօրեղբայրս աշխատասէր հօրս համար մի փորձանք էր: Օ՛հ, յիշում եմ նրանց անվերջ կռիւները. թուրը, դաշոյնը, յիշում եմ մօրս աղի արցունքները, տատիս գոռոցները եւ վախատուներ: Այդ բոլորն ազդում էր իմ մանկական հոգու վրայ եւ կեանքը դարձնում ինձ համար դաժան:

Իսկ շարունակ կրկնուող երկրաշարժները: Երկրաշարժ, օ՛հ, ես չեմ ճանաչում աւելի սոսկալի աղէտ, քան այն: Երբ դուրս ես, ուր երկիրը ոտներիդ տակից փախչում է, երկինքը մթնում, մարդիկ թաւալվում են դետնի վրայ, տները միմեանց ընդհարվում, չէն քաղաքը մի վայրկեանում աւերակ դառնում, օհ: Այդպիսի մի երկրաշարժ է 1872 թուականին, երբ մեր տունը աւերակ դարձաւ:

Հօրս մոռաց ընտելութիւնը, մօրս կրած տառապանքները, հօրս սնանկութիւնը, մեր հարուստ տան կործանումը, այնուհետեւ տիրող աղքատութիւնը, հօրեղբորս եղբրական մահն աչքերիս առջեւ, երկրաշարժը, այս բոլորն ազդելով իմ մանկական հոգու վրայ, դարձրին ինձ ի սկզբանէ յոռետես: Գուցէ դրանով պիտի բացատրել իմ պեսսիմիզմը գրուածքներիս մէջ, իմ գրչի դաժանութիւնը. կեանքը ինձ միշտ թւացել է ժամանակաւոր քաւարան, թէ եւ ես ի բնէ կենսախինդ եմ:

ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ

Հօրս սնանկութեան պատճառով ես 1873 թուին ստիպուեցայ դպրոցը թողնել եւ հոգալ մօրս եւ երկու քոյրերիս օրուայ պարէնը:

Երկու տարի անդործ թափառելուց յետոյ, 1875 թւին տեղափոխուեցի Բագու, որ այդ ժամանակ նոր նոր էր սկսել ծաղկել նաւթային արդիւնաբերութեան շնորհով: Այստեղ առաջ մտայ իրբեւ դրագիր ուսաց նահանգական վարչութիւն: Տարի ու կէս արքունական ծառայութեան մէջ մնալուց յետոյ, թողի, ուսումնասիրեցի խալական հաշուեպահութիւն եւ դարձայ հաշուապահը յայտնի նաւթարդիւնաբերական տներում:

Այդ ժամանակ միայն սկսեցի ծանօթանալ գրականութիւնն առումը բանի հետ: Մինչեւ տասնութին տարեկան հասակս գաղափար չունէի նրա մասին: Ես ապրում էի իմ մօրաբոջ Տիկ. Արէլեանի տանը (մեր յայտնի դերասանի մայրը): Նրա գաւազները վերին տատիճանի բնթերցասէր էին եւ նրանց շնորհով ձեռքս ընկաւ Արովեանի «Վէրք Հայաստանի», Պոօշեանցի «Սօս եւ Վարդիթեր»ը, յետոյ

«Մեղու Հայաստանի», «Մշակ» լրագիրները, «Փորձ» ամսագիրը, «Հիւսիսարեւել»ի համարները, «Քնար Հայկական», «Հանդէս նոր հայախօսութեան» եւ այլն: Ես սկսեցի կարդալ, յափշտակուեցի, եւ այդ ժամանակից գրականութիւնը դարձաւ իմ ամենապաշտելի առարկան: Հայերէն գրեթէ չը գիտէի, դպրոցը ոչինչ չէր տուել ինձ: Սկսեցի եռանդով սովորել: Փորձեցի թղթակցութիւններ գրել – նախ մայրաքաղաքի (Պետերպուրգի) «Գոլոս» (Չայն) ուսւ լրագրին, ապա Թիֆլիսի «Թիֆլիսկի Վէստնիկ» (Թիֆլիսի սուրճանդակ) լրագրին, որ խմբագրում էր հայագրի իշխան Կոնստանդին Բէրութեանը: Այսօր էլ չեմ կարող մոռանալ իմ ուրախութիւնը երբ առաջին թղթակցութիւնս տպուեց: Ես թեւեր առայ:

Սովորելով հայերէնը, սկսեցի թղթակցել «Մշակ»ին 1880 թււից սկսած: Բագուն այդ ժամանակ մի յետամնաց վայր էր: Գրագրան անգամ չունէր: Ես առաջարկեցի ընկերներին՝ Մարգարիտական Ընկերութեան բնակարանում բաց անել մի փոքրիկ բնթերցարան: Ընկերներս ղեկավարութեամբ ընդունեցին առաջարկս: Ընկերութեան խորհուրդը խոստացաւ աջակցել, տուեց մեզի մի ընդարձակ, լուսաւոր սենեակ, հրաւիրեց ինձ գրապահ: Առաջին տարին բերել տուինք մօտ 500 ուրբու ուսերէն եւ հայերէն գրքեր: *)

Հայ գրքերի հետ արդէն ծանօթ էի: Ռուս գրքերը մեծ մասամբ փիլիսոփայական էին – այսպէս էր կամեցել Մարգ. Ընկ. Խորհրդի անդամ Բէգլար Ստեփանեանը, մի շատ զարգացած ուսումնասէր մարդ, որ այդ ժամանակ արքունական դպրոցների փոխ-վերատեսուէ էր: Այնուամենայնիւ ես ազահութեամբ յարձակուեցի ուսերէն գրքերի վրայ, որ մեծ մասամբ թարգմանական էին եւ սկսեցի միմեանց խառնել իմ հում պատանեկան գլխում Կունօ Ֆիշէր, Ռիքարտօ, Ջօն Ստիւարտ Միլլէր, **) Սպենսէր, Մալթուս, Մէն Սիմօն, Դէկարտ եւ այլն:

Շատ բան, հարկաւ, չէի հասկանում, բայց ճգնում էի հասկանալ: Ես գեկավար չունէի, յանձնուած էի ինքս իմ կամքին ու ճաշակին:

Հայ գրքերն ու լրագրները շատ վաղ դադարեցին ինձ գոհացում տալ: Ես յափշտակուեցի ուսականով: Ռաֆֆի, Պոօշեանց շատ շուտով կորցրին իրենց հրապոյրը: Ինչ ոգեւորութեամբ կարդացել էի Արովեանին, Պատկանեանին, Նայրանդեանին, նոյն արա-

*) Այժմ այդ գրադարանը ամենախարուստն է ամբողջ Կովկասում:

**) Խօսքը, անշուշտ, Զ. Ս. Միլի մասին է. ԽՄԲ.

յի՝ փորձնական հողերանութեան մասին և Մարթայի՝ լատինական սերճախօսութեան մասին :

ԴԵՊՔԵՐ

Դուք պահանջում էք, սիրելի Անտոնեան, անեկդոտներ իմ կեանքից : Յիշում եմ միայն երկուսը :

ա.) - Իմ հայրենակիցները, Շամախեցիները ի բնէ համօրիստ են և կատակաբան :

Շամախուց հեռանալուցս 15 տարի անցած մի օր Թիֆլիսի փողոցներից մէկում, հանդիպում եմ հայրենակիցներիցս մէկին, որ մօրս բարեկամն է եղել :

— Բարով առ իշխան — դառնում է ինձ հայրենակիցս Շամախու բարբառով — դու Մինասի տղան չե՞ս :

— Հրամանքս, Մինասի տղան եմ — պատասխանում եմ և նոյն բարբառով :

— Հի՞նչ ես անում իստեղ, հի՞նչ բանի՞ ես :

— Գրում եմ :

— Միրզա ե՞ս : Ո՞ր դափթարխանում :

— Միրզա չեմ, գրող եմ :

Հայրենակիցս նայում է երեսիս, ժպտում հեղնարար և ասու .

— Մարդ կայ, որ դերձակ է, մարդ կայ, որ կօշկակար է կամ նալբանդ, փափախէի : Բո սանահաթի անունն ի՞նչ է :

Կամենալով հայրենակցիս շփոթեցնել, պատասխանում եմ .

— Վիպասան եմ :

— Վիպասանը հի՞նչ ա անում :

— Վիպասանը տղջկան սիրահարեցնում է տղայի վրայ, տղային աղջկայ վրայ, յետոյ նրանց նշանում է, պսակում : Չեն հաւանում միմեանց, բաժանում է նրանց : Ուրիշի հետ պսակում եւ այլն եւ այլն :

— Եսլա՛ւ, եսլաւ, կանգնիր . — բնդհատում է հայրենակիցս . — հասկացայ. մօցիքուլ ես, չարանգիդի, միջտորդ : Վայ քո հօր տունը չը քանդուի, տղայ, էլ դործ չը կա՞ր որ քինացիր չարանգիդի դարձար : Հեռու, հեռու, մեղանից . . .

Եւ հայրենակիցս, դառն վշտացած, հեռացաւ, համոզուած, որ արհեստների մէջ ընտրել եմ ամենախայտառակը :

բ.) Մի ուրիշ անգամ Բաղուի փողոցներից մէկում պատահում եմ դարձեալ մի հայրենակցիս : Նա հարբած է, երերուելով մօտենում է ինձ եւ փաթաթվում վրիս :

— Դուք ո՞վ էք, տարոն — հարցնում եմ ես, հաղիւ ազատուելով նրա գրկից :

— Ե՞ս : Ես երեքից մէկն եմ :

— Երեքն ո՞վ է :

— Շահարը Շիրվան քաղաքը աշխարքին երեք մեծ մարդ է տըւել. մինը ես եմ. մինը դու ես. մինն էլ Չարգետրը : Աչուդ Միխակն եմ. մութարաղներ ունիմ դաւթար-դաւթար : Գրիր, գրիր, թող ազգը փառաւորուի :

Ասաց հայրենակիցս և հեռացաւ :

Ուրիշ անեկդոտներ չեմ յիշում :

Եթէ զրուածքիս մէջ կը գտնէք սուլորդարանութիւններ, ներեցէ՛ք, չտապով եմ գրել :

Բարի եղէ՛ք մի տեղ աւելացնել, որ միշտ հայ մամուլից հալածուած, միշտ վայելել եմ ուսու մամուլի խրախուսանքը եւ սրաշտպանութիւնը :

Դարձեալ խնդրում եմ այս բոլորը գրել ձեր կողմից :

Ընդունեցէ՛ք մի անգամ եւս խորին շնորհակալիքս :


Անսահման յարգանքներով

ՇԻՎԱՆՁԱԴԷ

24 Յուլիսի 1910

Լը - Վօ. Զուիցերիա

(Շիրվանգադէի նամակները կը տանք յաջորդ անգամ)



ԱՆՑԵԱԼՔ

ԿՈՄԻՏԱՍ (1869 – 1935)

Հոկտեմբեր ամսի 21-ին, Փարիզի Վիլ ժուլիֆ արևարձանի հոգեկան հիւանդների ասպատանարանում վախճանեց հայկական արւեստի մեծագոյն վարպետներից մէկը՝ Կոմիտաս Վարդապետը։ Յուզարկաւորութեան հանգէսը տեղի ունեցաւ Փարիզի հայոց եկեղեցում, խուռն բաղմութեան ներկայութեամբ։ Դադաղը ենթադրոււմ է փոխադրել էջմիածին, եթէ խորհրդային իշխանութիւնը արտօնութիւն տայ։


Կոմիտասի մասին շատ է գրւած եւ դեռ շատ էլ կը գրուի։ Այստեղ մենք տալիս ենք միայն նրա կեանքի գլխաւոր գծերը։

Կոմիտասը Կուտինա կամ Քիւթահիա քաղաքից էր։ Ծնւել էր 1869 թ. Սեպտ. 26-ին։ Աշխարհիկ անունն էր Սողոմոն Սողոմոնեան։ Հայրը եւ եղբայրը նշանաւոր դպիրներ էին։ Առհասարակ, Սողոմոնեան ընտանիքը յայտնի էր իբր ձայնեղ եւ երաժշտասէր ընտանիք։

1870 թ. մեռնում է մանուկ Սողոմոնի մայրը, իսկ տասը տարի յետոյ՝ նաեւ հայրը։ Սողոմոնը, որ 1876 թ. մտնելով տեղական ազգային վարժարանը եւ 1880 թ. աւարտելով՝ հօր կողմից ուղարկւել էր Բրուսայի դպրոցը, մնում է բոլորովին որբ իր տատի խնամակալութեան ներքոյ, զրկւած ուսումը շարունակելու հնարաւորութիւնից։

Բախտը, սակայն, ժպտում է ժիր ու տաղանդաւոր Սողոմոնին։ 1881 թ. Կուտինայի առաջնորդ Գէորգ վարդապետ Դերձակեանը գնում է էջմիածին եպիսկոպոս ձեռնադրելու։ Գէորգ Դ. Կաթողիկոսը կարգադրում է նրան հետը բերել մի որբ ձեմարանում տեղաւորելու համար։ Քսան որբերից միձակն ընկնում է Սողոմոնին։

Սողոմոնը ձեմարան է ընդունւում 1881 թ. Սեպտ. 15-ին եւ ուսման ընթացքը, դասարանական եւ լսարանական բաժինը աւարտում 1893-ին։ Դեռ աշակերտական նստարանի վրա, վեցերորդ դասարանից սկսած, մտնում է էջմիածնի միաբանների շարքը։ 1890



ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

թ. յունիս 8-ին ձեռնադրուում է աւագ սարկաւագ: 1893 թ. սեպտ. 11-ին ձեռնադրուում է արեղայ կոմիտաս անունով, իսկ 1895 թ. փետր. 26-ին ստանում է վարդապետի աստիճան:

Ճեմարանում կոմիտասը առանձնապէս աչքի է ընկնում իր ձայնով եւ երաժշտական ընդունակութիւններով: «Ճեմարան մը-տած օրից, գրում է նա ինքնակենսագրութեան մէջ, *) Երգիչ եւ Մայր Աթոռի աչքի ընկնող ձայնեղ մանուկներից մէկն էի: Երբ Գէ-որգ Դ. Կաթողիկոսն իջնում էր վեհարանից Մայր Տաճար, ես եւ իմ մի ձայնեղ ընկերս կանգնում էինք նորա Աթոռի մօտ եւ այնպէս երգում միայնակները: Մեր երգելու ժամանակ ձերուների Հայրապետի արցունքները գլորում էին եւ թաւալւելով խիտ ու ձերմակ մօ-րուսի վրայով՝ թագնում էին փիլոնի ծալքերի մէջ»:

1893 թ., երբ Խրիմեան Կաթողիկոսը իր աթոռի վրա հաս-տատուելուց յետոյ, սկսեց մաքրագործել վանքն ու Ճեմարանը «խրիմեանական» տարրերից եւ Ճեմարանի երաժշտութեան ուսու-ցիչ յայտնի Բրիտ. Կարա-Մուրզային էլ ճանապարհ դրեց, Կո-միտաս արեղան պաշտօնի կոչւեց նրա տեղը եւ դասաւանդեց մին-չեւ 1896 թ.:

1896 թ. Ա. Մանթաշեանի նիւթական օժանդակութեամբ կոմի-տասը գնում է Գերմանիա երաժշտական ուսումը կատարելագործե-լու համար: Բէէրլինում մտնում է արքունի երաժշտագէտ Ռիխարդ Շմիդտի մասնաւոր երաժշտանոցը, որ աւարտում է 1899 թ. յու-նիսին: Միաժամանակ տեսական ու գործնական երաժշտութեան մասնաւոր դասեր է առնում Ռ. Շմիդտից եւ, իրրեւ խսկական ու-սանող, հետեւում է Բէէրլինի համալսարանի փիլիսոփայական բաժ-նին՝ լրացնելով երաժշտութեան փիլիսոփայական - պատմական դասընթացքը: Եւ 1899 թ. սեպտ. ին վերադառնալով էջմիածին՝ նորից ստանձնում է Ճեմարանի երաժշտութեան դասատուի պաշ-տօնը, նշանակւելով միաժամանակ Մայր Աթոռի երաժշտապետ եւ Մայր Տաճարի բազմաձայն խմբի վարիչ:

Իբր լաւ սրտի տէր մարդ, հմուտ մասնագէտ, տաղանդաւոր ուսուցիչ ու դաստիարակ, Կոմիտասը շատ սիրւած էր Ճեմարանի աշակերտութեան կողմից: Նա երաժշտութեան դասաւանդութիւնը հասցրեց բարձրութեան եւ բազմաձայն երգեցիկ խմբով կենդանու-թիւն տւեց էջմիածնին: Նրա համերգներն ու Ճեմարանական հան-

*) «Հայրենիք» ամս. 1924 թ., էիւ 7 - Կոմիտասի ձեռագիր գրւած - ինքնակենսա-գրութիւնը, ուր առաջ են բերւած իր կեանքի փաստերը եւ տրւած է երկերի ցան-կը:

դէսները լայնօրէն տարածեցին նրա համբաւը: Մանաւանդ երբ յաջողեց ձեմարանի խմբով անցնել Թիֆլիս եւ այնտեղ կազմակերպել ժողովրդական համերգներ: Հայ ժողովրդական երգը այդ օրից սկսած դուրս եկաւ գիւղական խրճիթներից եւ յաղթական քայլերով մուտք գործեց նաեւ հայ մտաւորականի ու քաղքենու տները:

Պէտք է ասել, որ Կոմիտասը գործում էր ամենաանպատասխանատու: Եթէ ձեմարանի ուսուցչութիւնն ու մի քանի կրթած վարդապետներ հասկանում ու քաջալերում էին նրա գործը, միաբանութեան մեծ մասը, մանաւանդ բարձր կղերը, մէջը հաշելով եւ կաթուղիկոսին, կարելի է ասել, թշնամաբար էին նայում «փրօդ» ու «Փարմասոն» վարդապետի կատարած աշխատանքին, մանաւանդ բազմաձայն երաժշտութեան: Քանի՜ քանի անգամներ Կոմիտասը արցունքներ է կուլ տւել իրեն հասցւած անարդանքի համար: Խրիմեան կաթուղիկոսը չէր քաջում նոյն իսկ հրապարակով, հանդէսի ժամանակ անարգելու նրան:

Բայց եւ այնպէս Կոմիտասը չէր յուսահատուում. նրա կենսութեան ու լաւատես ընտելութիւնը արհամարհում էր ամէն արգելք: Առանց դաշնամուրի, դուրի մասնագիտական տարրական յարմարութիւններից, միայն ճոճուան Փիս-հարմոնիայով եւ թուղթն ու մատիտը ձեռքին, չընկալած աշակերտութեան եւ համակիրների գուրգուրանքով, նա անդուլ կերպով առաջ տարաւ իր գործը, սովորեցրեց, երգեց, ձայնագրեց, ուսումնասիրեց, քննութեան ենթարկեց հայ եկեղեցական ու մանաւանդ ժողովրդական երգը, սերունդ հասցրեց եւ աննկուն կամքի ու բացառիկ տաղանդի շնորհիւ յաղթահարելով իր դէմ հանդուր բոլոր խոչընդոտները՝ մի նոր էջ բաց արաւ հայոց երաժշտական գիտութեան եւ արւեստի մէջ:

Բացի էջմիածնի ու Թիֆլիսի համերգներից ու դասախօսութիւններից, Կոմիտասը հայ երաժշտութեան մասին համերգ-դասախօսութիւններ ունեցաւ եւ Կովկասի հայաբնակ ուրիշ վայրերում, ինչպէս եւ արտասահմանում՝ Բէրլին, Փարիզ, Բեռն, Լոզան, Ժընէվ, Վենետիկ եւ այլն, ամէն տեղ առաջ բերելով ընդհանուր խանդավառութիւն: Առանձնապէս պէտք է յիշել նրա 1899 թ. դասախօսութիւնները Բէրլինում եւ 1907 թ. դեկտ.ի մեծ համերգը Փարիզում, որոնց մասին ջերմ համակրանքով արտայայտեցին օտար երաժշտական հրատարակութիւնները:

Օսմանեան Սահմանադրութիւնից յետոյ, Կոմիտասը՝ մասամբ զգւած էջմիածնի ներքին խարդաւանանքներից, մասամբ աւելի լայն ասպարէզ դուրս գալու գիտաւորութեամբ, հեռացաւ էջմիածնից եւ երաժշտական գործունէութեան կենտրոն դարձրեց Կ.

Պոլիսը, ուր արտակարգ հետաքրքրութիւն ու ոգեւորութիւն առաջ բերեց իր դործի շուրջը: Թիւրքահայոց հանրային-մտաւոր վերելքի մէջ, նախապատերազմական տարիներին, Կոմիտսի դերը չատմեծ եղաւ:

Պատերազմը եկաւ մեռցնելու ամէն կեանք: Ապրիլեան Եղեռնին Կոմիտասն էլ տարագրեց եւ թէպէտ կէս ճանապարհից վերադարձեց Պոլիս, բայց այլեւս նախկին Կոմիտասը չէր մնացել: Հետագայ դէպքերը աւելի եւս կոտորեցին նրան եւ հետեւանքը եղաւ մաքի մթաղնում, երկար տարիների տառապանք եւ, ի վերջոյ, այդ մեծ հոգու նիւթական անօթի վերջնական քայքայում . . .

Մարմնով Կոմիտասը վաղուց էր մեռած: Նրա հոգին, սակայն, կենդանի է եւ կապրի յաւիտեան: Կապրի հայ ժողովրդական երգի միջոցով: Կապրի գիտութեան եւ արւեստին նւիրած իր երկերով, բազմաթիւ ուսումնասիրութիւններով ու ձայնագրութիւններով, հայ ժողովրդի սրտին այնքա՛ն ընտանի ու հարազատ իր եղանակներով:

ԲԺ. Յ. ՏԵՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

(ՕՎԻ)

Միանգամայն պատահական կերպով իմացայ, որ անցեալներում վախճանւել է մեր հասարակական աչքի ընկնող գործիչներից մէկը՝ Բ. Յ. Տէր Միքայէլեանը (Օվի): Առաջին եւ բնական ցանկութիւնս էր իմնալ թէ ե՞րբ է վախճանւել, ի՞նչպիսի պայմաններում, եւ կարելի չէղաւ, որովհետեւ նա վախճանւել է «սոցիալիստական» Ռուսաստանում՝ «աղատութիւնների» աշխարհում, ուր Օվիի պէս մարդկանց մասին կարելի չէ բան իմանալ: Տասնեակ տարիներ մարդը իր ուժը սպառել է հասարակական գործի ասպարէզում — բժիշկ, խմբագիր, հանրային բնոյթ կրող ձեռնրկների նախագահ կամ գործօն անդամ եւ այն էլ ցարական կարգերի դաժան պայմաններում — եւ ահա մեռնում է հայրենի հողից քշւած, հեռաւոր Խարկովում, եւ ո՛չ մի թերթ ո՛չ մի խօսք անգամ չգրեց նրա մասին . . .

Օվին ազուլեցի էր: Աւարտելով Խարկովի համալսարանը, շուրջ երեսուն տարի առաջ, նա հաստատուեց Երեւանում, իբրեւ քաղաքային հիւանդանոցի աւագ բժիշկ: Նախապատերազմեան Երեւանը ընդհանրապէս չատ աղքատ էր հասարակական գործիչներով, եւ Օվին այնտեղ իր եռանդուն ընտելութեամբ իսկոյն աչքի ընկաւ եւ դիրք գրաւեց հասարակական շրջաններում՝ վայելելով չոր-

ՅՈՒԱԿ ԽԱՆՁԱՏԵԱՆ

Ինչպէս իմանում ենք «Խորհրդ. Հայաստան»ի ծանուցումների բաժնից, սեպտ. 29-ին, Մոսկւայում, երկարատեւ ու ծանր հիւանդութիւնից յետոյ, մահացել է ծանօթ գրական – քննադատ Յուլիա Խանդատեանը:

Խորհրդային մամուլում, բնականաբար, ոչինչ չգրեցին այդ բարձրորակ մտաւորականի մասին, որովհետեւ նա մեռաւ աքսորի մէջ: Եթէ ծննդավայրում մնար, գուցէ եւ չմեռնէր. Խորհրդ. իշխանութիւնն էր, որ նրան քչեց դէպի Հիւսիսի ցրտերը, հակառակ Թոքախտով հիւանդ լինելուն:

Յ. Խանդատեանը Ղարա-Քիլիսեցի էր, չուրջ յիսուն տարեկան: Աւարտել էր Լազարեան ճեմարանը, ապա՝ Մոսկւայի համալսարանի պատմա-բանասիրական բաժինը: Պատկանում էր հայ սոցիալ – դեմոկրատական կազմակերպութեան, Դ. Անանունի եւ Բ. Իշխանեանի հետ, եւ Մոսկւայի «Գարուն» արձանախի գլխաւոր աշխատակիցներից մէկն էր: Բաղմահմուտ եւ պատրաստած քննադատ էր: Իր գրածքները համեմատաբար քիչ էին մեղանշում մարքսեան դաւանամուրթեան ծայրայեղութիւններով, ուրիշ մարքսիստների համեմատութեամբ, նա լայնախոհ եւ առողջամիտ քննադատ էր:

Խանդատեանը դործում էր կրթական եւ գրական ասպարէզում. պրոֆէսոր էր Երեւանի համալսարանում եւ խմբագրութեան անդամ «Նորք» պարբերականի: Նախախորհրդային շրջանում աշխատակցել է «Գարուն» արձանախին, Բաղուրի «Գործ» ամսագրին եւ ուրիշ պարբերականների ու թերթերի, գլխաւորապէս, սոցիալ – Դեմոկրատ ուղղութեան: Հայաստանի Հանրապետութեան ստեղծումից յետոյ, ինչպէս եւ ուրիշներ Հայ Սոցիալ Դեմոկրատներից, Խանդատեանն էլ աւելի մօտեցաւ հայ իրականութեան եւ կանգնեց անկախութեան եւ ազգային մշակոյթի տեսակէտի վրա: Եւ իր այս տեսակէտի համար էլ ի վերջոյ չարաչար պատժւեց. նա հեռացւեց Հայաստանից, ազգային թեքումի ամբաստանութեամբ եւ այլևս չվերադարձաւ. «երկարատեւ ու ծանր հիւանդութիւնից յետոյ» մեռաւ ցրտաշունչ հիւսիսում:

ԴՈԿՏ. ՅՈՎՀ. ԷՐԿԱՆԵԱՆ

Նիւ Եորքում, հոկտ. 22-ին, չուրջ 65 տարեկան հասակում, մեռել է ամերիկահայ դաղութին լաւ ծանօթ, համակրելի հասարակակն գործիչ եւ գրասէր Դոկտ. Յովհ. Էրկանեանը: Հանգուց-




ԼՆԻՈՆ ԹԱԴԵՈՍԵԱՆ — ՊԱՊԱՇԱ (նստած)
(Բնկերների շրջանում)

եալը Ռուդոստոցի էր եւ վաղուց հաստատուած Ամերիկայում: Ըզ-
րաղումով առամնաբոյժ էր: Նկարագրով անկախ ու պարկեշտ
մարդ էր, սիրւած ամենքի կողմից: Երկար տարիներ անդամակցել
է Բարեգործականին: Գործակից է եղել Հ. Հանրապետութեան
ներկայացուցիչ Արմէն Գարօին եւ Հայկական Պրէս Բիւրօին: Նա-
խագահն էր Նահատակ Գրաղէտների Բարեկամների Միութեան
Նիւ Եորքի հաստածի եւ նիւթապէս ու բարոյապէս սատար է հան-
դիսացել Միութեան մատենաշարի հրատարակութեան: Դր. էր-
կանեանի մահով ամերիկահայութիւնը կորցրեց իր մտաւորակա-
նութեան լաւագոյն ներկայացուցիչներից մէկին:

ԼՆԻՈՆ ԹԱԴԵՈՍԵԱՆ

(Պապաշա)

Դեկտ. 19-ին, Փարիզում, վախճանեց Հ. Յ. Դաշնակցութեան
վաստակաւոր գործիչներից մէկը՝ Լեւոն Թաղէոսեան — Պապաշան:
Հանդուցեալը Քրիստ. Միքայէլեանի քրոջ որդին էր, ծն. 1865 թ.,
Ազուլիսում: Մնւած ու դաստիարակւած էր Քրիստաւորի խնամա-
կալութեան եւ գաղափարական շնչի տակ: Թէ որպէս հանրային
գործիչ եւ թէ իրրեւ դաշնակցական, հաղադիւտ ազնուութեան ու
գաղափարարանութեան տէր մարդ էր եւ մեծ յարգանք ու վստահու-
թիւն էր վայելում ընկերների եւ համակիրների աչքում: Եղել է Հա-
յաստանի Խորհրդարանի երեսփոխան, Հ. Յ. Դաշնակցութեան
կենտր. Կոմիտէի, Ընդհանուր Ժողովների եւ Գերագոյն Դատ.
Ատեանի անդամ: Վերջին տասը տարիները վարում էր Հ. Յ. Դ.
կենտր. Դիւանի գործերը: Իր կեանքի եւ գործի մանրամասնու-
թիւնները կը տանք յաջորդ անգամ:



ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՑԹ

ՌԱՄԿԱՎԱՐՆԵՐԸ ԵՒ ԲՈՂՇԵՒԻԿՆԵՐԸ

Հայաստանի խորհրդայնացման 15ամեակի առթիւ ռամկավար քերթերը լիքն են ներքաղական յօդածներով բոլշեւիկների հասցէին: Անտեղեակ ընթերցողը այն տպաւորութիւնն է ստանում, որ ռամկավարները հենց սկզբից ջատագով են եղել խորհրդային իշխանութեան: Իրողութիւնը, սակայն, ճիշդ հակառակն է. ռամկավարները Հայաստանում գրեւոր ժամանակ Դաշնակցականներից էլ աւելի ատում էին բոլշեւիկներին, եւ Դաշնակցականների հասցէին ուղղած ներքաղական մտայնություններից մէկն էլ այն էր, որ վերջիններիս համարում էին բոլշեւիկ: Այժմ, երբ բոլշեւիկները իշխանութիւն են, վերաբերումը հիմնովի փոխւած է:

Թե՛ ռամկավարները իրապէս ինչ կարծիք ունէին հայ բոլշեւիկների մասին, փաստեր շատ կան: Այստեղ առաջ կը բերենք միայն մէկը — նրանց կոչը՝ ուղղւած Հայաստանի ժողովրդին բոլշեւիկների առաջ բերած 1920 թ. մայիսեան խռովութիւնների առթիւ: Ազգութեանի խորհրդայնացումից յետոյ բոլշեւիկները Հայաստանում էլ փորձեցին հաստատել խորհրդային իշխանութիւն, բայց հայ ժողովուրդը մի մարդու պէս ոտքի ելաւ եւ վճռականորէն ճնշեց նրանց յարուցած խռովութիւնները: Բոլշեւիկներին ճնշողների շարքում էին եւ հայ ռամկավարները, որոնց Հայաստանի խորհուրդը, ի միջի այլոց, հրատարակեց հետեւեալ կոչը:

ՀԱՅ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿՈՉ

Հայրենակիցներ: Այն ժամանակ, երբ հայկական հարցի լուծումը իր վերջին ամենամփափուկ փուլին մէջ է, եւ ամենամփոք մի ծանրաց կարող է նժարն այս կամ այն կողմը թեքել, պատահեցաւ դժբախտաբար, մի ռաբրգութիւն, որ չպէտք է պատահէր եւ հայ արիւն կրող ոչ մի մարդու ձեռքը անոր մէջ չպէտք է խառն լինէր:

Մեր աւերակ ու քանդուած հայրենիքի մէջ հայ ժողովուրդը բնաջնջող, մեզ կոտորող, մեր հայրենեաց լեռ ու ձոր, գետն ու վտակը նայ արիւնով ներկող

Իբրեւիստ կուսակցութիւնը, որ Նուրի եւ Խալիլ փաշաների միջոցով փոխադրւած էր Ադրբեջան, գառան մորքը վերան առած, մի օր, յանկարծ, Բագուի մէջ յայտարարեց սովիէթական իշխանութիւն եւ առաջին օրն իսկ իր նշանաւոր ուղտիմատումով պահանջեց հայկական նահապետութենէն երեք օրէն յանձնել Ղարաբաղ ու Զանգեզուր եւ իր գորախմբերն արդէն շարժման մէջ դրաւ, Հայաստանի վրայէն երբեք միանալու Մուսթաֆա ֆէմալ Փաշայի հետ, որը մինչեւ այժմ կը շարունակէ ջարդել

տասնեակ հազարաւոր հայեր կիլիկիոյ մէջ, հակառակ մինչեւ իսկ փրանսական բանակի ցոյց տաւ պաշտպանութեան:

Խելագար եւ երկու աչքերով կոյրը միայն կարող էր չտեսնել այս կերպով Հայկական Հանրապետութեան ընդհանրապէս եւ Թիւրքահայաստանին մասնաւորապէս սպառնացող մոռ վտանգը, եւ սակայն գտնւեցան հայ անուն կրող մարդեր եւ հայ իրականութեան մէջ գործող, բայց հայ ոգիին եւ զգացմունքներուն խորք խմբակներ, որոնք փոխանակ Հայաստանի սահմանները պաշտպանելու այդ վտանգին դէմ, կողմնակից յայտարարեցին զիրենք այդ հայադար շարժման Հ. Ալեքսանդրապոլի ու Ղարսի մէջ դիմեցին եղբայրասպանութեան:

Այդ խելագարները ոչ միայն չմտածեցին, որ այդ կերպով վերջին անբուժելի հարւածը կուտան լուծման օրերու մէջ գտնուող հայկական հարցին, այլ մինչեւ անգամ հոգ չընդին, քէ մեր երկրի սահմանները կը բանան եւ կը իրաւիւրեն տանիկ-աղբիւրներէն գառնագոգեստ գայլերը, որպէս զի մնացեալ հայութեան դիակներու վրայէն երբեք ու միանգամ մեր դարաւոր թշնամիին, Էմվէրի ու Թալէթի հարազատ յաջորդ Մուստաֆա ֆէմալին:

Տարակոյս չկայ, որ ամէն հայ մարդ, որ իր երակներուն մէջ հայ արիւն կը կրէ եւ իր գլխուն մէջ փոքր ինչ խելք, կը դատապարտէ այդպիսի խելագար

շարժումը, եւս առաւել քիւրֆահայերս, որ անոր ամբիջական հետեւանքները պիտի կրենք: Այդ շարժումն ինչ տեսակ շարժասիրտեր ալ ունեցած լինէր, չի կրնար արդարեանալ, եւ մենք մասնաւորապէս պէտք է ծառանալք անոր դէմ եւ մեր բոլոր ուժերը ի սպաս դնենք կառավարութեան, իր բնին մէջ խեղդելու գայն եւ շեղեցնելու իր ոգրադաւ նպատակէն:

Հայ ռամկավար կուսակցութիւնը, մանաւանդ որ տոգորւած է եղած միշտ հայ ազգի կրած տառապանքներով, որ կեցած է այն ուղիին վրա, որ նախորդ բազմահազար նահատակներն իրենց արիւնով գծած են նորա առաջ, ամենէն աւելի իրաւունք ունի զայրոյթով մերժելու այդ հայրենադար ոգիւրը, դատապարտելու անոր հեղինակները, միաժամանակ իր ուժերը տրամադրելով հայրենիքին սպառնացող ներկայ վտանգին հանդէպ: Բնաւ չենք կասկածիր, որ այդպէս կը մտածեն նաեւ բոլոր մեր ընկերները եւ բոլոր անոնք, որոնք հայ անունը եւ հայ զգացումը կը կրեն:

Կորչի՛ եղբայրասպան եւ հայրենադար ոգիւրը:

Կեցցէ՛ հայ ոգին:

Կեցցէ՛ միացեալ եւ անկախ Հայաստանը:

Հայ ռամկավար կուսակցութեան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴ

1920 թ. Մայիսի 14-ին.

Երեւան.

ԱՐՇԱԿ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ԿՏԱԿԸ

Իբրեւ հետեւանք խորհրդային յեղաշրջման, անհաշիւ ազգային հարստութիւններ ոչնչացան: Դրանց շարքում արձանագրեցին եւ Բագուի յայտնի նաւարդիւնարերող Արշակ Ղուկասեանի կտակի կորուստը:

Ա. Ղուկասեանը վախճանեց 1917 թ. յունւարին, Բագուում: Մահանից հինգ տարի առաջ կազմած կտակով նա իր հարստութիւնը կտակել էր ազգային նպատակների: Կտակակատար նշանակել էր երեք եղբայրներին՝ Պողոս, Յակովբ

և Արքահամ Ղուկասեաններին: Սրանք պարտաւոր էին իր մահւանից ոչ ուշ քան երեք տարի դրամի վերածել քողմած ամբողջ ունեցւածքը եւ ստացւած գումարը գործադրել կտակում ցոյց տրւած նպատակներին:

Այնուհետեւ վրա հասաւ յեղափոխութիւնը: Կտակակատարները անկարող եղան կատարել իրենց եղբոր կամքը եւ տէր չկանգնեցին կտակի: Լուրջ միջոց ձեռք չառնելիս յայտ բերելու եւ ապահովելու համար հանգուցեալի քողած գումարներն ու միւս հարստութիւնները:

Հայաստանի Հանրապետութեան ստեղծումից յետոյ միայն, Հայաստանի Բազուի դեսպան Մ. Յարութիւնեանը հետաքրքրեց այդ գործով եւ քանակ փորկել Ս. Ղուկասեանի կտակը: Այդ նըստակալով նա մի շարք հայեր կատարեց, սակայն հանդիպեց փաղափակեան եւ իրաւական դժարութիւններին: Հայաստանի կառավ. գրած նրա 17 սեպտ. 1920 թ. նամակից տեսնում ենք, որ այդ դժարութիւնները վերացնելու համար նա հրաւիրել է ձեռնհաս իրաւաբաններից մի խորհրդակցութիւն, որը «հարցի փաղափակեան կողմի մասին ոչինչ չկարողացաւ ասել. իսկ բուն փաղափակեան իրաւաբանական դժարութեան մասին հետեւեալ եզրակացութեան եկաւ. 1) Հայաստանի կառավարութիւնը իւր արտասահմանեան ներկայացուցիչների միջոցով դիմումն պիտի անի հանգուցեալի կտակակատարներին (Պողոս, Արքահամ եւ Պողոսի որդի Արմենակ Ղուկասեաններին) եւ առաջարկի, որ այդ գործին ընթացք տան, եւ տանք ինչ ձեւով յարմար կը համարեն վաճառել ակցիաները արտասահմանում եւ դրամի վերածել. 2) Կտակակատարները հրապարակով պիտի յայտարարեն, թէ որտեղ եւ ինչ հիմնարկութիւն են որոշել բանալ. 3) Կտակակատարները իրենց կողմից մէկն պիտի լիազօրեն, որպէս զի Ար-

շակ Ղուկասեանի ունեցւածքը ռէալիզացիայի ենթարկի եւ Ազրբէջանի կառավարութիւնից ստանայ. 4) Ամենից յարմարն է, որ լիազօրութիւն տրուի Հայաստանի Հանրապետութեան Լուսաւորութեան մինիստրութեան. 5) Ժառանգների մէկն ու մէկի կողմից դիմում պիտի արւի Բազուի *Կազեռ-նայա Պալատային* եւ պահանջի տեղեկութիւններ, թէ Ար. Ղուկասեանի սահման վայրկեանին գումարը ի՞նչ չափերի է եղել հասած. 6) Առաջիկայ հաշտութեան պայմանագրում, որը տի կնքի Սովիէթական Ռուսաստանի եւ կոմ Ազրբէջանի հետ, անպատճառ մի կէտ մտցնել նաեւ կտակների վերաբերութեամբ:»

Այս կէտերից եւ ոչ մէկն, ի հարկէ, չգործադրեց. Հայաստանի կառավարութիւնն այդ օրերին բռնւած էր այլ մտահագութիւններով. կտակակատարներն էլ, բոլշեւիկների ձեռքից հագլու ազատւած, եթէ ուզեցնային էլ, ոչինչ չէին կարող անել: Եւ Արշակ Ղուկասեանի կտակը մատնեց կորստեան:

Իսկ ի՞նչ էր կտակի բովանդակութիւնը: Այդ մասին կտակի պատճենից փաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները.

Կտակը կազմւած է եղել 1912 թ. յունիս. 2-ին, ներկայութեամբ ինծ. Արշ. Ար. Պարոնեանի, ինծ. Յ. Կ. Տէր-Մարկոսեանի եւ Օ. Ի. Տոգէի: Ա. Ղուկասեանի մահւանից յետոյ, կըտակը հաստատւած է Բազուի Շրջ. Դատարանում, 1917 թ. մայիս 16-ին:

Կտակը բաղկացած է 17 կէտերից, որոնցով 200,000 ական ուրի յատկացւում է Պողոս, Յակովբ եւ Արքահամ եղբայրներին եւ Աննա Մաղատեան ու Սաքենիկ Բեզլարեան քոյրերին: Վերջինս ազգական՝ Նիմային՝ 75,000 ա., Տիկ. Մարիամ Յովհաննիսեանին՝ 10 հազար ա., Պողոս, Յակովբ եւ Արքահամ եղբայրներն՝ Բազուի բոլոր անշարժ գոյքերը, ամենին հաւասար

չափով: Բազուի Հայ. Մարդասիրական Ընկերութեան՝ 25,000 ա., իբրեւ անձնամխելի դրամագլուխ. 25,000 ա. կարիքաւոր ազգականներին: Անձնական տան բոլոր շարժական գոյքը՝ մօր՝ Հռիփսիմէ Ղուկասեանին, իսկ սրա մահից յետոյ՝ եղբորորդի Արմենակ Ղուկասեանին: Թաղման եւ յուշարձան կանգնեցնելու ծախս՝ 110,000 ա.: Որոշ գումար բոշակառու ուսանողների ուսման լրացման համար: Մնացած ունեցւածքը՝ դրամ, տոկոսաբեր քղզքեր, մուրհակներ, փոխատութիւններ եւ այլն՝ ամբողջապէս յատկացւում է Ռուսահայաստանում կամ Թիւրքահայաստանում լուսաւորչականների համար Ղուկասեան անունով բարեսիրական կամ կրթական հիմնարկութիւն բանալու: Կտակակատարներն նշանակում են Պո-

ղոս, Յակովբ եւ Արքահամ եղբայրները, որոնք երեք տարւայ ընթացքում պէտք է դրամի վերածեն կտակով բողոքած ստացւածքը:

Բազուի Արքունական Պալատի 1917 թ. սեպտ. 13-ին կտակակատարներին հաղորդած մանրամասն տեղեկութիւններից երեւում է, որ Արշակ Ղուկասեանի մահւանից յետոյ մնացել էր 8, 966,07 ա. 09 կ. կարողութիւն, որը ամբողջապէս անցնում էր կտակակատարների տրամադրութեան տակ: Այդ գումարից անելի քան 6 միլիոն ուրլի (3 միլիոն տոլար) յատկացւում էր Հայաստանում դպրոց կամ բարեսիրական մի հաստատութիւն հիմնելու համար: Ուրիշ շատ հարստութիւնների հետ բոլշեւիկները այս դրամն էլ կերան:

ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՅԻ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԸ

Այս տարի լրանում է Թաւրիզի Արամեան Դպրոցի հարիւրամեակը: Այս դպրոցը իրաւունայ մշակույթի առաջին կորողներից մէկն է, որ ահագին կերպական դեր է կատարել Ատրպատականի կեանքում: Այսօր այդ կարեւոր հիմնարկութիւնը գտնւում է նիւթական խիստ ծանր դրութեան մէջ: Թէ՛ հարիւրամեայ յոբելեանը տօնելու եւ թէ՛ որոշ նիւթական միջոց ապահովելու

նպատակով որոշւած է կատարել դրպրոցի յոբելեանական տօնակատարութիւնը 1936 թ. Ապրիլ 19-ին: Այդ նշանակալի կազմւած է յատուկ մի յանձնաժողով Ատրպատականի առաջնորդ Ներսէս Արքեպ. Մելիք-Թանգեանի նախագահութեան ներքոյ: Ուղեւորներ, շրջապատներ, հեռագիրներ եւ դրամական առաւումներ պէտք է ուղղել Ներսէս Սրբազանի հասցէին:

ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

ՆՈՐ ՀԱՍԿԵՐ

Մի նոր մանկական հանդես էս, այս անգամ՝ Թեհրանում: «Նոր Հասկեր» երկշաբաթաբերթի արդեն լոյս տեսած չորս յիսամյակները հանելի տպաւորութիւն են բողմում: Մեզ քուտ է, որ խմբագրութիւնը իրեն համար օրինակ առնելով Թիֆլիսի երբեմնի «Հասկեր» հանդէսը՝ ըստ ամենայնի նիշդ է վարել: «Հասկեր»ը ժամանակին մանուկներից շատ էին սիրւած: Պէտք է յուսալ, որ «Նոր Հասկեր»-ն էլ յաջողութիւն կունենան իրանահայ նոր սերնդի մօտ: Ասում ենք «իրանահայ», որովհետեւ լեզուական պատճառներով հազիւ քէ մա լայն տարածում գտնէ մեր սփիւտում: «Նոր Հասկեր»-ի լեզուն արեւելահայ բարբառն է: Հակառակ դրան, մենք չեմք օրէն յամաճարարում ենք «Նոր Հասկեր»ը տարածել ամէն տեղ: լեզուական դժարութիւնները անյաղթահարելի չեն:

«Նոր Հասկեր»-ի առաւելութիւնը, միւս մանկական հանդէսների համեմատութեամբ, ամենից առաջ բովանդակութեան բազմազանութիւնն ու աշխուժութիւնն է: Բացի պատմածքներից ու ռոտանտիկներից, կան հետաքրքրական բաժիններ, որոնք սրում են մանուկների հետաքրքրութիւնն ու հրաբարատութիւնը, գարեացնում են ներքին - գիտական նորութիւններ, ըստեղծագործութեան էջ, գարեալիք, «խելի տոպրակ», «ուրախ ժամանց», «բեռնից բեռն», «հարց ու պատասխան» եւ այլն: Բաժինների նիւթերը, առ հասարակ, գրաւիչ են երեխաների

համար: Բոլոր բաժինները զարգարած են նկարներով ու ծաղրանկարներով: Արժէքաւոր է եւ այն, որ խմբագրութիւնը ինքնագործունէութեան է մղում իր մատաղ ընթերցողներին, մտածել ու գրել է տալիս եւ աշխատում է կենդանի կապ պահել նրանց հետ:

Սակայն, պէտք է մատնանշենք եւ լուրջ բերութիւններ. «Նախ» գրածներին լեզուն, ընդհանուր առմամբ, անյսնամ է. պատահում են քերականական ու ռեական անցողութիւններ եւ անհարթութիւններ: Կան օտար բառեր, որոնք հեշտութեամբ կարող են փոխարինւել հայերէն գեղեցիկ բառերով: Զի կարելի ասել «վեցը հատ», «վեցը տարի», «յառնեցին», «չուում» եւ այլն: Ինչո՞ւ ինչ, երբ Հնդկաստանի այդ գետի անունը հայերէն ինչո՞ւ է: «Հիպոտիզոն Բ» կամ «ստարաբուդ»-ս որն է. ինչո՞ւ «նեգր», երբ կան խափշիկը, սեւամորթը: Տեւիզիոնը «Նոր Հասկեր»ի խմբագրութիւնը քարգմանել է *Մարմնատեսութիւն*, անշուշտ շփոթելով ռուսերէն «տելո» (*Մարմին*) բառի հետ: Այս կարգի սխալները մեծ վնաս են հասցնում լաւ գործին: Լեզուի մաքրութիւնն ու ճշտութիւնը առաջին պայմանն է մանկական հրատարակութեան համար:

Անկարեւոր չէ եւ մի այլ բերութիւն. հանդէսի բովանդակութեան մէջ շատ տեղ է տրւում քարգմանական նիւթերի, գլխաւորապէս ռուս հեղինակներից: Հարկաւոր է աշխատել ինքնուրոյն, հայկական բնոյթ կրող նիւ-

թեր տալ, օտարներից առնելիս էլ գերադասելի է ոչ քէ բառացի քարգմանել, այլ ազատ փոխադրութիւն առնել՝ յարմարեցնելով հայ մանուկի հասկացողութիւններին ու հաշակին:

Այս բոլորով հանդերձ, «Նոր Հասկեր»-ը օգտակար ձեռնարկ է եւ արժանի է քաջալերանքի:

ՄԱՍԻՍ ՀՐԱՏ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Նոյեմբ. 3-ին, Բուքրէշում, գումարւած է «Մասիս» Հրատարակչական Ընկերութեան ընդհանուր ժողովը: Վարչութեան ներկայացրած զեկուցումից ու հաշիւներից պարզւել է հետեւեալ պատկերը. -

Վարչութիւնը 1934 թ. Ապրիլ 1-ին գործի անցնելիս ունեցել է 112000 լէշ: Այս գումարով ձեռնարկւած է *Մանկական Գրադարանի* հրատարակութեան: Մինչեւ այժմ հրատարակւած է 14 քիւ գիրք՝ ընտիր բովանդակութեամբ եւ արտաքինով: Այդ գրքերի վրա ծախսւած է 120,000 լէշ, իսկ բաժանորդագրութիւնից գանձւած է 40,000 լէշ: *Մանկական Գրադարանի* տարածումը եղել է ընդամենը 782 օրինակ, որից 420ը Ռումանիա, մնացածը՝ արտասահման:

Մէկ տարւայ փորձը աչքի առաջ ունենալով՝ Ընդհ. ժողովը որոշել է. -

ա) - Շարունակել *Մանկական Գրադարանի* հրատարակութիւնը, նոյն ձեւով, ծաւալով ու գնով, տարեկան 24 քրքոյլ, ջանալով բաժանորդների քիւր հասցնել 1200-ի:

բ) - Ձեռնարկել *Ժողովրդական Մատենադար* անունով նոր շարքի հրատարակութեան՝ նպատակ ունենալով զարկ տալ չափահասների ընթերցանութեան:

գ) - Հաստատել գրավաճառութեան բաժին՝ ժողովրդին աժանագին գրականութիւն հասցնելու եւ արտասահմանի գանձումները դիւրացնելու նպատակով:

«Մասիս»-ը, որպէս հրատարակչական ձեռնարկ, մեր Սփիւռքի լուսաւոր երեւոյթներից մէկն է եւ արժանի է անվերապահ քաջալերանքի:

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՆ ՎՐԱՅԵՐԷՆ

Թիֆլիսի Համալսարանի հրատարակութեամբ լոյս է տեսել Սայեաթ Նովայի ամբողջական երկերի հրատարակութիւնը վրացերէն լեզուով: Թարգմանութիւնը արել է պրոֆ. Մելիքսեթ-Բեքը, գործի կատարեալ գիտակցութեամբ եւ ձեռնհասութեամբ: Թարգմանութիւնը չափածոյ է եւ ընդհանուր առմամբ պահւած է բնագրի չափը: Գրքին կցւած է մի ընդհանուր ներածութիւն եւ բանաստեղծի կարգի նկատագրութիւնը, այլ եւ մի գլուխ Սայաթ Նովայի ստեղծագործութեան գրական-ժողովրդական աղբիւրների մասին, ինչպէս նաեւ արեւելեան լեզուներից փոխ առնւած բառերի բառարան:

ԿԵԱՆՔ ՆԻ ԱՐԻԵՍ

Պարսաւեան եղբայրների «Կեանք եւ Արիւստ» տարեգիրքը վերածւած է պարբերականի եւ այսուհետեւ լոյս է տեսնելու իրրեւ ամսագիր, նոյն տիպով ու քաղով, պատկերազարդ 32 էջերից բաղկացած: Առաջին քիւ բովանդակութիւնը հետաքրքրական է: Հասարակութիւնը պէտք է որ քաջալերէ հայ մշակոյթին ծառայող այս գործը:

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

N. MARR et M. BRIÈRE — LA LANGUE GÉORGIENNE.

Firmin - Didot et C^{ie}, Paris, 1931. XVI + 858.

Այս ընդարձակ գործը վրաց հին լեզվի փերականութիւն է, որ գրած է Մ. Բրիէր, հիմնելով այն դասախօսութեան վրա, որ արած է Ն. Մառ Փարիզի «Արեւելեան կենդանի լեզուների վարժարանի» մէջ 1926-27 թ. ձմեռնային 1928 թ. գարնան ընթացքին: Բուն փերականութիւնը կազմած է Մ. Բրիէր, իսկ բաղկիւրը Ն. Մառ: Հատկապէս իր հատուածների բաժինը Ի. Կիպչիձէի հին (1918) ժողովածուն է, որ առնուած է այս գրքի մէջ ինչ-ինչ սրբագրութիւններով:

Նախաբանը, որ գրած է Մ. Բրիէր, համառոտ տեղեկութիւն է տալիս վերաստանի, նրա ցեղերի և լեզուների, նրա պատմական անցեալի, վրացագիտութեան ընթացքի, ինչպէս և այս գրքի կազմութեան և նպատակի մասին: Նկատելով, որ ռուսներն են ամենից աւելի մշակել վրացագիտութիւնը և փրանսացի գիտունների գործերը, որ շատ չեն՝ քէ՛ հին և քէ՛ դժուարամտչելի՝ գրքիս հեղինակը յօրինած է այս աշխատութիւնը վրաց հին լեզվի ուսումը դիրացնելու համար. տալով ընթերցողի ձեռքը մի փերականութիւն՝ հոյովման և խմբարկման տալիսակներով, մի ժողովածու վրաց քէ՛ հին և քէ՛ դասական լեզուով հատուածների և մի բաղկիւր, որ նշանակած ու մեկնուած են հատուածների բոլոր բառերն ու ռեբրն իրենց ընդհանուր և մասնական առումով: Քերականութիւնը հա-

մեմատական չէ, նա վրաց լեզվի բարձրանքին և ցեղակից լեզուներին չի վերաբերում. նա վրաց հին գրական լեզվի փերականութիւն է և մասամբ ժողովրդական լեզվի: Հեղինակն այս բաժնին մէջ խօսում է վրաց լեզվի հընչարանութեան (էջ 1-38), բառակազմութեան (էջ 39-58), ձևաբանութեան (էջ 59-226) և համաձայնութեան (էջ 227-368) մասին, յենելով այն միւրի վրա, որ բերած է ընտիր հատուածների մէջ: Այս բաժնին հետևում են հոլովական (էջ 371-387) և խմբարկման (էջ 388-546) տալիսակները, որ որոշ բարեփոխութեամբ վերաբոլորում են Ն. Մառի մի հին (1908 թ.) աշխատութիւնը վրաց հին լեզվի ձևաբանութեան մասին:

Ընտիր հատուածները երկու մաս ունեն. առաջինը տպագրւած է հին երկու գրութեամբ, որ գուցահեռ են մեր երկարագրին և բոլորագրին, իսկ երկրորդը տպագրւած է աշխարհական գրերով, որ վրացիների այսօրւան կիրարկւածն է: Ինչպէս վերն ասի, այդ հատուածները վերաբոլորում են Ի. Կիպչիձէի ժողովածուն, բայց այստեղ կրճատումները վերականգնւած են և հատուածները դասաւորւած ժամանակագրական կարգով: Ամբողջ միւրը վերանայւած է և պարբերութիւնները նշանակւած են գրքի նախաբանի կից (էջ 14-16):

Ընտիր հատուածներին յաջորդում են

բառացանկերը, որ Ն. Մառի գործն է: Նրա հիմքը կազմում է Ի. Կիպչիձէի բառացանկը, որ բռնում է նրա գրքի 41-82 էջերը, բայց Ն. Մառ այդ ցանկին կցած է այն բառերը, որ գտնուում են Շոտա Ռուստավելու «Ընձենաւորը» փերւածի հատուածների, ինչպէս նաև վրաց ժողովրդական առածների մէջ, որ նա կցած է այս գրքի ընտիր հատուածների շարքին: Բառերն աշխատած է դասաւորել ըստ իրենց արմատների խմբելով, բայց բոլոր բարդ և ածանցաւոր բառերը նշանակւած են նաև իրենց տեղը՝ այբբենական կարգի մէջ: Էջ 607-8-ից յետոյ, ուր նշանակւած են որակումների կրճատ ձևերը, գալիս է բուն բառաբանը, որ ընդարձակ է և մեծ խմբով կազմւած (էջ 609-734): Սրան յաջորդում է մի բառացանկ երկարագիր հատուածների համար՝ (*խոսք* - փառանջականի երկարագիր գրերով (էջ 737-744) և մի ուրիշ բառացանկ բոլորագիր հատուածների համար բոլորագիր գրերով (էջ 745-751): Բառացանկերը երկսին են տպագրւած: Այնուհետև գալիս է վերլուծական մի շատ կարեւոր ցանկ բոլոր բառերի և միւրերի, որոնց մասին խօսում է կամ որ հանդիպում են այս ընդարձակ փերականութեան մէջ, որտեղ նշանակւած են այն էջերն ու համարները, ուր յիշում են նրանք կամ խօսք է լինում նրանց մասին: Այս կարեւոր ցանկը այբբենական կարգով է կազմւած և երկու տեսակ է. վրացերէն բառերի կարգով (էջ 755-788) և փրանսերէն բառերի կարգով (էջ 789-818): Այս ցանկերին յաջորդում է մի ուրիշ ցանկ ևս, ուր նշանակւած են ընտիր հատուածներից առնւած բոլոր վկայութեանց էջերն ու տողերը և նրանց կիրարկութեան էջերն ու համարները փերականութեան մէջ (էջ 819-831): Վերջին էջերը բռնում է գրքի բովանդակութեան ցանկը (833-858):

Գրքի սկզբում դրւած են եռերկրային վրաստանի երկու քարտեզ, որոնցից մէկը գտնւում է և տարբեր գոյներով ցոյց է տալիս տարբեր ցեղերի տարածման վայրերը:

Ինչպէս տեսնում էք, այս գիրքն օժտւած է բոլոր յարմարութիւններով վրաց հին լեզու սովորել կամեցողի համար: Ն. Մառ արդէն հրատարակւած էր հին վրաց լեզվի մի փերականութիւն ռուսերէն լեզուով (1925 թ.): Ներանից օգտւել կարող էին միայն ռուսերէն իմացողները, որ շատ չեն արտասահմանի մէջ: Այն գրքի մէջ Ն. Մառ համարակալ չափում ու կտրում էր՝ յենւած իր հմտութեան և խիզախ յղացումներին: Իր աշխատակցի Մ. Բրիէրի ողջմտութեան ենք պարտական, կարծում եմ, որ այս նոր փերականութիւնը կազմւած է արեւմտեան գիտութեան ընթացիկ ռոնով: Այս կերպարանքի տակ գիրքը եւ մատչելի եւ ըմբռնելի կը դառնայ շատերին, որից կօգտւին վրաց լեզուն և վրացերէնի ուսումնաբեր: Բաղկիւրը, որ Ն. Մառի աշխատութեամբ է պատրաստւած, ազատ չէ նրա համարակալ տեսութիւններից, և իր ստուգաբանութիւնները յիշեցնում են իր վերջին տասնամեակների աշխատանքները: Բայց այդ տեսութիւններն այն չափերի չեն հասնում, որ շփոթեցնեն ընթերցողին և մթագնեն նրա գիտակցութիւնը չարն ու բարին զանազանելու: Ն. Մառ շատ մեծ գիտուն էր և ծովածաւալ հմտութեան տէր. նրա գայբուններն անգամ ուսանելի են իր համարակալ և խուզարկու մտքի սայթափումներ:

Յայտնի է որ հայոց լեզվի արմատական բառերի գերազանց մեծամասնութիւնը անմեկնելի է հնդեւրոպական լեզուագիտութեան ընձեռած միջոցներով: Այդ մնացորդը աղբնչութիւն ունի կովկասեան լեզուների, յատկապէս վրացերէնի և իր բարբառների հետ,

որ աղօտ կերպով ընդնշմարում են գիտունները: Մեր լեզվի իմացման համար անհրաժեշտ է կովկասեան լեզուներով, բայց մանաւանդ վրաց լեզվի ծանօթութիւնը: Ն. Մառի հիմնական գաղափարներից մէկն այն էր, թէ պէտք է այդ երկու ազգերի լեզուները, գրականութիւնները եւ պատմութիւնները գուգահեռ ուսումնասիրել: Նա էր, որ ձեռնարկեց հայ եւ վրացի բնագիրների բնական հրատարակութեան «Հայ-Վրացական բանասիրութեան բնագիրներ եւ հետազոտութիւններ» ընդհանուր վերնագրի տակ, ուր շատ արժեքաւոր գործեր լոյս տեսան: Այս տեսակետն առողջ է եւ մտածումն արգասաւոր: Արտասահմանի հայերը Ն. Մառի եւ Մ. Բրիւքի այս նոր փերականութեան միջոցով կարող են ծանօթանալ վրաց հին լեզվին, որ աւելի մօտ է նրանց նոր լեզվին, քան մեր գրարարը մեր աշխարհաբանին: հետեւապէս վրաց հին լեզվի ծանօթութիւնը կարող է մեծապէս նպաստել նրանց նոր լեզվի ծանօթութեան: Եւ ըստացի գիտունները իրենց սեփական, ինչպէս նաեւ դասական լեզուների հետազոտութեան համար օգտագործած են եւ պիտի շարունակեն օգտագործել Հա-

յոց լեզվի ատաղձը իրենց մեկնութեանց եւ տեսութեանց կառուցումների համար, որով անուղղակի պիտի մեկնեն եւ մեր լեզվի բառամբերքն ու ձեւերը:

Մենք՝ հայերս, առանց անտես անելու այդ արժեքաւոր աշխատանքը, պէտք է ջանամք փարատել այն մշուշը, որի տակ ծածկւած է մեր լեզվի մեծագոյն մասը: Այդ լեզուն խօսւած եւ կազմւած է կովկասեան միջավայրի մէջ: Հայաստանի հին բնակչութիւնը, Յոյն ու Հռոմայեցի եւ Իրանցի ու Թուրանցի տեսնելուց առաջ, դարերով սուրբ է կովկասեան ժողովուրդների հետ, որոնց մնացորդներն ապրում են դեռ: Պէտք է նրանց լեզուն ու բարբն ուսումնասիրել եւ նրանց հետ համեմատել մեր լեզուն ու բարբը, պէտք է այդ համեմատութեան համար մշակել մեքող եւ բանաձեւի օրէնքներ նկատւած հանգիտութեանց հիման վրա: Այս տեսակետով անխնայ անհրաժեշտութիւն է վրաց եւ նրան ցեղակից լեզուների ուսումնասիրութիւնը: Ն. Մառի եւ Մ. Բրիւքի գիրքը մեծապէս կարող է նպաստել այս ուղղութեամբ մտածողին եւ աշխատողին:

Ն. ԱՂԱՆԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ — ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ

ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Մայիսեան Ապստամբութիւնը) . Նիւթեր եւ փաստաթղթեր: Կազմեցին Կ. Ղազարեան եւ Մ. Ներսիսեան. Պետական հրատարակութիւն, 1932, Երեւան, 498 էջ:

Այս գիրքը արտասահմանում անցաւ բոլորովին չնկատւած: Հայաստանում էլ առանձին հետաքրքրութեան առարկայ չեղաւ: Այն ինչ թէ միւրը եւ թէ շօշափւած խնդիրը արժանի են լուրջ ուշադրութեան:

1920 թ. Մայիսեան շարժումների

բնոյթի մասին արդէն բնական հարուստ գրականութիւն է կազմւած եւ, ինչպէս յայտնի է, բոլշեւիկ դեկաւարների մէջ տուր տարակարծութիւն է առաջ բերել: Մ. Կասեան, Ալիս, Ա. Յովհաննիսեան, Ա. Կարինեան, Բ. Բորեան, Զ. Ամիրխանեան եւ ուրիշ-

ներ իրենց գրած գրքերի մէջ, յաճախ, բոլորովին ներհակ փաստեր ու կարծիքներ են յայտնում՝ նոյնիսկ ամբաստանութեան խօսք ասելով միմեանց հասցէին:

Տարակարծութեան հիմնական խնդիրները հետեւեալն են. ա) Արդեօք իրօք առաքելական պայմաններից էր բխում եւ «մասսայական» այսինքն՝ ժողովրդակ. էր բոլշեւիկեան ապստամբութիւնը 1920 թ. Մայիսին. բ) արդեօք անհրաժեշտ էր առաջ բերել եւ իրականացնել նման ապստամբութիւն. գ) արդեօք հայ բոլշեւիկներն են նախապատրաստել եւ առաջուց մշակւած ծրագրի համեմատ վարել մայիսեան ապստամբութիւնը: Կրկնում ենք, այս հարցերի մասին շփոթ ու սուր տարակարծութիւն է տիրում բոլշեւիկ պատասխանատու գործիչների մոտքում:

Բոլշեւիկների վերջին, «պաշտօնական» տեսակետը մայիսեան ապստամբութեան մասին այն է, որ այդ ապստամբութիւնը հետեւանք է «Դաշնակների» հաստատւած կարգերի, որ ժողովուրդը եւ զօրքը կողմնակից են եղել ապստամբութեան, որ այդ ապստամբութիւնը պատմական անհրաժեշտութիւն էր, որ նա նախապատրաստւած է հայ բոլշեւիկների ձեռքով: Եւ եթէ մնչւեց, մնչւեց գլխաւորապէս «Դաշնակ մաուգէրիստների» եւ «տանկահայ խմբապետների» ուժով, մէկ էլ Արմէնկումի «թոյլ, ոչ կուռ ու համարձակ» գործունէութեան հետեւանքով:

Այս պաշտօնական թէզի համաձայն էլ թխած է մեր գրախօսականի առաքելայ կազմող հատորը, որ մաս է կազմում Հայկումկուսի կուսակցական պատմութեան հաստատութեան միւրքի շարքին:

Հատորի կէսը լեցւած է այնպիսի միւրքերով, որոնք կոչւած են ցոյց տալու «Դաշնակցական» Հայաստանի «դաժան իրականութիւնը», միւրքեր, որոնք

առնւած են գլխաւորապէս ժամանակի Հայաստանի բերքերից — «Յառաջ», «Ժողովուրդ», «Աշխատաւորներ», «Սոց. - Յեղափոխական», «Գիւղացու ջայն», «Հայաստանի Կօօպերացիա» եւ պետական դիւանատներից: Նոր եւ անծանօթ բան էիչ կայ այս մասում, թէ եւ հատորը կազմողները բնական աշխատանք քափել են ըստ կարելոյն առատ փաստեր հաւաքելու եւ Հայաստանի ընկերային-տնտեսական պատկերը որքան հնար է մտայլ գոյներով ներկայացնելու համար: Առաջ բերւած միւրքերը ընտրւած են վրան բաց միակողմանիութեամբ եւ աշտոութեամբ: Այն, որ էիչ- շատ կարող է «Դաշնակ» կառավարութեան վարկի համար նպաստաւոր թւալ, մեծ խնամքով մի կողմ է նետւած. վարկաբեկող ամէն միւրքիւրը ընկալւած է սիրով: Եւ դուրս է գալիս, ըստ բոլշեւիկ պատմագիրների, որ Հայաստանի Հանրապետութեան կեանքում գոյութիւն չի ունեցել եւ ոչ մի լուսաւոր կէտ:

Հայաստանը մտայլ գոյներով ներկայացնելուց յետոյ, հատորի երկրորդ գլուխը տալիս է միւրքեր բուն մայիսեան ապստամբութեան մասին — Մայիս Մէկի հանդէսներն եւ Հայաստանի զանազան մասերում ծագած խռովութիւնները: Այս բաժնում կան մի քանի վաւերագրեր, ինչպէս Ալիս Նուրիջանեանի, Մուսապետեանի եւ Արմէնկումի հետազոտները Նարիմանովին, նաեւ Արմէնկումի ընդարձակ գեկուցումը կում. Կուս. կովկասեան կումիտին, Մուսապետեանի գեկուցումը նոյն կովկ. կումիտին, մի շարք ուրիշ նամակներ ու բողոքիկներ, որոնք աւելի որոշ են դարձնում բոլշեւիկեան դէմքը մայիսեան խռովութիւնների մէջ եւ հայ բոլշեւիկների կապած յոյսերը, խորհրդայնացւած Ագրէշանի հետ:

Երրորդ գլուխը խօսում է «Կուսակցութիւնների եւ էջմիածնի դիրքի»

մասին: Այստեղ առաջ են բերւած մի շարք փաստաթղթեր, որոնց ընթերցումը երեւի, բնաւ հանելի չի լինի արտասահմանի այսօրւայ Հայաստանաւորներին, օրինակ Հայ Ռամկավար եւ Հայ ժողովրդական կուսակցութիւններին եւ Հայ Անկուսակցականների Միութեան միացեալ կոչը, կամ Հայ Ռամկավար կուսակցութեան կոչը, կամ Ամենայն Հայոց կաթողիկոսի կոմիտէ:

Վերջապէս, չորրորդ գլխում ներկայացւած է, «Ապստամբութիւնների ճնշումը»: Հայաստանի Հանրապետութեան կեանքին լատենդեակ մարդու համար այս բաժնում էլ հետաքրքրական նորութիւններ չկան: Ներքերի մեծ մասը առնւած է քերթերից, գլխաւորապէս Երեսնի «Յառաջ»ից:

Հատորին կցւած է «Մանօթութիւնների» մաս, ուր տրւում են, օրինակ, այսպիսի տեղեկութիւններ «Դաշնակ լիդերների» մասին. — Ա. Զամախան «Մայիսեան ապստամբութիւնների օրով . . . հանդէս բերեց իր բարբառոսական վերաբերմունքը հանդէպ ապրտամբած բանորութեան եւ գիւղացիութեան՝ արտակարգ դատարանների յանձնելով, ծեծի ենթարկելով, գաղտնի գնդակահարութիւններով ու անասելի պայմաններում բանտարկելով, այլ եւ պրովոկացիոն տեղեկութիւններ եւ լուրեր տարածելով . . . , կոչ անելով ուղղակի կոտորել բոլշեւիկներին: Ամբաստանել է գեղծարարութեան մէջ: Այժմ գտնուում է արտասահմանում. իմպերիալիստական պետութիւնների՝ հորհրդ. Միութեան դէմ ծրագրւող ինտերվենցիայի ակտիւ գործիչներից մէկը»:

Ա. Սահակեան. — «Հայ բուրժուազիայի նախնական քաղաքականութեան հատարարի պաշտպանը: Որպէս պարլամենտի նախագահ՝ աչքի ընկաւ հակաբանութեան գործունէութեամբ»:

Կ. Սասունի. — «Դաշնակցութեան քիւրքահայ տիպիկ հայդուկ», «ա-

ռանձնապէս աչքի ընկաւ իր գազանաշին վերաբերմունքով դէպի ապստամբները», «Յայտնի է իր հետախուզական, պրովոկատորական գործունէութեամբ բոլշեւիկ որսալու գործում եւ անասնական ատելութեամբ դէպի բուրք աշխատաւորութիւնը»:

Հ. Օհանջանեան. — «Ակտիւ կերպով մասնակցել է Դաշնակցութեան կազմակերպած բոլոր հակաշեղափոխական, աւանտիւրիստական գործողութիւններին . . . Այժմ գտնուում է արտասահմանում եւ հորհրդ. Միութեան դէմ ինտերվենցիա կազմակերպելու եւ ունեցած գործիչներից մէկն է»:

Ն. Աղբալեան. — «Առանձնապէս աչքի է ընկնում իր ծայրայեղ մացիմալիզմով» . . . Թուրքական ջարդերի, բուրք խաղաղ աշխատաւորութեան քաղաքի «տեսութեան» հիմնաւորողներից մէկը . . . Մայիսեան ապստամբութեան դահիճներից մէկը . . . Արտասահմանում շարունակ գործում է ինտերվենցիոնիստների բանակում»:

Ռուբէն Փաշա. — «Յայտնի աւանտիւրիստ եւ ջարդարար . . . Խմբապետ, քաղաքի, քրեատեսի եւ կատաղի բռնաւոր բան. եւ գիւղ. ամէն մի յեղ. շարժման . . . Այժմ արտասահմանում է եւ աշխատում է որպէս Ֆրանսիայի ազնոտ արեւելեան գաղութներում»:

Ս. Վրացեան. — «Դաշնակցութեան լիդեր, բուրք աշխատաւորութեան կոտորածների հեղինակ, քիւրքի անդամ, հեղինակ բոլոր հակաշեղափոխական շարժումների . . . Մէկը փետրարեան աւանտիւրայի հեղինակներից . . . Ներկայումս գտնուում է արտասահմանում, դեկավարում է Դաշնակցութեան արտասահմանեան գործերը եւ ծրագրում է իմպերիալիստական պետութիւնների աջակցութեամբ ինտերվենցիա կատարել հորհրդ. Միութեան դէմ: Իր գործունէութեան ընթացքում

միջոցների մէջ խորութիւն չդնող աւանտիւրիստ, չարաշահ, ջարդարար, եւ իր պետական գործունէութեան մէջ՝ կեղծարար»: Եւ, ի հարկէ, պետական գանձն է փախցրել եւ ծլկել արտասահման . . .

Այս ձեւով են կազմւած եւ միւս «ծանօթութիւնները»: Մի աւելորդ ապացոյց, թէ ի՞նչ կոյր կիրք ու քեքեւամտութիւն կայ նոյն իսկ հաստ հատորներով պաշտօնական ներքեր հրատարակող հայ բոլշեւիկ պատմաբանների հոգում, ի՞նչ փոքրոգութեամբ են ընդունակ իրենց հակառակորդների վերաբերմամբ . . .

Եթէ փորձենք որոշ եզրակացութիւններ հանել Կ. Ղազարեանի եւ Մ. Ներսիսեանի հաւաքած ներքերից, առաջին եւ, մեր կարծիքով, ամփոփելի փաստը կը լինի այն, որ հատորը ուժգնօրէն խօսում է հակառակ հեղինակների պաշտպանած տեսակէտի: Այսպէս, նրանք ուզում են ընթերցողին հաւատացնել, թէ Հայաստանի իշխանութեան շնորհիւ Հայաստանի ժողովրդի կեանքը եւ պետական մեքենան մտայն վիճակի մէջ են, մինչդեռ հենց իրենց առաջ բերած ներքերը պարզ ցոյց են տալիս, թէ ի՞նչ գերմարդկային ճիգ էին գործ դնում այն ժամանակայն Հայաստանի վարիչները երկրի վիճակը բարելաւելու համար: Եւ այդ ճիգերը ապարդիւն չէին անցնում. տարւէ տարի Հայաստանի եւ հայ ժողովրդի դեպքի մը հեշտանում էր: 1920 թ. Հայաստանը այնքաւ քեքեւ շունչ էր փաշում, համեմատած նախորդ տարիների հետ:

Հայ ժողովուրդը, անշուշտ, դժգոհ էր տիրող պայմաններից, բայց նա լաւ տեղեակ էր եւ Ռուսաստանի ներքին կացութեան մասին եւ, ի հարկէ, չէր ուզի փոխել իր անկախութիւնը բոլշեւիկեան տիրապետութեան հետ: Այս կէտում էլ չարաշար սխալում են բոլ-

շեւիկ պատմաբանները՝ պնդելով, թէ հայ ժողովրդի մեծ մասը «Դաշնակցականների» դէմ էր եւ թէ մայիսեան շարժումները «մասսայական» էին: Ճիշտը հակառակն էր. հայ ժողովուրդը ճնշող մեծամասնութեամբ հակառակ էր բոլշեւիկների արկածախնդրութեան, եւ մայիսեան խռովութիւնները ճնշւեցին հենց բուն ժողովրդի ձեռքով: Բացի որոշ զօրամասերից եւ երկաթուղային բանւորութեան չնչին հատածից՝ հասարակական ոչ մի խաւ չկար, որ կողմակից լինէր խռովութիւնների հեղինակներին: Եթէ բոլշեւիկների հաւաստիացումը լինէր ճիշտ, մայիսեան ապստամբութիւնը այդպէս դիւրութեամբ կը ճնշւէր: Կամ հենց հատորում առաջ բերած ներքերը — կաքուղիկոսի կոմիտէն եւ բոլոր կուսակցութիւնների կոչերը, որոշումներն ու գործնական քայլերը — բաւական չե՞ն հիմնովին հերքելու բոլշեւիկեան թէ՛ղքը, թէ մայիսին Հայաստանում հեռաւոր էր հորհրդ. իշխանութեան յաղթանակը:

Ո՛չ միայն մայիսին, դեկտեմբերին էլ Հայաստանը անկարելի կը լինէր խորհրդայնացնել, եթէ գոյութիւն չունենար մի հանգամանք, որի մասին Կ. Ղազարեանն ու Մ. Ներսիսեանը իրենց հատորում այնպէս խոհեմօրէն լուրս են, այդ քիւրք-բոլշեւիկեան գործակցութիւնն է: Այժմ արդէն փաստերով ապացուցւած է, որ 1920 թ. քիւրքական արշաւանքը Հայաստանի վրա եւ Հայաստանի պարտութիւնը արդիւն էին քիւրքերի եւ բոլշեւիկների համաձայնութեան եւ գործակցութեան:

Յայտնի է նաեւ, որ Հայաստանը չընդիմացաւ եւ տեղի տւեց քիւրք-բոլշեւիկեան միացեալ գրոհի առջեւ: Եւ Հայաստանը խորհրդայնացաւ այդ գրոհի հետեւանքով: Լաւ չէ՞ր ամի Հայկոմկուսի կուսպատ. — ի իմաստունը, մի հատորով էլ հրատարակէր եւ քիւրք

բոլշևիկեան գործակցութեան վերաբերող գաղտնի նիւթերը: Այն ժամանակ, կասկած չկայ, «առաջին մասնաշաղկան – յեղափոխական շարժումը Հայաստանում» կը ներկայանար բոլոր-

վին ուրիշ, բոլորովին նոր լոյսի տակ: Չեմ կարծում, սակայն, որ հայ բոլշևիկները այդպիսի հատոր հրատարակելու փառքիւնն ունենան . . .
Ս. Վ.

Ֆ. ՄԱՆԱՐԱԶԷ «Վրաստանը 19-րդ դարում»,

1933. Թիֆլիս, Հրատ. Վրաստանի Մարքսիզմի-Լենինիզմի
ինստիտուտի (ռուսերէն) .

Գննութեան ենթակայ հատորի հեղինակը Վրաստանի առաջին Յեղկովի նախագահն է, առաջնորդներէց մէկը՝ Անդրկովկասեան համայնավարութեան, որ մեծ հեղինակութիւն է վայելում համայնավար Անդրկովկասում: Հատորի նիւթը պատմական է եւ գուցահեռ՝ Դ. Անանուկի ծանօթ աշխատութեան: Դ. Անանուկը ախարած է, իբրեւ հակայեղափոխական, իսկ Ֆ. Մախարաձէն նախագահ է Վրաստանի կեդր. Գործադիր կոմիտէի: Որպէս գրական գործ, Մախարաձէի գիրքը հետաւոր չափով իսկ չի կարող հասնել Անանուկի աշխատութեան, բայց բաւական նիւթ տալիս է եւ արժանի է ուշադրութեան՝ հասկանալու համար վրացի համայնավարների մէջ տիրող մտայնութիւնը:

Ըստ Մախարաձէի, 18-րդ դարում, «Վրաստանը միացեալ պետութիւն չէր կազմում, այլ բաժանւած էր» մի շարք բազաութիւնների եւ իշխանութիւնների: Այս վերջինների քում Մախարաձէն յիշում է եւ միմեզբիւն. «մէկ լեզու եւ մշակոյթ ունեցող ժողովրդի բաժանումը չէր սահմանափակում դրանով, այլ իր հերթին ամէն մի բազաութիւն եւ իշխանութիւն բաժանւած էր աւելի փոքր իշխանութիւնների, որոնք տնտեսական կուում էին իրար հետ: Միակ ընդհանուրն այն էր, որ նրանք բոլորն էլ բնական էին վրացի ցեղերով, եթէ, ի հարկէ, ի նրկատի չունենանք զանազան բարբառները»:

Այսպիսով, ուրեմն, համայնավար Մախարաձէն վրացական լեզուն եւ մշակոյթին միացած է հաշուում նաեւ Միմեզբիւն, միմեզբու յայտնի է, որ հորհրդ. իշխանութիւնը միմեզբիւնի համար յատուկ այրութեւն է հնարել եւ նկատում է որպէս ուրոյն լեզու ունեցող ժողովուրդ:

Մախարաձէի համար վրացական անցեալը փառաւոր է, ինչպէս ամէն մէկ ազգայնականի համար: Մի տեղ նա գրում է՝ «մահմեդական աշխարհի մէջ ընկաւ հաւեմատարար փոքրիկ Վրաստանը»: Եւ այնպիսի տպաւորութիւն է ստացւում, որ կարծես ամբողջ մահմեդական աշխարհը միացել էր Վրաստանի դէմ, եւ մի փանի դար այդ երկու աշխարհները անխնայ պայքարում էին իրար հետ: Մի խումբ վրացիներ պաշտպանում էին անեղօրէն: Հասպա մի փորձիւր հայ համայնավարի մօտ մեր մօտաւոր անցեալը Մախարաձէի ձեռով ներկայացնել, շունչդ Սոյովկի կղզում կը գտնես . . .

Իբրեւ գտարիւն վրացի, Մախարաձէն գործ է ածում մեծ մասամբ զուտ վրացական անուններ՝ նոյնիսկ ծանօթութեան մէջ չբացատրելով:

Երկրի վիճակը նկարագրելով Մախարաձէն, առանց որ եւ է հիմքի, ասում է, թէ վրացիների թիւը, որ առաջ մի քանի միլիոն էր, 18-րդ դարի վերջում ընկաւ 300 հազարի: Այս միլիոնների հաշիւը ոչնչով չի հիմնաւորւած, որովհետեւ տեղւոյն չկան եւ

նոյնիսկ ազգայնամուլ վեշապելիի յօդւածներում նման պնդում չի եղել: Մի քիչ յետոյ գրում է, թէ Վրաստանի ամբողջ պետական եկամուտը հաւասար էր 90 հազար բուրիի, նոյնպէս բոլորովին անհիմն կերպով: 18-րդ դարում ոչ մի արձանագրութեան արժանի տնտեսական երեւոյթ վրաց կեանքում տեղի չի ունեցել՝ ոչ դրական եւ ոչ էլ բացասական, միայն «1763 թ. ին Հերակլի Բագաւորի առաջարկով յոյն լոնտահանքի բանուրներ սկսեցին շահագործել արծաթի եւ պղնձի հանքերը Բորչալուի շրջանի Ախտալայում եւ Ալլախիկերդում», թէեւ Անդր. Գործ. կոմիտէի նախագահը պետք է իմանար, որ Ալլախիկերդին եւ Ախտալայում 1931 ին Հայաստանի Լոռի-Փամբակ գաւառում են գտնւում եւ ոչ թէ Բորչալուում:

Մարքս բառը Մախարաձէի խօսքի ամէն մի երրորդ բառն է միշտ, իսկ տեւեք, թէ ինչ վերամբարձ խօսքերով է նկարագրում Վրաստանի անցեալը. «Այնտեղ, որտեղ գրեթէ 22 դար ծաղկել են ֆաղաֆներ, համաշխարհային յարաբերութիւններ, հարստութիւններ . . . »

Ըստ Մախարաձէի, Հերակլի Բ. շատ խելօք մարդ էր, իսկ Գեորգի ԺԲ.՝ «նրա անշնորհ տղան»: Ինչո՞ւ էր անշնորհ, երբ հեղեք Մախարաձէն ինքը մի քանի տող ներքեւ ասում է, թէ՝ «ինքնին հասկանալի է, որ այն ժամանակաւ Վրաստանի համար Ռուսաստանին միանալուց զուտ ուրիշ նախագահ չկար»: Եւ եզրակացութեան մէջ նորից կրկնում է, թէ՝ ռուսական օրիէնտացիան 18-րդ դարի վերջում Վրաստանի համար ամենից ընդունելի էր: Ճիշտ է, կար եւ ուրիշ միջոց՝ դէպի իրան կամ Թիւրքիա, բայց մեք քում է, որ դա կը լինէր վրաց ժողովուրդի վերջը: Եթէ այդպէս է, ասպա էլ ի՞նչու էր անշնորհ Գեորգի ԺԲ., որ Վրաստանը կապեց Ռուսաս-

տանին: Վրացի ազգայնականները պնդում են, հակառակ ինչ ռուսական պաշտօնական տեսակէտի, թէ Վրաստանի միացումը Ռուսաստանին կամաւոր չի եղել: Նոյնը կրկնում է եւ Մախարաձէն. «Դա իսկական բռնի ակտ էր, աւելի նիշդ ասած՝ մի շարք բռնի փայլեր եւ դաժան արիւնալի կոխներ: Վրաստանի «կամաւոր միացումը» Ռուսաստանին, որի մասին միապետութեան փողիարներ փչում էին ամբողջ մի դար, ուղղակի հեքիաթ է»:

Եթէ ռուսական օրիէնտացիան վրացական շահերից համապատասխանում էր եւ Վրաստանին ուրիշ եւ քիչ մնացել, քան միանալ Ռուսաստանին, էլ ի՞նչ խօսք բռնութեան մասին, ո՞ւր է մարքսիստական բացատրութիւնը:

Մախարաձէն տալիս է եւ Վրաստանի նորատիրութեան եւ կառավարական հարստահարութիւնների պատմութիւնը, այնքան բոյլ ու ներդաւիտ խօսքերով, որ մարդ զարմանում է, թէ արդե՞օք բոլշևիկ պատմաբան է գրաւոր: Նրա պատմածից հետեւում է, որ վրացի ազնականները անմեղ գաւառիկներ էին: Նա ֆեոդալտում է ազգայնական Ի. Չալչաւաձէին, որ ասում էր. «ազնականները գիւղացիներին հայրօրէն են վերաբերում», բայց ինքը ոչ մի փաստ չի բերում ընդդէմ ազնականների, ընդհակառակը, ազնւականների բերնով է նկարագրում գիւղացիութեան դրութիւնը:

Մախարաձէն խօսում է նաեւ Արխաղիայի մասին՝ ապստամբութեան, արտագաղթի դէպի Թիւրքիա առանց ի նկատի ունենալու, թէ Արխաղիան ինքնուրոյն երկիր է եւ արխաղները վրացիներ չեն:

1865 թ. ի համբարական շարժման մասին խօսելիս Մախարաձէն համարների երկու բշմամի է ցոյց տալիս, երկու հայեր՝ Բարեւոյ Մելիքեանը եւ ֆաղաֆալուի Վարդանեանը: Թիֆլիսի Հայ Համբարումեան յեղափոխական

պոռթկումը ներկայացնում է, իբրեւ *Վրացական չարժույթ*, իսկ համաբարութեան (արհեստաւորական կազմակերպութիւնները) հա՛տաւորողներին հայեր: Թէեւ պայքարող երկու կողմերն էլ հայեր էին, բայց կոմունիստ Մախարաձէն ապստամբներին ներկայացնում է վրացի, իսկ ճնշողներին հայ:

Մախարաձէն երկարօրէն խօսում է եւ Թիֆլիզի վրացական ֆաղափ լինելու մասին, զանազան բեր է բերում եւ վերջը, երբ հակառակ այդ բերի, հայերը էլի մեծամասնութիւն են դուրս գալիս, աւելացնում է յայտնի վրացականութեան, թէ «վրացիների տոկոսային անման դիմամիկան» աւելի բարձր էր:

Առեւտրի եւ արդիւնաբերութեան նըւիրւած գլխում ո՛չ մի խօսք չկայ, թէ ի՞նչը եւ ովքե՞ր ստեղծեցին: Հայերի կատարած տնտեսական ահագին դերը մոռացութեան է տրւած, բայց Մախարաձէն չի մոռանում, որ վրացի Գ. Զավալաձէն դիմել է Պետերբուրգ մահադի գործարան ստանալու համար, մինչ հայ Բեգտաբեգեանը, որու Կոկալեւսկու հետ միասին, բանագացնում էր ապրանքները եւ ոսկու ու արծաթի գինը ձգում: Մի շահագէտի անունը Մախարաձէն չի մոռանում, իսկ հայերի եիմանձ հարկւրաւոր գործարաններից եւ ոչ մէկը չի արձանագրում: Դուրս է գալիս, որ հայերը վրաստանում միայն չարաշահութեամբ են զբաղւել:

Բայց ամենաընդվզեցուցիչը Մախարաձէի գրքի «վրաստանի գաղութայնացումը» գլուխն է, որ նույնպէս ուղղւած է հայերի դէմ: Մախարաձէն գրում է, թէ Պասկեւիչը 200-000 դեսնատին հող խլեց տեղացիներից Անդրկովկասում եւ տեղ Պարսկաստանից եւ Թիւրքիայից արտագաղթողներին: Ինչպէս յայտնի է, Պասկեւիչը տեղացիներից ո՛չ մի հող չի խլել, այլ հայերին տեղաւորել է Արարատեան

դաշտի պարսպ հողերի վրա: Նույնը կրկնում է շեշտւած կերպով նաեւ Ախալքալաքի շրջանի մասին, որ իբր թէ հայեր տեղաւորւած են ի հաշիւ վրացիների, թէեւ վրացիներ այնտեղ չեն եղել: 1828ից առաջ էլ: Հայ-վրացական լրագրական բանավեճերի ժամանակ միայն վիշապիլին էր երգում այս երգը: Մախարաձէն կրկնում է ազգայնամոլների ստերը:

Հայ-վրացական փոխյարաբերութիւնների մասին Մախարաձէն ասում է, թէ սրեցին միայն 1890 թւին, Թիֆլիզի ֆաղափային ընտրութիւններից յետոյ, երբ ֆաղափի վարչութիւնը անցաւ հայ բուրժուազիայի ձեռքը: Մարքսիստ պատմաբանը չի ուզում տալ նայնիսկ Բ. Խշտանեանի բացատրութիւնը, այսինքն՝ վրաց ազնականութեան կատարած բացասական դերը այդ խնդրում:

Ծիծաղելի է Մախարաձէն եւ դեպքոցների մասին խօսելիս: Թիֆլիզի աշակերտների թիւը գիմնազիաներում հետեւեալ պատկերն էր ներկայացնում.

Ա. Գիմնազիայում.
վրացիներ 166 առ հար., Հայեր 28,2,
Ռուսներ 38,4

Բ. Գիմնազիայում.
վրացիներ 19, առ հար., Հայեր 26,9,
Ռուսներ 38,9

Գ. Գիմնազիայում.
վրացիներ 11,6, առ հար. Հայեր 56,7,
Ռուսներ 21,3

Ռեալական դպր.
վրացիներ 9,9 առ հար., Հայեր 29,3,
Ռուսներ 15,3

Այս բերը մօտաւորապէս համապատասխանում էին եւ ֆաղափի ազգաբնակչութեան տոկոսային յարաբերութեան: Բայց համայնավար Մախարաձէն այդ առթիւ գրում է, թէ «վրացիները աւելի աղքատ էին քան թէ միւս ազգերը», այդ պատճառով աւելի քիչ էին դպրոցներում: Թէեւ ըստ Մարքսի, Լենինի եւ Ստալինի բոլոր

ազգերի պրոլետարիատը միատեսակ լաւ է, իսկ բուրժուազիան վատ, բայց Մախարաձէն խորութիւն է դնում վրացու եւ հայի միջեւ:

Վրաստանի նորագոյն պատմութեան տեսակետից Մախարաձէի գիրքը ար-

ժեքից զուրկ է: Նա միայն յատկանշական վկայաբույր է, որ վրաց նորահաս սերունդը խորհրդ. Խշտանութեան օրով էլ շարունակում է դաստիարակւել վեշապիլիների ճգով:

Ն. ԲԱՒԱԼԵԱՆ



ՍՏՆՑԻԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մ. Շաթիրեան, «Արշակ Սարկի-եան», վէպ, Թարիգ, 1935:

Ա. Սարվազեան, «Գծից Դուրս», դրամա 4 արարով, Փարիզ, 1935: «Նահապետ Նահապետեան», դրամա 4 արարով, Փարիզ, 1935:

«Աղուոր Քերական», Հրատ. «Նոր Օր» գրատուն, Աթէնք, 1936 թ.:

Ճրանց Վերջէլ, «Մուսա Լեւոն Գառնու Օրերը», քրգմ. գերմ. բնագրէն եր. Տէր Անդրէասեան, հատար Ա. մատենաշար «Մասիս», թիւ 11, 1935, Սոփիա:

Պատկերամատեն Հ. Յ. Դաշնակ-ցուժեան, Փարիզ, 1935:

«Հայ Գնար», ընդարձակ երգարան, «Հորիզոն» օրաթերթի, Սեյանիկ, 1935, գին 1.50 տոլար:

Ռ. Զարգարեան, «Դու եւ Ես», բանաստեղծութիւններ, Փարիզ, 1935:

«Հայրենիք», ամսագ. թիւ 11, 12:
«Հանդէս Ամսօրեայ», թիւ 5-7:
«Բազմավէպ», թիւ 7-8:
«Սիրոն», թիւ 9, 10, 11:
«Մասիս», Մանկական Գրադարան, թիւ 10, 11, 12, 13:
«Հասկ», թիւ 9, 10:
«Հայ-Բոյժ», թիւ 13, 14:
«Պապ-Ուխտի», պարբերաբերք Մալախիոյ կրք. Ընկ. Հարազատ կեդր. վարչութեան, 1935, Ա. տարի, թիւ 1, 2, 3, Գիլվիլնոս:

«Նոր Հասկեր», մանկական-պատանեկան պատկերազարդ երկշաբաթեայ հանդէս, արտօմատէր-խմբագիր Մարգարիտ Սարվաթեան, Թեքեան, 1935, թիւ 1, 2, 3, 4:

«Ազգ», Հայ Ազգայնական կազմակերպութեան պարբերաբերք, Ա. տարի, թիւ 1, 2 Փարիզ, 1935:
«Մասիս», թիւ 4:

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՇԵՄՔԻՆ



Ներկայ համարով լրանում է «Վէմ»-ի երկրորդ տարեշրջանը: Մեզ թվում է, թէ մենք լիովին կատարել ենք մեր յանձնառութիւնը՝ տալով 12 հատոր գիրք, նոյն իսկ էջերի աւելի մեծ քանակով, քան խոստացել էինք սկզբնապէս:

Մեր գործի բարոյական կողմի մասին խօսելը մեզ չէ ընկնում, պէտք է ասենք, սակայն, որ «Վէմ»-ը արժանացել է հասարակութեան բոլոր խաւերի անվերապահ համակրանքին: Դրան ապացոյց հայ մամուլի մէջ երեւան եկած ջերմ գնահատութիւններն ու խմբագրութեան ստացած համակրանքի բազմաթիւ արտայայտութիւնները: Դրան ապացոյց եւ աշխատակիցների ցանկը: Մինչեւ այժմ «Վէմ»-ին աշխատակցել են. — Դր. Ա. Արեղեան, Պրոֆ. Ա. Աբրահամեան, Պրոֆ. Ն. Ադունց, Ն. Աղբալեան, Աջեան, Ա. Աստուածատրեան, Ն. Բադալեան, Հ. Բալուեան, Ռ. Բերքերեան, Դոկտ. Ա. Գասպարեան, Ա. Գիւլիսանցեան, Դրո, Գ. Եղիկեան, Յ. Զարեան, Բ. Թաշեան, Յ. Թադէոսեան, Յ. Իրագեկ, Ա. Խոնդկարեան, Բժ. Յ. Կիլիկեցի, Զօր. Գ. Դարդանեան, Ա. Ն. Մանդելշտամ, Վ. Միւնստրեան, Լ. Նաիրցի, Շ. Նարդունի, Ս. Ոսկանեան, Մ. Պարսամեան, Ա. Զամալեան, Սամսոն, Կ. Սաաւնի, Յ. Շ. Սիբունի, Կ. Վ. Տայֆ, Վ. Փափագեան, Փ. Փափախքեւոյ, Յ. Քիւրտեան, Ս. Քոչարեան եւ ուրիշներ:

Բացի այդ, կան ուրիշներ եւս, որոնք խոստացել են աշխատակցելու եւ ոմանք նոյն իսկ յանձն են առել որոշ ուսումնասիրութիւններ կամ յուշեր գրելու «Վէմ»-ի համար:

Հանրային համակրանքի արտայայտութեան ձեւերից մէկն էլ, անշուշտ, «Վէմ»-ի բաժանորդների ու գործակալների ցոյց տւած քաջալերական գործակցութիւնն է: Հակառակ տնտեսական համատարած տագնապի, բաժնեգների գանձումը կանգ չէ առած, եւ կասկած չունինք կը շարունակել աւելի եռանդով, այնպէ՛ս, որ նոր տարեշրջանի սկզբին արդէն հին հաշիւները լինին փակւած:

Գօտեպնդւած այս հաւատով՝ մենք բաց ենք անում «Վէմ»-ի երրորդ տարեշրջանի, աւելի ճիշտ, երրորդ վեցեակ հատորների բաժանորդագրութիւնը: Նոր խոստումներ չենք ուղղում տալ. պիտի ջանանք լրացնել նախապէս խոստացւած նիւթերը եւ աւելի եւս

ճոխացնել ու բազմակողմանի դարձնել «Վէմ»-ի բովանդակութիւնը: Մեր տրամադրութեան տակ արդէն հաւաքւած է բաւական առատ նիւթ:

Նոր տարեշրջանի բաժանորդագրութեան պայմանները մնում են նախկինը: Ի նկատի ունենալով, որ առաջին եւ երկրորդ տարեշրջանից մնացել են որոշ թւեր, նոր բաժանորդները կարող են այդ թւերը ստանալ գեղջւած գնով՝ առաջին երկու տարւայ 12 գրքի համար վճարելով 50 Փր., կամ մէկ տարւայ 6 գրքի համար՝ 25 Փր.:

ԽՄԲ. «ՎԷՄ»-ի

ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Բուլգարիայի գործակալ Յ. Տէվէճեանի Ռումանիա մեկնումով՝ գործակալութիւնը յանձնւած է «Մասիս» Հրատ. Ընկերութեան:


Հասցէն՝

K. Haladjian, B. B. 444, Sofia.

Թեհրանի գործակալ նշանակւած է Ա. Խոջայեանը: Հասցէն՝

A. Khodjayan. Magasin «Khechnoud», Avenue Lalezar, Téhéran.

Հին ու նոր բաժանորդներին խնդրում ենք գիմել այս հասցէ-ներով:



Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 5 դոլար
Վեցամսեայ 3 ,,
ՀԱՅՐԵՆԻՔ ԱՄՍԱԳԻՐ ԵՒ ՕՐԱԹԵՐԹ
ՄԻԱՍԻՆ
Տարեկան 10 դոլար
Վեցամսեայ 5 ,,
Հասցէ՝

13-15 Shawmut st.

BOSTON MASS (U.S.A.)

Ա Ս Պ Ա Ր Է Զ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Ամերիկա, տարեկան, 1-50 դոլար
Արտասահման 2-00 ,,
Հասցէ՝

"ASBAREZ" P. O. Box 865

Fresno, Calif., U. S. A.

Ա Զ Ա Տ Խ Օ Ս Ք

ՕՐԱԹԵՐԹ

Բուլգարիա՝ տարեկան 550 լեւ
Բուլգարիա՝ վեցամսեայ 300 լեւ
Ամերիկա՝ տարեկան 6 դոլ.
Ուրիշ երկիրներ՝ տարեկան 150 ֆր.

Հասցէ՝

45, Bld. M. Louiza,
Sofia, (Bulgarie)

Ա Լ Ի Ք

ԵՐԿՕՐԵԱՅ ԹԵՐԹ

Տարեկան 85 դիալ
Վեց ամիսը՝ 45 դիալ
Արտասահման
Տարեկան՝ 170 ֆր. ֆր.
Հասցէ՝

"ALIK", Impr. Moderne
Khiabane Posthané, Teheran
(Iran)

Յ Ո Ւ Ս Ա Բ Ե Ր

ՕՐԱԹԵՐԹ

Եգիպտոս, տարեկան, 150 եգ. դհ.
,, վեցամսեայ, 80 ,,
Արտասահման, տարեկան, 40 շիլինգ
,, վեցամսեայ 20 ,,
Հասցէ՝

"Houssaper", B. P. 868

Le CAIRE (EGYPTE)

Մ Ե Ղ Ո Ւ

Երգիծական Շաբաթաբերք

Ներքին՝ տարեկան 100 լեւ
,, վեցամսեայ 50 լեւ
Ամերիկա Տարեկան 2 դոլար
Արտասահման Տարեկան 30 ֆրանկ
Հասցէ՝

K. Kaladjian

B. P. 444, Sofia, (Bulgarie).

Հ Ո Ր Ի Զ Ո Ն

ՕՐԱԹԵՐԹ

Ներքին՝ տարեկան 300 տր.
Արտասահման՝ տարեկան 150 ֆր.
Հասցէ՝

Rue Mitropoleos, 14.
Salonique, (Grece)

Ս Ի Ո Ն

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 6 անգլ. շիլինգ կամ 1-50 դոլ.
Հասցէ՝

Patriarcat Arménien, Jérusalem
(Palestine)

Բ Ա Զ Մ Ա Վ Է Պ

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 3-50 դոլար

Հասցէ՝

"Pazmaveb", St. Lazar, Venise
(Italie)

Ա Ր Մ Ե Ն Ի Ա

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Արտասահման, տարեկան, 3 դոլար
Արժանքին, տարեկան, 6 փետ
,, վեցամսեայ, 3-50 ,,
Հասցէ՝

"ARMENIA" Canning 1087,

Buenas-Aires, (Argentine)

Ներքին՝ վեցամսեայ 150 տր

Ներքին՝ եռամսեայ 80 տր.

Արտասահման՝ վեցամսեայ 80 ֆր.

Ն Ո Ր Օ Ր

ՕՐԱԹԵՐԹ

Յունաստան, տարեկան, 420 տր.
,, վեցամսեայ 210 ,,

Եւրոպա, տարեկան, 135 ֆր.

,, վեցամսեայ 80 ,,

Ամերիկա, տարեկան, 8-00 դոլար

,, վեցամսեայ, 4-50 ,,

Հասցէ՝

"NorOr", 20-A, Rue Vouli.

ATHÈNES (GRÈCE)

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

ՕՐԱԹԵՐԹ

Տարեկան 6 դոլար
Վեցամսեայ 3 ,,
Եռամսեայ 2 ,,
Հասցէ՝

Haïrenik Press, 13-15 Shawmut st.

BOSTON-MASS (U.S.A.)

Ա Զ Դ Ա Կ

ՕՐԱԹԵՐԹ

Սիրիա՝ տարեկան 550 ս. դ.
Սիրիա՝ վեցամսեայ 300 ս. դ.
Արտասահման՝ տարեկան 7 դոլար
Արտասահման՝ վեցամսեայ 4 դոլար

Հասցէ՝

"Aztag". B. P. 587 Beyrouth
(Liban)

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Ց

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 5 դոլար

Հասցէ՝

"Handes Amsorya", 4, Mechi-
tharistengasse, Vienne
(Autriche) VII

Ա Ր Ա Զ

ԵՌՕՐԵԱՅ ԹԵՐԹ

Տարեկան 500 լեւ

Հասցէ՝

"ARAZ" Str. Campul Mosilor,
No 2. Bucarest, (Roumanie)


Մ Ա Ս Ի Ս

Տարեգիրք Խմբ. Արմէն Սեւան
1935 թ. Բ. Տարի

288 էջ, բազմակողմանի բովանդակու-
թեամբ, պատկերազարդ, մաքուր տիպ:
Գին՝ 100 լեւ կամ 30 ֆր. ֆր.

Դիմել՝ Վեսլէց, 21, Սոֆիա

Կարելի է ստանալ «Վեմ»-ի միջոցով:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—*—

ՍԱՄՍՈՆ .— Դէպքերը Հայ-պարսկական սահմանի վրա	1
Յ. ԶԱԻՐԵԱՆ .— Պարսկաստանի Յեղափոխութիւնը եւ Մեղքն իմանք	14
Շ. ՆԱՐԴՈՒՆԻ .— Նպաստ մը հայ եւ թուրք աշուղ. գրական. համեմատակ. ուսումնասիրութեան (3.)	30
Փ. Փ. ՓԱՆԱԻԹԵՍՔՈՒ .— Ալեքսանդրոս Զէլ Պուճի հրամանագիրը	37
Վ. ՓԱՓԱԶԵԱՆ .— Համաշխարհային պատերազմը եւ Տարօնի աշխարհը (2)	47
Վ. ՄԻՆԱԿՈՐԵԱՆ .— Արհաւիրքի օրեր (2)	72
ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ .— Նիւթեր Շիրվանգադէի մասին	89
ԱՆՅԵԱԼՔ .— Կովիտաս, Բժ. Յ. Տէր-Միխայէլեան, Աթ. Խնկոյեան Յ. Խանգատեան, Դր. Յ. Երկանեան	100
ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ	108
ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ	112
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ .— Ն. Աղբալեան, Սվ. Ն. Բաղալեան	114
ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ՇԵՄՔԻՆ .— Խմբ.	124
ՅԱԻԵԼԻԱՆՍ .— Վ. Եպ. Մանկունի, Գեորգ Դ. եւ իր ժամանակը	177-192

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամբրիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս, Իտալիա՝
տարեկան 70 ֆրանք
Ֆրանսա եւ մնացեալ երկիրները, տարեկան՝ 60 ֆրանք
Ռումանիա, Բուլղարիա, Յունաստան Սիրիա, եւ
Պարսկաստան՝ , , 50 ֆրանք
ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ԻԻՐԱՔԱՆԶԻՐ ՏԱՐԻՈՅ 6 ԳԻՐՔԸ՝ 25 ՖՐ.
Հասցէ՝ Յամակների, դրամի, յօդածների եւ ուրիշ ամէն
տեսակ առաքումների համար .—

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)

Gérant: V. Hampartzoumian

« տանեայց եկեղեցւոյ ի Ռուսաստան յառաջ քան զընտրութիւն նո-
« րոյ կաթողիկոսի իբրեւ հակառակ կանոնաց եկեղեցւոյն, եւ մա-
« նաւանդ կաթողիկոսական իրաւանց, եւ զըրութիւնք ըստ այսմ
« յաճախեալք ի տեղիս տեղիս՝ (զորոյ զմիտմ պատճէնն հարկ հա-
« մարեմք առաքել ահա առ սրբազնութիւն ձեր) վշտացուցանեն ա-
« պաքէն զողջամիտան Ազգիս, մանաւանդ զուխտ Միաբանութեան
« Աթոռոյս:»

« Այլ թէ վասն է՞ր առաջարկութիւն խնդրոյն համարի անտեղի
« եւ տարադէպ, զայլ համարեմք բացատրել յաստէն համառօտիւ
« առ լուսաւոր դիտութիւն բարձու Սրբազնութեան ձերոյ եւ հոմայն
« Հայազնեայց հասարակութեան կողմանցդ:»

Շարունակեալ Սինոդի փաստաբանել ի պաշտպանութիւն Պալա-
ժէնիոյ՝ զրեւոյ, զի յառաջ իշխանութեան բարբառոսաց խանդա-
րեալ էին ամենայն կարգք եւ կանոնք, հեծէր վարչութիւն Էջմիած-
նի ընդ ծանր - ծանր պարտութեան վշտօք, յորոց ազատեցաւ չը-
նորհիւ բարեխնամ կառավարութեան ուսուց եւ հաստատութեան
կանոնադրութեան 1836 ամի, յաւելու ասել. « իբրեւ հրահանգ ուղիղ
« եւ անայլթաք զսրծախարութեան Հոգեւոր տեսչութեան՝ ձեռնառու
« գտաւ Աթոռոյն վերականգնել ի խաթարեալ դրութենէ անդի, նա
« կանոնաւորէ զչափ, զոսման իրաւանց եւ զօրծոց անձնիւր հո-
« գեւոր տեսչութեան... Այլ ոչ բնաւ դնէ խափան, որպէս կարծեն
« ամանք ընդ էութեան իրաւանց եւ արտօնութեանց կաթողիկոսաց,
« եթէ գիտիցեն սոքա վարել զգաւազան Հայրապետական իշխանու-
« քեան իւրեանց իրաւամբք եւ արդարութեամբք, եւ ոչ դոյզն ինչ
« զրժէ անկախութեան եկեղեցւոյն:»

Շարունակէ սինոդ զրեւ զողջես ի բերանոյ ուսական պետու-
« թեան. «Թերութիւնքն ինչ, որ բնականաբար զրեթէ կցորդ են
« ընդ նորահաստատ եւ անփորձ ձեռնարկութեանց ի վեր երեւեալք
« եւ ի կանոնադրութեան անդ, վերաբերին միայն արտաքին իրո-
« դութեանց հոգեւոր տեսչութեան եւ քաղաքական իրաւանց կղե-
« բաց եկեղեցւոյն եւ ոչ բնաւ կրօնական մասին. օրինակի ազազաւ
« բողոք ընդ ակնարկութեան Կալկաթարնակ հայոց ընդ դէմ յող-
« ուածոց ինչ, որ յաղաքս ստացուածոց կրօնակրօն հոգեւորակա-
« նաց եւ գոյից եւ ժառանգական իրաւանց նոցա առ այն:»

« Ի վերայ այսր ամենայնի՝ եւ քանզի ամենայն կարգ եւ օրէնք
« ենթադրին փոփոխութեան ընդ յեղափոխութեան եւ պայմանաց
« ժամանակի, ուստի եւ պետութիւն Ռուսիոյ ըստ մեծի շնորհաց եւ
« խնամոց իւրոց առ Ազգն եւ առ եկեղեցին Հայոց, ոչինչ զլացաւ
« եւ զայն իրաւունս, զի կաթողիկոսունք Ազգիս կարեցին բերել

« յուզողութիւն եւ ի լրութիւն աշնոցիկ թերութեանց, որք հակա-
« ռակ կային բնադիր կանոնաց եւ աւանդութեանց եկեղեցւոյն մե-
« ըոյ, բայց թէ անխոյժ դտան նորա ցայս վայր ժամանակ, զայ-
« նու կարեւոր իրօք դամա աւելի քան զքսան, ո՛րքաւ ի նմին յան-
« ցաւոր»:

« Յետ այսր ամենայնի՝ զինչ այլեւս կէտ նպատակի խնդրայոյզ
« արանցդ աշտոցունց, որք փոփոխութիւն կանոնադրութեան ցան-
« կան, եւ զի՞նչ յարաբերութիւն ընդ մէջ գործոյն ընարութեան
« Կաթողիկոսի եւ ընդ մէջ փոփոխութեան կանոնադրութեան,
« մինչդեռ երկու երեք տարբերք յերեքաց եւ ի միեւնոյն ժամանա-
« կի իրաւասութեան նոյն խի կաթողիկոսաց ենթակայ: Սինօդ
« զժողարանայ զիտել, այլ որպէս զօրէ իմաստասիրել, թուի իմն
« լինի զբոլոր թելադրութեան օտարոտի ազդեցութեանց եւ հայ-
« թայթանք ոմանց յազգայնոց մերոց, ըստ մեծի մասին յերկտա-
« սարդաց ամբաստանօրէն զինուորելոց ընդ զէմ բարեաց Աթոռոյս
« եւ պետութեան Ռուսիոյ, յորս կացին եւ վայելեցին նորա, եւ
« այն անտարակոյս ակնկալութեամբ անձնական օգտի»:

« Հաւատալ եւ հետեւել բանից նոցա, որոց շատացեալ թիւր
« եւ թոյլ հարեւանցի իմն ծանօթութեամբք զարտաքին միայն կա-
« ռապարութենէ մերմէ, անգիտակ են բնաւ հանգամանաց մերքին
« դրութեան Աթոռոյս գլխաւորութեան եւ զխնամոց Տէրութեան,
« առ նա, կարէ սերմանել զգթութիւն ի հեռարնակ հայազգիս
« մեր, վշտացուցանել զեռանդուն զգացմունս բարեմիտ հասարա-
« կութեան առ Աթոռն, նուազեցուցանել զնորիս խնամոց տէրու-
« քեան եւ յապաղել թերեւս գործ ընտրութեան Կաթողիկոսի յան-
« դարմանելի կորուստ բարեաց Աթոռոյս եւ ի կարի վնաս եկեղե-
« ցական վարչութեան մերոյ առհասարակ»:

« Իսկ պառակտել զհամազգային մեր զիա՞րդ մտաբերեցին յայն
« եւ ոմանք փոխադրութեամբ կաթողիկոսական ի Սիւս, նշանակէ
« խախտել բնաւ զբարոյական շարկապ Ազգին, որ ի սիւսուս աչ-
« խարհաց, կապտել զգարաւոր փառս յԱթոռոյս Սրբոյ Էջմիածնի,
« որ է միակ ապաստանարան յուսոյ Ազգիս եւ տեղի պարծանաց
« նորա»:

« Ըստ այսմ անտարակոյս եմք, Սրբազան Տէր, զի յոյզք խնդ-
« բոյն առաջի ողջամտաց Ազգիս, դատեսցի բնաւին անտեղ եւ տա-
« բապայման, եւ ինքեանք իսկ խնդրայոյզ հասու լեալ խորին կշռա-
« դատութեամբ, հեռատես զգուշութեամբ բանից մերոց՝ չըջեսցին
« ի նոյն, զօղեալք, լծորդեալք ընդ մեզ միախորհուրդ սիրով հա-

« մակրութեան առ ի շահ լրութեան Ազգիս եւ Աթոռոյս միանգա-
« մայն»:

« Այսու բարեմիտ զգացմամբք Սինօդն Սրբոյ Էջմիածնի
« վերստին հրաւիրէ զձեզ, Գերապատիւ Տէր, զի գուր իբրեւ նա-
« խանձաւոր փառաց եւ հաստատութեան Հայրապետական գահիս,
« փոյթ ի մէջ առնուցուք ամենահնարաւոր միջոցօք խափան դնել
« չարեացն, որ կարէ ստանալ Աթոռոյն եւ Ազգին յերկպառակին ի
« ներհակամիտ կարծիս՝ յայսմ համազգային իրի շրջելով զուշ
« նպատակի համայն հայազնէից մերոց, որք ընդ Ձերով տեսչու-
« թեամբ ի միաբանութիւն սիրոյ, եւ ի մտադիր եւ ի միակամ ըն-
« տրութիւն նորոյ Հայրապետի, նոյն իսկ կարգաւ որպէս բացա-
« տրեալ է ի յիշատակեալ առաջարկութեան Սինօդիս առ Ձեզ եւ
« առ կեդրոնական ազգային վարչութեան, վասն զի ի գալ հասանել
« այսր համայն պատգամաւորաց ի հեռաւոր վայրաց ըստ ժամա-
« դրութեան, ընտրութիւն Կաթողիկոսի ունի կայանալ անմիջապէս
« եւ առանց յետաձգութեան, որ յայնժամ համարիցի յանկարելեաց
« ստիկ, եւ անձն ընտրեալ բարձրմբ ներկայ պատգամաւորաց ծա-
« նիցի բոտ օրինի ընդհանուր Կաթողիկոս Ազգիս, եւ զայնմանէ,
« զոր ինչ հաճեսցի սրբալնութիւն ձեր տնօրինել ըստ այսմ կարե-
«ւորագոյն իրի, շնորհ արտացէ ծանօթս տալ Սինօդիս կարի փու-
« թով, հանդերձ հանդամանապատում բացատրութեամբ պարագա-
« յիցն, զծագրելոց ի պատճէնի նամակին՝ որ զոյգ ընդ սմին առա-
« քի»:

Յետ ասելոյ, զի նամակը պատճէնեալ եւ առաքեալ ընդ գրու-
թեան Սինօդի պատրաստեալ էր գողցես ի ռուսական դեսպանա-
տնէ Կ. Պոլսոյ, որպէս եւ գրութիւնդ Սինօդի սեւագրեալ պատ-
րաստեալ ի զիւանատանէ փոխարքայութեան Կովկասու, յաւե-
լումք համառօտեալ տակ նաեւ, զի պատասխանէր Տ. Պօղոս
արքեպ. Պատրիարք Կ. Պոլսոյ գրութեամբ որ ի 15-ն Յունիսի՝
առաքեալ միջոցաւ եւ գրութեամբ զլիաւոր կառավարութեան փո-
խարքայութեան յԳ-էն Օգոստոսի (1866) եւ ընդ նմին հաղորդէր Սի-
նօդի զծրագիր Յանձնաժողովոյ որ վասն կաթողիկոսական
խնդրոյ եւ վերաքննութեան Պալատէնիոյ (1836):

Արդ՝ եկեսցուք համառօտեալ գանցս վերաքննութեան Պօլօթե-
նիոյ (Պալատէնիա) որ աստ ի Կ. Պոլիս:

Որպէս ասացաք վերագոյն, զի առթիւ Կաթ. խնդրոյ եւ նորոյ
ընտրութեան՝ ստանձնեաց Երեսփ. Ընդհ. Ժողով Հայոց Կ. Պոլսոյ
(իմա՝ Թուրքիոյ) զինդիր վերաքննութեան կանոնադրութեան 1836

ամի, ուստի եւ կարգեաց զՅանձնաժողով յատուկ՝ բաղկացեալ յեօթանց անդամոց, որք են՝ Արիստագէս Եպս. (Երբեմն Առաջնորդ Անտրիանուպոլսոյ), Ներսէս Եպս. Վարժապետեան, Յովհաննէս Վարդապետ Սեթեան, Սարգիս Էֆ. Աղաբէգեան, Ստեփան Պէյ Արալանեան, Կարապետ Իւթիւճեան եւ Գրիգոր Մարկոսեան:

Յանձնաժողովն Կաթողիկոսական համաձայն որոշման եւ հրահանգաց Ընդհ. Ժողովոյ որ ի 24-ն Դեկտեմբերի 1865 ամի կազմեալ զմետան նիստս առ ի քննել եւ տեղեկագրել ա. զվիճակ Կաթողիկոսութեան Ս. Էջմիածնի, բ. գնեկայ եղանակ ընտրութեան կաթողիկոսի՝ համեմատեալ ընդ նախնի աւանդութեանց եւ սովորութեանց, օրինաց եւ կանոնաց Ազգի եւ Ս. Եկեղեցւոյ Հայաստանեայց եւ գ. որոշել զեղանակ մասնակցութեան Հայոց Տաճկաստանի ընտրութեան Կաթողիկոսի, ի 23-ն Ապրիլի (1866), սովորիչ եւ սատրաստէ զիրն տեղեկագիր յաշխարհիկ բարբառ եւ մատուցանէ Ազգ. Ընդհանուր Ժողովոյ Կեդրոնական Վարչութեան Հայոց Տաճկաստանի, եւ որպէս հաղորդէ Յանձնաժողովն, ալսու առթիւ՝ «ամէն բանէ յտաջ Ս. Էջմիածնի եւ Ռուսաստանի Հայոց մէջ «բաւական ժամանակ բնակող ու ալս մասին ներհուն ճանչցուած «Եկեղեցական եւ աշխարհական ազգայնոց դիմեց, եւ յանուն Ազգ. գին եւ ի սէր ճշմարտութեան տեղեկութիւն խնդրեց՝ փերսիչեալ «կէտերուն վրա» (Տեղեկ., Երես 3-4):

Խորագիր առաջին մասին Տեղեկագրոյ Կաթ. Յանձնաժողովոյ է. «Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան արդի վիճակը հետադաճ է նախկին, այսինքն՝ բուն Հայաստանեայց Կաթողիկոսական «վիճակէն՝ իրաւասութեան Հայրապետական անկախութեան եւ եւ «կեղեցեաց տեսութեան նկատմամբ»:

Եւ յաւելու ասել.

«Ըստ որում Ամենայն Հայոց Կաթողիկոսը գրկուած է ամեն «նայն Հայոց եկեղեցեաց եւ ամենայն Հոգեւոր Առաջնորդութեանց վրայ ունեցած օրինաւոր իրաւասութեան իշխանութենէն, «որը Առաքելական եւ Լուսաւորչական յաջորդութեամբ ի Հոգւոյն «Սրբոյ օծութենէ ընդունած է»:

«Ըստ որում չի կարող իր ստորագասեալ վիճակներուն հետ «սարս ու սլաւաշաճ հաղորդակցութիւնն ու յարաբերութիւնն ա. «դատօրէն գործադրել»:

«Ըստ որում չէ կարող անկախ ու զուտ հոգեւոր խորհրդական «ժողով մը ունենալ»:

«Վասն զի իրենն ու ստորագասեալ գործակից ժողովոյն իրա-

«Լանց սահմանները չփոխեալ են»: «Վասն զի չէ կարող ի Քրիստոսէ իր Հովուութեանն ու պատասխանատուութեան յանձնուած «Հօտին հոգեւոր Առաջնորդները ինքնին կարգել ու արձակել ըստ «լուսաւորչական եկեղեցւոյ կարգադրութեան»: «Վասն զի նոցա «վրա ունեցած անընդմիջական Հոգեւոր Իշխանութիւնը կամ բնաւ «չէ կարող կամ խիստ դժուարաւ կարող է գործադրել»:

«Վասն զի չէ կարող հոգեւոր հաստատութեանց յարատեւ պայ- «ծառութեան համար Ազգին դրամովը հաստատուն կալուածներ «գնել»:

«Ասոնք անցեալ երեսուն տարիներուն մէջ մինչեւ ներկայս «պատահած անցից ճշգրիտ պատմութիւններէն եւ Հայրապետա- «կան թղթակցութիւններէն եւ ահանատես արժանահաւատ եկեղե- «ցական եւ աշխարհական անձերէ ստուգուած են»...

«... Անցեալ դարուց մէջ ալ նմանօրինակ մէկ քանի դէպքեր «եթէ տեսնուին, գիտնալ պէտք է, որ Եկեղեցին զանոնք միշտ իբր «ապօրինաւորութիւն նկատած է: Սակայն երեսուն տարիներէ ի «վեր՝ արդի վիճակը օրինաւորութեան կերպարանք առած է զօրու- «թեամբ Պալատէնիա անուն նոր կարգադրութեան մը, որ մէկ քա- «նի եկեղեցւոյ կարգաց անհմուտ անձերու ձեռք առաջարկուած է «եւ խմբադրուած եւ որուն դէմ որչափ Երանաշնորհ Ներսէս եւ «Մատթէոս Կաթողիկոսունք եւ Հնդկաստանի ազգայինք բողո- «քած ալ են, ի վերայ այսր ամենայնի՝ ցայսօր տիրող օրէնք է «Ռուսաստանի մերազնէից եկեղեցւոյ, ըսել է՝ մեր եկեղեցւոյ վը- «րայ, այնպէս որ՝ ըստ վիճակութեան արժանահաւատ անձանց՝ մեր «Եկեղեցական վարչութեան մէջ ամենայն ինչ կ'վճռուի ըստ զօրու- «թեան յօդուածոց նոյն Պալատէնիայի, եւ դիմադարձութեան յան- «դրգնողը կ'զատապարտուի ոչ միայն մեր իսկ Առաջնորդական ա- «տեաններէն, այլ եւ ի Տէրութենէ, թէեւ, ինչպէս որ Տեղեկա- «գրքիս մէջ պիտի տեսնուի, անոր ինչ ինչ տրամադրութիւնները «զանազան պարագաներու մէջ ճշտիւ գործադրուած չեն»:

Տակաւին յառաջարան խորհրդածութեամբ իմն շարունակեալ Յանձնաժողովոյ զրանս իւր մինչեւ 6-րդ երես, հաւատայ եւ ինքն միամտաբար յորժամ ասէ. «1836 թուի Պալատէնիա անուն կարգա- «դրութեան վերայ երջանկայիշատակ Ներսէս եւ Մատթէոս սրբա- «զան Հայրապետք բողոք բառնալով՝ ջանք ըրին եւ յաջողեցան «Ռուսիոյ կառավարութեան ուշադրութիւնը գրաւելու, որ վերջա- «պէս հրաման շնորհեց Պալատէնիայի փոփոխութեան կարօտ կէ- «տեքն իրեն առաջարկել», որում կցէ եւ ծանօթութիւն զայս, թէ՛

« Երջանկայիշատակ Ներսէս Կաթողիկոսն, այս մասին որեւէ առա-
« ջարկութիւն ընելէ առաջ, խորհեցաւ Տանկաստան եւ ուրիշ եր-
« կիրներ բնակող ընդհանուր Հայոց խորհրդակցութեամբ դիմել,
« բայց արեւելեան պատերազմը վրայ գալով՝ իւր այս օրինաւոր եւ
« արդար խորհուրդն ի գործ դնելու արգելք եղաւ, եւ վերջն ալ
« իւր յանկարծահաս վախճանը բոլորովին ետ ձգեց զայն: Մատ-
« թէոս Սրբազանն ալ 1863-ին ծրագիր մը շինած ու առաջարկած
« է, բայց չի գիտցուիր ինչ պատճառաւ ընդհանուր Ազգին խորհրդ-
« դակցութեանը գիմելու օրինաւոր միջոցն ի գործ չդրաւ, ինչպէս
« որ իւր նախորդը խորհած էր», մինչ գործը իւր եւ արդիւնք ապա-
« ցուցանեն զհակառակն, որում բաւական էին միջոցքն 7-9 ամաց ի
1843 ամէ ց1851-8, յառաջ քան զպատերազմ արեւելեան (1851-56):

Մտանէ Յանձնաժողովն ի քննութեան յօդուածոց Պալատէնիոյ,
եւ առնու յուշադրութեան զ9-րդ, զ21-րդ, 28, 29, 32, 33, 34, 37,
40, 41, 42, 43, 45, 46, 57, 91 եւ զ118-րդ յօդուածս, առաջար-
կեալ զգործնական անցս եւ զապացոյցս ըստ Առաջին Մասի խնդրոյ
քննելեաց: Յորս են քննադատութիւնք ուշադրաւք եւ կենսականք,
որպիսիք են: (Դնեմք ասոցն յօդուածս Պալատէնիոյ, եւ ի ներքոյ
իւրաքանչիւրոց զգիտողութիւնս Յանձնաժողովոյ):

Յօդ. 9.- Եկեղեցիք Լուսաւորչական Հայոց Ռուսաստանեայց ի-
րաւունս ունին տիրելոյ անշարժ կայից, այլ սակայն ոչ այլազգ կա-
րին ի ձեռս բերել կամ օտարացուցանել զայնս (իմա վաճառել),
բայց եթէ քարձրագոյն քարեհանութեամբ կայսեր, որ խնդրի ի
ձեռն նախարարութեան ներքին գործոց ըստ սահմանեալ կարգին:

Դիտող.- Ահաւասիկ յայտնի կտեսնուի թէ որչափ հակառակ է
այս յօդուածը Եկեղեցւոյ ազատ իրաւանց. ո՞րչափ եկեղեցական
գումարներ ցրուելու կամ վատնուելու վտանգի մէջ կը մնան, քանի
որ քաղաքի մը ազգայինք իրենց առձեռն պատրաստ ստակովը չեն
կարող հաստատուն կալուած մը գնել, ինչպէս է Ախալցխայի ազ-
գային եկեղեցւոյ կալուածագնութեան խնդիրը, որուն կալուած գը-
նելու համար Հոգելոյս Մատթէոս Սրբազանի երեք տարի յառաջ կա-
ռավարութեան առաջարկութիւն ըրած եւ ցայսօր անպատասխանի
մնացած է:

Յօդ. 21.- Եւստուածային պաշտամունս ի մէջ եկեղեցեաց լու-
սաւորչական Հայոց անուն Պատրիարք Կաթողիկոսին յիշատակի
անմիջապէս զկնի կայսերն ամենայն ուսաց եւ օգոստոսփառ տան
նորա:

Մեր եկեղեցեաց կանոնաց համեմատ քրիստոնեայ թագաւորի

մ'անուն կարելի է յիշատակել, բայց ոչ բոլոր ընտանեաց անուննե-
րն ալ ի միասին, եւ այն ալ չէ թէ Ռուսաստանի Հայոց եկեղե-
ցեաց մէջ մտած օտար սովորութեան համեմատ Ս. Պատարագի մէջ
եւս առաւելի ժամանակ, վասն զի եւս առաւելն կենդանի Հայրապե-
տին եւ Առաջնորդներուն յիշատակութեան յատկացած ատենն է, եւ
շարունակութիւնն է պատարագիչ քահանայի ծածուկ կատարած
«Յիշեալ Տէր եւ ողորմեալ եւ օրհնեալ զուղղափառ Եպիսկոպոսունս,
որք ուղիղ վարդապետութեամբ համառօտեն ի մեզ զբանն ճշմար-
տութեան» աղօթքին, ուրտեղ բնաւ թագաւորի խօսք ընելու յարմա-
րութիւն չկայ: Այսպիսի յիշատակութիւն մը միայն «որ օրհնես զայ
նորիկ» աղօթքին եւ սարկաւազաց կարգացած քարոզներուն մէջ
կրնայ ըլլալ, այս ալ քահանայից եւ սարկաւազաց յիշատակութե-
նէն ետեւ:

Յօդ. 29.- Համաձայն կանոնաց Լուսաւորչական Եկեղեցւոյ Հա-
յոց՝ Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսն զհաստատուն բնակու-
թիւն իւր ունի ի վրաս Ս. Էջմիածնի: Յորժամ հարկաւոր համարի
Նա հեռանալ ի վանուց անտի աւելի քան զչորս ամիսս, հարցանէ առ
այս ի ձեռն գլխաւոր Կառավարչին Վրաստանի Կովկասեան եւ յայն-
կոյս Կովկասու եղեալ նահանգաց, եւ ի ձեռն նախարարութեան
ներքին գործոց, զբարձրագոյն հաճութիւն Նորին Կայսերական մե-
ծութեան:

Այս յօդուածը Կաթողիկոսական վեհութեան պատիւ չբերելու
կերպով տրամադրեալ ըլլալէն զատ՝ պակասաւոր ալ է: Վասն զի
բնաւ յիշատակութիւն չկայ որ եթէ հարկը պահանջէ, զօր օրինակ,
եթէ օտար երկրի մը մէջ ազգային կարեւոր գործոյ մը կամ տա-
րօրինակ դէպքի մը պատճառաւ Կաթողիկոսի ներկայութեան աղ-
ղեցութեան անհրաժեշտ պէտք ըլլայ, Հայրապետը պիտի կրնայ
ուսաց սահմանէն դուրս ելնել:

Յօդ. 32.- Ծանօթութիւն.- Պատրիարքն (Կաթողիկոս) իշխան
է անօրինել զսեփական գոյս իւր ըստ իւրում հաճութեան. եթէ զի-
ցէ արարեալ կտակ, գոյք նորա անցանին առ օրինաւոր ժառանգս
նորին. իսկ եթէ չիցեն նմա ժառանգք, այն կայք հաշուին ընդ գոյս
Լուսաւորչական Եկեղեցւոյ:

Այս տրամադրութիւնը բոլորովին հակառակ է Հայաստանեայց
Եկեղեցւոյ կանոնաց, որ միայնակեաց եկեղեցականաց ուրիշ ժա-
ռանգ չը ճանչնար, այլ Միաբանութիւնը, որուն անդամ են եւ վան-
քը, ուր պատասպարուած կը վարեն իրենց պաշտօնը:

Յօդ. 33.- Լուսաւորչական Հայոց Սիւնիստոսն Էջմիածնի՝ ընդ

նախադասութեամբ Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսին՝ բաղկանայ ի չորից արքեպիսկոպոսաց կամ յեպիսկոպոսաց, եւ նոյնաթիւ վարդապետաց, որք զհաստատուն բնակութիւն իւրեանց ունին յէջմիածին:

Այս յօդուածին մէջ այնպիսի ժողովի մը կարգադրութիւն կը տեսնուի որ սխալ է անուանուի, պակասաւոր է քուով, եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլորովին հակառակ է պաշտօնով:

Հայաստանեայց Լուսաւորչական Ս. Եկեղեցին Սիւնհոգոս բաւոր յատկացուցած է այն գերագոյն եւ ընդհանրական ազգային եկեղեցական ժողովին, որ Կաթողիկոսին հրաւիրմամբ կամ անոր խոտորմունքը ուղղելու համար (եթէ պատահի)՝ Հայրապետանոցի Միաբանութեան կամ Կաթողիկոսական խորհուրդին կոչելով կը դումարուի եկեղեցական ծանր խնդիրները քննելու եւ դանոնք համաձայն Սուրբ Գրոց եւ տիեզերական ժողովոյ օրէնսդրութեան լուծելու համար. ուստի սխալ է Սիւնոք բաւոր գործածել այնպիսի ժողով մը անուանելու համար, որ Կաթողիկոսի իշխանութեան ստորագրապետ է, եւ անոր միայն խորհրդական եւ գործակից ըլլալու իրաւունք ունի, եւ որ ըստ նախնի սովորութեան Եկեղեցւոյ՝ պէտք է բաղկանայ երկոտասան եպիսկոպոսներէ եւ ոչ չորս եպիսկոպոս եւ չորս վարդապետներէ ու մէկ աշխարհական պրօփուրօրէ, ինչպէս պիտի տեսնենք քիչ մը ետքը:

Յօդ. 34. Առ իւրաքանչիւր տեղի անդամոց Լուսաւորչական Հայոց Սիւնհոգոսին՝ Պատրիարքն ի ձեռն Գլխաւոր Կառավարչին Վրաստանի եւ ի ձեռն նախարարութեան ներքին գործոց՝ առաջի առնէ քաղաքի կայսեր գերկուս կանդիդատս:

Տարօրինակ տրամադրութիւն մըն է այս որ ընդունուեր է կարգադրութեան մէջ, թերեւս այն նպատակաւ որ ժողովոյ անդամներն իրենց ընտրութիւնը Թաղաւոր կայսրէն առնելով՝ անկախութեամբ վարուին եւ համարձակապէս ղեմադրեն կաթողիկոսական իրաւասութեան: Մեր ազգային եկեղեցւոյ կարգը կը սովորեցնէ որ Եկեղեցւոյ Սիւնոքը կամ ընդհանրական ժողովը Ազգին ընդհանրութեան ձայնովը Հայոց վիճակաւորներէն կը բաղկանայ: Իսկ Հայրապետանոցի ժողովը տասներկու եպիսկոպոսներէ պէտք է բաղկանայ՝ որք ընտրուին Ազգին զանազան երկիրներու մէջ ունեցած եկեղեցիներէն, եւ Հայրապետն անուանէ զանոնք:

35 եւ 36 յօդուածներուն մէջ Ս. Էջմիածնի Սիւնոքին ի մասին կառավարութեան (վարչական) 16, եւ դատաստանական մասին՝ 4 տրամադրութիւնք կը տեսնուին, որոց զօրութեամբը Ամենայն Հա-

յոց Կաթողիկոսն իր ամենաբարձր աստիճանաւ հանդերձ՝ ստորագրութիւն ղենել է Սիւնոքի վճռոյն կամայ աւամայ կնիք դարձնելէ զատ՝ ուրիշ իշխանութիւն չունի:

Յօդ. 37. Լուսաւորչական Հայոց Սիւնհոգոսն Էջմիածնի՝ ընդ անմիջական վերատեսչութեամբ (°) Ծայրագոյն Պատրիարքին՝ տայ զվախճանական վճիռ ամենայն գործոց վերաբերելոց առ վարդապետութիւնս հաւատոյ, առ եկեղեցական պաշտամունս, ծէսս եւ պըտակոս, եւ առ այն յանցաւորութիւնս եկեղեցականաց՝ որք ոչ պատկանին քննողութեան մարմնաւոր դատարանաց: Այս Սիւնհոգոս՝ ըստ գործոց Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց Ռուսաստանեայց՝ կայ ընդ վերատեսչութեամբ կառավարիչ Սինկղիտոսին (Սենաթին) եւ նախարարութեան ներքին գործոց, հաւասար այլոց ծայրագոյն հոգեւոր ատենից օտարազգի դաւանութեանց:

Ահա այս յօդուածին տրամադրութեամբը յայտնի կը տեսնուի որ Օրէնսդիրը չիփթիռ է Հայաստանեայց Եկեղեցւոյ ընդհանուր եկեղեցական Սիւնհոգոսին ու Հայրապետանոցի Կաթողիկոսական Խորհուրդին իրաւասութեան սահմանները եւ պաշտօնը: Առաջինին վերապահեալ «Տայ զվախճանական վճիռ ամենայն գործոց վերաբերելոց առ վարդապետութիւնս հաւատոյ (համաձայն բանի Ս. Գրոց եւ հետեւողութեամբ Տիեզերական Ժողովոյ Կաթողիկէ Եկեղեցւոյ պէտք էր աւելցունել), առ եկեղեցական պաշտամունս, ծէսս» եւայլն երկրորդին յատկացուեր է, եւ որ աւելի զարմանալին է, այս վերջինն այնպիսի բարձր պաշտօնով ճոխացնելէն ետեւ, բերէր ենթարկել է Ռուսիոյ տէրութեան Կառավարիչ Սինկղիտոսին եւ ներքին գործոց նախարարութեան, եւ իբր թէ արդարացնելու համար այս տարօրինակ կարգադրութիւնը, յաւելցուցեր է սա միւլթարիչ եւ միանգամայն շրջուցիչ պարբերութիւնը. «Հաւասար այլոց ծայրագոյն հոգեւոր Ատենից Օտարազգի դաւանութեանց» որոց կարգըն են նաեւ Հրէայք: Ուրեմն Ռուսիոյ նկատմամբ, մենք Հայաստանեայքս օտարազգի դաւանութեան տէր ենք, եւ մեր դաւանութեան հոգեւոր ծայրագոյն ատենը (որ ըստ մեզ չէ եւ չկրնար ըլլալ այն որ նա կը կարգադրէ) կայ ընդ վերատեսչութեամբ Սենաթի եւ Մինիսթրօյի ալլադաւան տէրութեան . . . Դարձեալ կըսենք՝ զարմանալի դրութիւն եւ տարօրինակ կարգադրութիւն:

Ըստ այսմ շարունակէ Յանձնաժողովն ըստ կարողութեան իւրում եւ ըմբռնման քննադատել պարզօրէն 440-1-2 եւ 43-րդ յօդուածը Պալատէնիոյ ըստ իրաւասութեանց եւ ձայնից Ս. Կաթողիկո-

սի եւ Սինօդի եւ սակս Տեղակալի ի բացակայութեան Կաթողիկոսի, առ կենդանութեամբ կամ յետ վախճանի, միով պարբերութեամբ տայ զհետագայ կարծիս իրաւացիս, թէ՛ «Այս յօդուածն» « ըով կը տեսնուի որ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ստորա- « դասեալ ազգային հոգեւոր ատեանը յամենայնի պարտաւոր է վա- « ռել համաձայն կարգաց եւ կանոնաց Ռուսիոյ Տէրութեան կօլէ- « ղիային (ատենին), եւ Ամենայն Հայոց Հայրապետն եւ Հոգեւոր « Տէրն Հայաստանեայց Եկեղեցւոյ նոյն ատեանին մէջ իբրեւ Ատե- « նապետ (ինչպէս նաեւ կը ստորագրէ սոյն բառով) երկու ձայն « ունի, երբ խնդրոյ մը վրայ անդամոց կէսը մէկ կերպ եւ միւս « կէսը մէկ կերպ վճիռ առաջարկեն: Իսկ երբ խնդրոյ մը վրայ ան- « դամոց մեծագոյն մասը միեւնոյն կարծիքը յայտնէ, Կաթողիկո- « սը պարտաւոր է զայն ընդունել եւ ստորագրել, թէեւ հակառակ « ըլլայ իր կարծեաց եւ թերեւս վնասակար Ազգին եւ Եկեղեցւոյ:

« Այս յօդուածոյ մէջ Պալատէնիան միայն մէկ շնորհ մը ըրած « է ընդհանուր Ազգին եւ Հայրապետին, այն է՝ «յամենայն պարզ « հոգեւորական գործս զձայն վճռական» անոր յատկացուցեր է 40 « յօդուածով: Բայց Հայրապետն այս շնորհը վայելելու համար կը « պարտաւորի այնպիսի պարզ Հոգեւորական խնդրոյ որոշման ժա- « մանակ՝ ժողովին մէջ անձամբ ներկայ գտնուիլ: ասպ թէ ոչ՝ 41 « յօդուածը կը տրամադրէ որ այն պարզ հոգեւորական գործոց « վճռական ձայնը՝ որ Կաթողիկոսին է, եւ որ ըստ 42 յօդուածոյ՝ « Կաթողիկոսական Աթոռոյ պարապօրէթեան ժամանակ՝ ոչ ոք ի- « բաւունք ունի գործածել, ժողովին կանցնի երբ Կաթողիկոսը կեն- « դանի է, բայց ժողովին ներկայ չգտնուի: այս պարագային մէջ « Կաթողիկոսն «հասու եղեալ եզրակացութեանց Սինհոդոսին յօ- « բագրութիւնս մատուցեալս նմա, տայ ըստ այնց զիւր վճիռ»: Ու- « չադրութեան եւ դարմացման արժանի չէ՞ն այս ըստ այնց բառե- « ըը, եւ իրաւունք չունինք կասկածելու, որ Պալատէնիան սոյն « տրամադրութիւններով կամք ըրեր է ընդհանուր Հայոց Հայրա- « պետին հոգեւորական իշխանութիւնը կասկածել, եւ զայն ենթար- « կելով Սինօդ անուն ժողովի մը, որ ըստ գործոց լուսաւորչական « եկեղեցւոյ Հայոց կայ ընդ վերատեսչութեամբ Ռուսիոյ Սեմաքիմ « եւ Մինիսթրոյին, Հայաստանեայց Եկեղեցւոյ անկախութիւնը « ջնջել»:

Հարկ համարեմք յաւելուլ դիտել աստ եւ զայս, զի եթէ չիցեն պակասութիւնք բառից կամ վրիպակք տպագրականք (յերես 13, տող 23-28), երեւի թիւրիմացութիւն ընդգէմ 41-րդ յօդուածոյ, որ

ասէ. «Ի քննութիւն իւրոց՝ յորս Պատրիարքն (իմա Կաթողիկոս) « էջմիածնի ունի զձայն վճռողական, չգտանի անձամբ ի Սինհոդո- « սի, այլ հասու եղեալ եզրակացութեանց Սինհոդոսին յօրագրու- « թիւնս մատուցեալս նմա, տայ ըստ անց զիւր վճիռ»: Գուցէ կա- « մէր ասել Յանձնաժողովն, զի ոչ էր հարկ թողուլ Սինօդի զգործս՝ « որ սեփական է վճռոյ եւ իշխանութեան Ս. Կաթողիկոսի ըստ պարզ « հոգեւորական գործոցս, մինչ բանն ի քննութեան իրաց վերաբերի « ոչ պարզ հոգեւորական գործոց, յորս են վէճք եւ տարաձայնու- « թիւնք ի մէջ անդամոց Սինօդի, զորս իբր չի թողու Կաթողիկոսն « զերծ յազդեցութեանց վիճել ընդ միմեանս եւ այնպէս կազմել զօ- « րագիր եւայն:

Ձանց արարեալ զնմամբք յօդուածովք որ զՊրովուրորէ եւ զպա- « խարակելի զիրաւասութեանցն, զորոց ունեմք ընդարձակել այլուր, « եւ թեթեւ իմն են զիտողութիւնք Յանձնաժողովոյ, տեսանեմք զհա- « մառօտ քննադատութիւն 57-րդ յօդուածոյ, որ վասն կարգելոյ զԱ- « ռաջնորդ թեմակալս ի վիճակս Հայոց Ռուսաստանեայց, զոր եւ « սկսանի այսպէս:

« Պալատէնիայի 4 գլուխը 17 յօդուածներով կը կարգադրէ Ռու- « սաստանի մէջ Հայոց Եկեղեցւոյ Առաջնորդական Թեմերը, եւ թե- « մակալ Առաջնորդաց ընտրութեան եղանակը, պարտաւորութիւն- « ներն ու Ս. էջմիածնի հետ ունեցած յարաբերութիւնները:

« Այս կարգադրութեան մէջ նշանաւոր կը հանդիսանայ Հա- « յաստանեայց Եկեղեցւոյ օրինաց եւ կարգաց ընդդիմամարտ հա- « կառակութեամբ՝ 57 յօդուածը:

« Յօդուած 57.- ԶԹեմակալ Առաջնորդս լուսաւորչական Հայոց « Եկեղեցւոյ ի Ռուսաստան նշանակէ (°) ԹԱԳԱԽՈՐ ԿԱՅՍՐՆ: Ի « մտանել նոցա ի պաշտօն երզնուն վասն հաւատարիմ հպատակու- « թեան եւ ծառայութեան»:

« Որով Ամենայն Հայոց Կաթողիկոսը զրկուած է Ռուսաստա- « նի Հայոց վիճակներուն Առաջնորդները կարգելու եւ արձակելու « իշխանութենէն, որ ուղղակի իրեն կը պատկանի: վասն զի Ամե- « նայն Հայոց ընդհանրական Կաթողիկոսը միանդամայն եւ Ծայրա- « գոյն Պատրիարք է, եւ գոնէ իբրեւ Պատրիարք ռուսիաբնակ Հայկա- « գանց, իրաւունք ունի Ռուսիոյ Հայոց Թեմակալ Առաջնորդները « կարգելու եւ արձակելու, ինչպէս Կոստանդնուպոլսոյ Պատրիարքը « կը կարգէ եւ կարձակէ Տաճկաստանի Հայոց Թեմակալ Առաջնորդ- « ները: Այս իրաւանց՝ մեր Սուրբ Եկեղեցւոյ օրէնքը միայն մէկ « չափաւորիչ պարագայ մը կընդունի, այն է՝ ժողովրդական ընտ-

« բուժիչն ու առաջարկութիւնը, որով Առաջնորդը կընծայի Պատ-
« րիարքի հաւանութեան եւ հաստատութեան. օտար անձն կամ իշ-
« խանութիւն բնաւ իրաւունք չունի Առաջնորդական ընտրութեանց
« միջամտութիւն ընելու եւ Եկեղեցին եւ միանգամայն անոր Գերա-
« դոյն Հովիւը՝ իրենց նուիրական իրաւունքէն՝ կապտելու: Ռուսիոյ
« Տէրութիւնը Ռուսաստանի Հայկազն Առաջնորդութեանց նկատ-
« մամբ՝ այնչափ միայն իրաւունք ունի, որչափ Օսմանեան Տէրու-
« թիւնը իր երկրին մէջ, այսինքն՝ ճանաչել ընտրուած Առաջնորդը,
« եւ անոր քաղաքական մասին պակասութեան մէջ գտնուած ժամա-
« նակ՝ փոփոխութիւնն առաջարկել Ծայրագոյն Պատրիարքին»:

Թողցուք այլեւս զմնացեալ յօդուածս ինչ եւ զգիտողութիւնս
Յանձնաժողովոյ որ ըստ Առաջին Մասի Տեղեկագրոյն, եւ անցուք ի
Մասն Բ., զոր սկսանի այսպէս.

« Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան արդի եղանակը
« ո՞րն է, եւ համաձայն է թէ չէ Ազգային Եկեղեցւոյ իրաւանց,
« օրինաց եւ սովորութեանց»:

« Զայս քննելու համար Յանձնաժողովը դարձեալ կը պարտա-
« տուի 1836-ի կարգադրութիւնը ձեռք առնուլ, անոր որոշած ընտ-
« րական տրամադրութիւնները տեսնել, ստուգել նաեւ թէ նոյն կար-
« դադրութեան հաստատութիւնը ըստ ոմանց «աղօթիւք եւ օրհնու-
« թեամբ» եւ ըստ այլոց «սրտմտութեամբ եւ յօշ կամաց» ընդու-
« նող Յովհաննէս Կարբեցի Կաթողիկոսէն սկսեալ՝ վերջին երեսուն
« (30) տարիներու մէջ իրարու յաջորդող Ներսէս եւ Մատթէոս եր-
« ջանկայիչատակ կաթողիկոսներ ինչպէ՞ս ընտրուեր են:

« Ա. Նախ Պալատէնիան կաթողիկոսական ընտրութիւնը ինն
« յօդուածոց մէջ պարունակեր է, 11-էն մինչեւ 19 ամբողջ, զոր
« աստ կօրինակենք.

« Յօդ. 11.- Ծայրագոյն Պատրիարքն էջմիածնի ընտրէ յողջոյն
« Ազգէ Լուսաւորչական Հայոց ըստ կարգին սահմանելոյ առ այս»:

« Յօդ. 12.- Ի դատարկանալ տեղոյ Ծայրագոյն Պատրիարք
« Կաթողիկոսին Ամենայն Հայոց, Լուսաւորչական Սիւնհոգոսն էջ-
« միածնի առաքէ զծանուցողական նամակս (իմա չըջաբերականս)
« յամենայն վիճակս լուսաւորչական Հայոց, որք են թէ Ռուսաո-
« տան, եւ թէ արտաքոյ սահմանից նորին, նաեւ նշանակէ գտարե-
« տը միջոց առ ընտրութիւն նորոյ Պատրիարքի:

« Յօդ. 13.- Իւրաքանչիւր վիճակ Լուսաւորչական Հայոց առ
« ընտրութիւն Պատրիարքի նշանակէ գերկուս պատգամաւորս՝ դէ-
« պաւտատ՝ զմի եկեղեցական, զմի աշխարհական: Պատգամաւորն

« եկեղեցական պարտի լինել կամ այն ինքն թեմակալ Առաջնորդն,
« կամ այլ ոք եկեղեցական նշանակեալ ի նմանէ, իսկ աշխարհական
« պատգամաւորն ընտրի յամենայն իշխանաւորաց, ի հարիւրապե-
« տաց, յիւզպաշեաց, ի մէլիքաց, եւ յայլոց պատուաւոր աշխար-
« հական անդամոց:

« Յօդ. 14.- Այսոքիք ընտրեալ պատգամաւորք եթէ չկարացին
« ներկայանալ անձամբ ի վանս էջմիածնի ցնչանակեալ ժամանակն
« վասն ընտրութեան Պատրիարքի, ունին իրաւունս յայտնել դրու-
« թեամբք զգտողութիւն իւրեանց՝ հասուցանելով զայն ի Սին-
« հոգոսն էջմիածնի:

« Յօդ. 15.- Բաց ի պատգամաւորաց (դէպուտատ) մասնակցին
« ընտրութեան Պատրիարքի ամենայն անդամք լուսաւորչական
« Հայոց Սիւնհոգոսին էջմիածնի, եւ եօթն երիցագոյն եպիսկո-
« պոսոսներ, որք յայնժամ գտանիցին էջմիածին. իսկ ի դիպուածս
« պակասութեան եպիսկոպոսաց, զայն թիւ ընուն երիցագոյն վար-
« դապետք տեղւոյն:

« Յօդ. 16.- Նոյն ընտրութիւնն յառաջանայ էջմիածին ի Մայր
« Եկեղեցւոյ եւայլն:

« Յօդ. 17.- Զկնի հաւաքման ձայնից բոլոր ժողովականացն եւ
« հասու լինելոյ դրաւոր դատողութեանցն հասելոց ի Սիւնհոգո-
« սին ըստ զօրութեան 14 յօդուածոյն, չորեքին աւագագոյնք ըստ ա-
« ռաւելութեան ձայնիցն տուելոց ի նպաստ իւրեանց ճանաչեն ու-
« նողք իրաւանց ընտրեալ լինելոյ ի Կանդիդատ (°). իսկ ի դիպուա-
« ծրս հաւասարութեան ձայնի, վիճակն որոշեսցէ, թէ ո՞ք պար-
« տին համարել աւագագոյնք. ի նոցունց բոլոր ժողովականք առ-
« նեն ընտրութիւն երկուց կանդիդատաց ի պաշտօն Ծայրագոյն
« Պատրիարքի:

« Յօդ. 18.- Զկնի այս ընտրութեան՝ ժողովն առաքէ զերիս
« պատգամաւորս յանդամոց իւրոց առ գլխաւոր կառավարիչն՝ Վը-
« րատանի, Կովկասեան եւ յայնկոյս Կովկասու եղեալ նահանգաց,
« որ յաղագս երկուց կանդիդատաց ընտրելոց առաջի առնէ Նորին
« Կայսերական Մեծութեան ի բարեհաճութիւն, ընդ ձեռն նախա-
« րարութեան ներքին գործոց:

« Յօդ. 19.- Թագաւոր Կայսրն նշանակեալ զԾայրագոյն Պատ-
« րիարքն էջմիածնի Կաթողիկոսն Հայկազանց՝ ամենաողորմաբար
« չնորհէ նմա զառանձին հրովարտակ վասն այսր աստիճանի եւ հը-
« բամայէ (°) զկնի երգնոյն լինել հաւատարիմ առ զհօն ամենայն

« ուսաց, կատարել զօժումն նորա ըստ վաղեմի ծիսի եւ սովորու-
« թեան Լուսաւորչական Եկեղեցւոյն Հայոց»:

Յետ այսր քննադատէ Յանձնաժողովն զյօդուածսը:

« Այս տրամադրութիւններէն յայտնի էր տեսնուի, ընդհանուր
« Հայոց Ազգը չի կարող ընտրել իր Հոգեւոր Տէրը, իր Եկեղեցւոյ
« Հովուապետն ու Հայրապետը, այլ նա միայն ընտրելիներ կը ցու-
« ցընէ եւ համայն Ազգին միայն 1)Տ մասին վրայ տիրող կառավա-
« րութեան վեհապետը՝ Ռուսաց Վեհափառ Կայսրը՝ կընտրէ զկա-
« թուղիկոսն Հայոց: Առաջին ապօրինաւորութիւն:

« Վերոյիշեալ ընտրելիները որոշելու համար Ազգին զանազան
« երկիրներու մէջ ունեցած Առաջնորդական վիճակներէն երկերկու
« պատգամաւոր կուգուի ընտրելեաց ընտրող ժողովին, որ պարտա-
« ւորեալ է գումարել Ս. Էջմիածնի Տաճարին մէջ Հանդուցեալ Հայ-
« րապետին մահուանէն տարի մը ետքը, ոչ աւելի կանուխ եւ ոչ
« ուշ: Երկրորդ անտեղութիւն:

« Յիշեալ պատգամաւորներուն մէկը եկեղեցական պիտի ըլլայ,
« միւսը աշխարհական. առաջինը կամ նոյն ինքն վիճակին Առաջ-
« նորդն է, կամ այլ ոք եկեղեցական նշանակեալ ի նմանէ միայնակ,
« մինչդեռ երկրորդին ընտրութեան՝ վիճակին բոլոր աշխարհական
« իշխանաւորները հաղիւ բաւական կը համարուին: Երրորդ ապօրի-
« նաւորութիւն:

« Սոյն պատգամաւորները կամ անձամբ պիտի երթան Էջմիա-
« ծին եւ կամ զրոյ պիտի զրկեն իրենց դատողութիւնը կամ քուէն
« (°), եւ զո՞ւ պիտի գտնեն անդ ընտրելեաց ընտրող ժողով կազմելու
« համար: Սինոդին բոլոր անդամները եւ եօթն երիցադոյն եպիս-
« կոպոսունք կամ վարդապետք, որոյ նոյն ժողովը կը բաղկանայ
« որչափ աշխարհականներէ, նոյնքան եւ 15 ալ աւելի եկեղեցական-
« ձեալ ընտրելի: Հինգերորդ ապօրինաւորութիւն»:

« Այս ժողովին մէջ ներկայ ժողովականք քուէարկութիւն կը-
« նեն, եւ բացակայից նամակաւ եկած քուէներուն հետ առնոց ալ
« քուէները միանայով քուէհամար կըլլայ, որով ամենէն չատ քը-
« ուէ ստացող առաջին չորս անունները ցուցակի մը մէջ կը նշա-
« նակուին, առանց ուշ դնելու թէ քուէից բացարձակ առաւելութիւն
« ստացող կա՞ մէջերնին թէ ոչ, անոնց ամենն ալ հաւասար իրա-
« ւամբ ճանաչեն ունողք իրաւանց ընտրեալ լինելոյ՝ - Ի՞նչ - դար-
« ձեալ ընտրելի: Հինգերորդ ապօրինաւորութիւն:

Փակագծեմք աստ. առ ի պարզել զթիւրիմացութիւն քուէնա-
մակի, զի չիք սովորութիւն ի Ս. Էջմիածնի առաքել զքուէս նամա-

կաւ կամ նամակօք ընտրութեան անդ Կաթուղիկոսի: Եթէ բացա-
կայք նշանակեցին զոմն ի տեղի իւրեանց ի ներկայացուցիչ եւ նա
մասնակցեաց ընտրական ժողովոյ, կարէ լինել քուէարկու կամ քը-
ուէտու: Բացակայք կարին պատուիրել ներկայացուցչի իւրեանց
տալ զքուէ որում կամին՝ յիշեալ յականէ յանուանէ: Կարին յաւե-
լուլ հրահանգել եւ զայս, զի ի հակառակ դէպս, հետեւեցին ձայ-
նից բազմութեան: Նաեւ տարբեր իմն է քուէարկութիւն Ս. Էջ-
միածնի, եւ բացայայտ, ոչ երբեք զաղտնի:

« Ահա այս չորս ընտրելիներուն մէջէն բոլոր ներկայ ժողովա-
« կանք (բացակայ գտնուողներուն խօսքը չկայ) ընտրութիւն կընեն
« երկու անձի (Ի՞նչ կերպով, այն ալ որոշ գրուած է), որ կը կոչ-
« ուին կաթուղիկոսական կանդիդատք, այսինքն ընտրելիք, եւ այս
« վերջին երկուքին մէջէն վ. կայսրը «բարեհաճութեամբ նշանակէ
« զԾայրագոյն Պատրիարքն Էջմիածնի, զԿաթուղիկոսն Հայկազանց,
« եւ ամենաողորմաբար չնորհէ նմա զառանձին հրովարտակ վասն
« այսր «ԱՍՏԻՃԱՆԻ» (Ռուսիոյ Կայսրը Հայոց Եկեղեցւոյ Հայրա-
« պետին Կաթուղիկոսութեան եկեղեցական աստիճանի հրովարտակ
« կուտայ), եւ հրամայէ զկնի երդնլոյ լինել հաւատարիմ առ դահն
« Ռուսաց, կատարել զօժումն Ծայրագոյն Պատրիարքին: Վերջին եւ
« ծայրագոյն ապօրինաւորութիւն:

« Բ. - Պալաթնիայի հաստատութիւնը, ինչպէս արդէն յիշե-
« ցինք, Կարբեցի Յովհաննէս Կաթուղիկոսի օրովն է, բայց Ս. Էջ-
« միածնի Ռուսաց տէրութեան ձեռքն անցնելը անոր Կաթուղիկոս
« ըլլալէն առաջ է. ուստի Կարբեցւոյն ալ Կաթուղիկոս ընտրուելու
« պարտականքը զիանալ անօգուտ է պատկառելի ժողովոյդ (Ընդհ. -
« Երեսի խանական)»:

Առանց մտածելոյ իր ստուգադոյն պատմութեան անցից հրաժա-
ման կամ հրաժարեցուցման Տ. Եփրեմայ Կաթուղիկոսի եւ խարդա-
ւանեալ ընտրութեան Յաջորդի նորա՝ պատրեալ եւ զՏեղակալ
Մարտիրոս Եպս., եւ այսպէս խորամանկութեամբ իմն կանխէ ուս
կատարութիւն մութիւնքով ի Հայս զգրութիւն կանդիդատական
կամ երկուց ընտրելեաց, յառաջ քան զհաստատութիւն Պալաթնիոյ
1836-ի -- Յանձնաժողովն հաւատայ միամտաբար զիւրադիտական
նահիւսութեանց Հրովարտակին Նիկողայու Կայսեր, զոր եւ ըստ
մասնիոյ ամփոփէ յիւրում տեղեկագրի (յերեսս 22-23):

Յետոյ որոյ համառօտէ զանցս ընտրութեանց Տ. Ներսիսի եւ Տ.
Մատթէոսի ի Կաթուղիկոս, եւ այնպէս իմն կարծէ Յանձնաժո-
ղովն, զի ընտրութիւնք երկուցունց Կաթուղիկոսաց լեալ իցեն հա-

կառակ կանգնեցողական զբուժեան եւ նոյն իսկ Պալատէնիոյ, մինչ-
դեռ յամենայն նուազի առաջարկեալ են երկուք ընտրելիք առ կայսրն
ուսաց, որ եւ զառաջին ընտրելին հաստատեալ է, որ ոչ բաւէ հա-
տատել զզանցառութիւն կանգնեցողական զբուժեան, այլ պարզէ յա-
ւէտ զգլխանադիտական բանս եւ զկեղծիս հրապուրիչս:
Առթիւ կաթ. ընտրութեան, որ յետ վախճանի Տ. Ներսիսի հա-
ղիւ ուրեմն սթափեալ Պատրիարքարանը Հայոց Կ. Պոլսոյ սակաւուք
(1857-8) յուզէ զերաւասական խնդիր զայս եւ եթ իբր բոսք գաւ-
կաւր: Յառաջ բերցուք զբանս Տեղեկադրոյ. «Ժամանակին Հոգեւոր
կաւր: Յառաջ բերցուք զբանս Տեղեկադրոյ. «Ժամանակին Հոգեւոր
« եւ Գերագոյն ըսուած Աղային ժողովներն այն զերեւը (իմա
« զթուղթն եւ զըջարեւականս Սինոդի Ս. Էջմիածնի առթիւ մահ-
« ուան Տ. Ներսիսի եւ հրաւիրանաց ուղղելոց ուրոյն ուրոյն առ
« իւրաքանչիւր թեմն Հայոց Թուրքիոյ առ ի գալ մասնակցել ըն-
« տրութեան նորոյ կաթողիկոսի համաձայն տրամադրութեանց
« Պալատէնիոյ) կարգաւոր՝ համաձայնութեամբ որոշեւ են գրել
« Ս. Էջմիածնայ Միաբանութեան (°), թէ իրենք Օսմանեան Տէրու-
« թեան հաստատած արտօնութեամբք Տափաւաւանի հաւորէն Հա-
« յոց Բէ' հոգեւորականաց եւ Բէ' աշխարհականաց ներկայացու-
« ցին ըլլալով՝ հարկ չկար բոլոր առաջնորդական թեմերէն դատ-
« զատ պատգամաւորներ խնդրելու, այլ պարզապէս Տաճկաստանի
« Եպիսկոպոսներէն հինգ ընտրելի ցուցնելով՝ անոնց մէջէն որն որ
« Կաթողիկոս ընտրուէր, Տաճկաստանի Հայոց ընդունելի եւ հա-
« ճոյ ըլլալով իմացնել: Իսկ Ս. Էջմիածին ըլլալիք վերջին ընտրու-
« թեան մէջ Տաճկաստանի Հայերը նե չկայացնելու եւ այն ժամա-
« նակի քառասուն եւ հինգ վիճակաց կողմանէ քուէ տալու համար՝
« յիշեալ Հոգեւոր եւ գերագոյն ժողովները գիր գրել են Կովկաս-
« եան փոխարքայի տեղակալ (°) հայազգի Վասիլ Բեհպուրովի
« քապետին եւ խնդրել են, որ կամ իր ազգապետական հրամանա-
« գրովը եւ կամ իր կողմանէ մէկը Ս. Էջմիածին խրկելով՝ իրենց
« ցուցրոցած հինգ ընտրելեաց մէկը՝ որն որ իրեն հաւնոյ (°...)
« բուի ընտրէ կամ ընտրել տայ: Բայց այս գիրը Տփլիս չի հա-
« սած Բեհպուրով կր վախճանի եւ գիրը կէս ճամբէն ետ կը դառ-
« նայ: Ասոր վրայ յիշեալ Հոգեւոր եւ Գերագոյն ժողովներն ուրիշ
« երկու Տփլիսեցի ազգայնոց (Կուրկենայէրով - Գուրգէնայէրով եւ
« Իսաք Թումանով) կը գրեն եւ Տաճկաստանի համօրէն Հայոց փո-
« խանորդ կը կարգեն, որք յաւատար իշխանութեամբ Ս. Էջմիա-
« ծին կերթան, եւ երկու Կաթողիկոսացուներու վերջնական ըն-
« տրութեանը մասնակից կ'ըլլան իւրաքանչիւրը քառասուն եւ հինգ
« կամ երկուքը մէկէն ինչպէս ինչպէս կամ քուէ ունենալով ի դիմաց



Բաժանորդ կարելի է գրել հետեւեալ տեղերը:-

- Ֆրանսա՝ Լ. Գեւորեան, 17, Rue Damesme, Paris.
Ն. Կակոսեան, 49, Rue Nationale, Marseille.
Յունաստան՝ «Նոր Օր», 20-A, Rue Vouli, Athènes.
Կիպրոս՝ Յ. Մահեսեան, Arasta St. No. 1, Nicosia.
Բուլղարիա՝ Գ. Հալաճեան, K. Haladjian, B. B. 444, Sofia.
Ռումանիա՝ Ե. Սարգսեան,
Typ "Astoria", 14, Str. Pictor Lichian, Bucarest.
Եգիպտոս՝ Գ. Միսիթարեան, խմբագր. «Յուսաբեր»-ի,
B. P. 868, Le Caire.
Եթովպիա՝ Յ. Գ. Պուրսաւեան, Hirna.
Պաղեստին, Վահան Կէտիկեան, Haret-el-Nasara. Jerusalem.
Սիրիա՝ Յ. Սիմոնի, B. P. 208, Alep.
,, Ս. Պոյաճեան, B. P. 321, Damas.
Իրաք՝ Մ. Սոսեան, South Gate Badaveen, 27-1, Bagdad.
Իրան՝ Խ. Մեղքումեան, Թաւրիզ:
,, Ա. Գէորգեան (Խուզիստանի ընդհ. գործակալ),
Թեհրան՝ Ար. Խոջայեան,
A. Khodjayan. Magasin «Khochnoud», Avenue Lalezar, Téhéran.
Սպահան - Զուլա՝ Թաղ. Թաղէոսեան
Հիւս. Ամերիկայի ընդհ. գործակալ՝ Յ. Կորոյեան,
H. Gopoian, 359 W. 28th St. New York, N. Y., (U. S. A.).
Հարաւ. Ամերիկա՝ Եղ. Խաչերեան, Canning 1245, Buenos-Aires


« Յ Ա Ռ Ա Զ »

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Խմբագիր՝ ՇԱԽԱՐՇ ՄԻՍԱԲԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	Տարեկան	Վեցամսեայ	Նոսամսեայ
Ֆրանսա եւ Գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆրանք
Սնգլիա, Եգիպտոս, Զիւցերիա, Իտալիա	250 ֆրանք	130 ֆրանք	
Ռուսիա երկիրներ	200 ֆրանք	100 ֆրանք	
Ամերիկա	200 ֆրանք	100 ֆրանք	

ՀԱՍՏԷ.— 17, Rue Damesme, Paris XIII



Imp. ARTISTIQUE, — 42, Rue de la Jonquière, PARIS (17^e)